



# Բ Ա Ն Բ Ե Ր

Արդարադատության ակադեմիայի

## BULLETIN

of Academy of Justice

## ВЕСТНИК

Академии юстиции





**ԲԱՆԲԵՐ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ**

**№ 1 (7), 2022**

**Հիմնադիր և հրատարակիչ՝ ՀՀ արդարադատության ակադեմիա:  
Հրատարակվում է ՀՀ արդարադատության ակադեմիայի  
գիտական խորհրդի երաշխավորությամբ:**

**Հանդեսն ընդգրկված է ՀՀ բարձրագույն որակավորման կոմիտեի սահմանած  
դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների և  
դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական  
հրատարակությունների ցուցակում:**

**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

**Գլխավոր խմբագիր՝**

**Առաքելյան Սերգեյ**

իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,  
ՀՀ արդարադատության ակադեմիայի ռեկտոր

**Գլխավոր խմբագրի տեղակալ՝**

**Ամյան Մարգարիտ**

ՀՀ արդարադատության ակադեմիայի պրոռեկտոր

**Խմբագրական խորհրդի քարտուղար՝**

**Գալստյան Անահիտ**

ՀՀ արդարադատության ակադեմիայի գիտահետազոտական և ծրագրամեթոդական  
աշխատանքների կազմակերպման բաժնի ղեկավար

**Խմբագրական խորհրդի անդամներ՝**

**Ավետիսյան Վահրամ**

իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Երևանի պետական համալսարանի  
քաղաքացիական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր

**Դիլբանդյան Սամվել**

իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Երևանի պետական համալսարանի  
քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի վարիչ



**Ենգիբարյան Վահե**

իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Երևանի պետական համալսարանի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի պրոֆեսոր

**Իսրայելյան Գևորգ**

իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,  
«Արդարադատության ակադեմիայի ռեկտորի խորհրդական»

**Խուրշուդյան Արտաշես**

սոցիոլոգիական գիտությունների թեկնածու, «Արդարադատության ակադեմիայի հեռաուսուցման և ՏՏ դեպարտամենտի ղեկավար»

**Հովհաննիսյան Հովհաննես**

փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ, Երևանի պետական համալսարանի փիլիսոփայության պատմության, տեսության և տրամաբանության ամբիոնի դոցենտ

**Հովհաննիսյան Վահե**

իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Երևանի պետական համալսարանի քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչ

**Ղազինյան Գագիկ**

«ԳԱԱ ակադեմիկոս, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի ղեկան»

**Մեղրյան Սերգեյ**

իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, Երևանի պետական համալսարանի քաղաքացիական դատավարության ամբիոնի դոցենտ,  
«Ազխավոր հարկադիր կատարող»

**Ստեփանյան Վահե**

իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Երևանի պետական համալսարանի եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի վարիչ

**Վաղարշյան Արթուր**

իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Երևանի պետական համալսարանի պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի պրոֆեսոր, «Սահմանադրական դատարանի դատավոր»

**Քեոյան Գարիկ**

քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Երևանի պետական համալսարանի քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի վարիչ

**Խմբագրական խորհրդի օտարերկրյա անդամներ՝**

**Գողունով Վալերի**

իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Բելառուսի պետական համալսարանի դատավորների, դատարանների, դատախազության և արդարադատության հաստատությունների աշխատակիցների վերապատրաստման և որակավորման բարձրագույն ինստիտուտի տնօրեն



### **Երշով Վալենտին**

իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, «Ռուսաստանի արդարադատության պետական համալսարան» բարձրագույն կրթության դաշնային կրթական հաստատության նախագահ

### **Կապինուս Օկսանա**

իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ռուսաստանի Դաշնության դատախազության համալսարանի ռեկտոր

### **Կոլենկո Եվգենի**

Ռեզերվատանի Հանրապետության գլխավոր դատախազության ակադեմիայի պետ

### **Նաուիկ Նատալյա**

իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, Կառավարման ուկրաինական դպրոցի տնօրեն

### **Սարկու Դիանա**

իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավոր (Մոլդովայի Հանրապետություն)

### **Օնիշուկ Նիկոլայ**

իրավաբանական գիտությունների դոկտոր, Ռուկրաինայի դատավորների ազգային դպրոցի ռեկտոր

ISSN 2579-2806

© Արդարադատության ակադեմիա, 2022





---

**BULLETIN OF ACADEMY OF JUSTICE**

**№ 1 (7), 2022**

**Founder and Publisher: Academy of Justice of Armenia.  
Recommended for publication by the Scientific Council  
of Academy of Justice of Armenia.**

**By the decision of the Supreme Certifying Committee of the Republic of Armenia, the Journal is included in the list of scientific publications provided for the publication of the main scientific results of dissertations for the degrees of Doctor and Candidate of Science**

**EDITORIAL BOARD**

**Chief Editor:**

**Arakelyan Sergey**

Doctor of Legal Sciences, Professor,  
Rector of the Academy of Justice of Armenia

**Deputy Editor-in-Chief:**

**Amyan Margarit**

Vice-Rector of the Academy of Justice  
of Armenia

**Secretary of the Editorial Board:**

**Galstyan Anahit**

Head of the Unit of Organization of Scientific Research and  
Programmatic-Methodological Activities of the Academy of Justice of Armenia

**Members of the Editorial Board:**

**Avetisyan Vahram**

Doctor of Legal Sciences, Professor, Professor of the Chair of Civil Law  
of the Yerevan State University

**Dilbandyan Samvel**

Doctor of Legal Sciences, Professor, Head of the Chair of Criminal Processing and  
Criminalistics of the Yerevan State University



**Engibaryan Vahe**

Doctor of Legal Sciences, Professor of the Chair  
of Criminal Processing and Criminalistics of the Yerevan State University

**Ghazinyan Gagik**

Full Member (Academician) of the National Academy of Sciences of the Republic of Armenia, Doctor  
of Legal Sciences, Professor, Dean of the Faculty of Law of the Yerevan State University

**Hovhannisyan Hovhannes**

Candidate of Philosophical Sciences, Associate Professor of the Chair of History,  
Theory of Philosophy and Logic of the Yerevan State University

**Hovhannisyan Vahe**

Doctor of Legal Sciences, Professor, Head of the Chair of Civil Procedure  
of the Yerevan State University

**Israyelyan Gevorg**

Candidate of Legal Sciences, Associate Professor,  
Advisor to the Rector of the Academy of Justice of Armenia

**Keryan Garik**

Doctor of Political Sciences, Professor, Head of the Chair of Political Institutions  
and Processes of the Yerevan State University

**Khurshudyan Artashes**

Candidate of Sociological Sciences, Head of the Distance Learning and  
IT Department of the Academy of Justice of Armenia

**Meghryan Sergey**

Candidate of Legal Sciences, Associate Professor of the Chair of Civil Procedure of the Yerevan  
State University, Chief Compulsory Enforcement Officer of the Republic of Armenia

**Stepanyan Vahe**

Doctor of Legal Sciences, Professor, Head of the Chair of European and  
International Law of the Yerevan State University

**Vagharshyan Artur**

Doctor of Legal Sciences, Professor of the Chair of History and Theory of State and Law of the  
Yerevan State University, Judge of the Constitutional Court of the Republic of Armenia

**Foreign Members of the Editorial Board:**

**Ershov Valentin**

Doctor of Legal Sciences, Professor, President of the Federal State Educational Institution of  
Higher Education "Russian State University of Justice"

---



---

**Godunov Valeriy**

Doctor of Legal Sciences, Professor, Director of Institute for Retraining and Qualification Upgrading of Judges, Prosecutors and Legal professionals at the Belarusian State University

**Kapinus Oksana**

Doctor of Legal Sciences, Professor, Rector of University of the Prosecutor's Office of the Russian Federation

**Kolenko Evgeniy**

Head of Academy of the Prosecutor General's Office of the Republic of Uzbekistan

**Naulik Natalia**

Candidate of Legal Sciences, Associate Professor, Director of the Ukrainian School of Management

**Onishchuk Mykola**

Doctor of Legal Sciences,  
Rector of National School of Judges of Ukraine

**Sărcu Diana**

Doctor of Legal Sciences, Professor,  
Judge of the European Court of Human Rights  
(the Republic of Moldova)

ISSN 2579-2806

© Academy of Justice, 2022



---

**ВЕСТНИК АКАДЕМИИ ЮСТИЦИИ**

**№ 1 (7), 2022**

**Учредитель и издатель – Академия юстиции Армении.  
Рекомендован для публикации Ученым советом Академии юстиции Армении.**

**Решением Высшей аттестационной комиссии Республики Армения (ВАК РА) журнал  
включен в Перечень научных изданий, предусмотренных для публикации  
основных научных результатов диссертаций на соискание  
ученых степеней доктора и кандидата наук.**

**РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ**

**Главный редактор:**

**Аракелян Сергей**

доктор юридических наук, профессор, ректор  
Академии юстиции Армении

**Заместитель главного редактора:**

**Амян Маргарит**

проректор Академии юстиции Армении

**Секретарь редакционной коллегии:**

**Галстян Анаит**

руководитель отдела организации научно-исследовательских  
и программно-методических работ  
Академии юстиции Армении

**Члены редакционной коллегии:**

**Аветисян Ваграм**

доктор юридических наук, профессор кафедры гражданского права  
Ереванского государственного университета

**Вагаршян Артур**

доктор юридических наук, профессор кафедры теории и истории государства и права  
Ереванского государственного университета, судья Конституционного суда РА



**Дилбандян Самвел**

доктор юридических наук, профессор, заведующий кафедрой уголовного процесса и криминалистики Ереванского государственного университета

**Енгибарян Ваге**

доктор юридических наук, профессор кафедры уголовного процесса и криминалистики Ереванского государственного университета

**Исраелян Геворг**

кандидат юридических наук, доцент, советник ректора Академии юстиции Армении

**Казинян Гагик**

академик Национальной академии наук Республики Армения, доктор юридических наук, профессор, декан факультета правоведения Ереванского государственного университета

**Керян Гарик**

доктор политических наук, профессор, заведующий кафедрой политических институтов и процессов Ереванского государственного университета

**Мегрян Сергей**

кандидат юридических наук, доцент кафедры гражданского процесса Ереванского государственного университета, Главный принудительный исполнитель РА

**Ованнисян Ваге**

доктор юридических наук, профессор, заведующий кафедрой гражданского процесса Ереванского государственного университета

**Ованнисян Ованнес**

кандидат философских наук, доцент, доцент кафедры истории, теории философии и логики Ереванского государственного университета

**Степанян Ваге**

доктор юридических наук, профессор, заведующий кафедрой европейского и международного права Ереванского государственного университета

**Хуршудян Арташес**

кандидат социологических наук, руководитель департамента дистанционного обучения и информационных технологий Академии юстиции Армении



---

**Иностранные члены редакционной коллегии:**

**Годунов Валерий**

доктор юридических наук, профессор, директор учреждения образования «Институт переподготовки и повышения квалификации судей, работников прокуратуры, судов и учреждений юстиции Белорусского государственного университета»

**Ершов Валентин**

доктор юридических наук, профессор, президент  
Федерального государственного образовательного учреждения высшего образования  
«Российский государственный университет правосудия»

**Капинус Оксана**

доктор юридических наук, профессор, ректор  
Университета прокуратуры Российской Федерации

**Коленко Евгений**

начальник Академии Генеральной прокуратуры  
Республики Узбекистан

**Наулик Наталья**

кандидат юридических наук, доцент,  
директор Украинской школы управления

**Онищук Николай**

доктор юридических наук,  
ректор Национальной школы судей Украины

**Сырку Диана**

доктор юридических наук, профессор,  
судья Европейского суда по правам человека  
(Республика Молдова)

ISSN 2579-2806

© Академия юстиции, 2022



**ԲՈՎԱՆԴԱՎՈՒԹՅՈՒՆ / CONTENT / СОДЕРЖАНИЕ**

**ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ** ..... 13  
**BY THE CHIEF EDITOR** ..... 14  
**ОТ ГЛАВНОГО РЕДАКТОРА** ..... 15

**ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ / PUBLIC LAW / ПУБЛИЧНОЕ ПРАВО**

**ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ**

ՄԱՐԴՈՒ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՀԱՄԱՉԱՓՈՒԹՅՈՒՆԸ  
 ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՏՈՒԿ ՌԵԺԻՄՆԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ..... 16

**ALEKSANYAN KRISTINE**

PROPORTIONALITY OF THE RESTRICTION OF CONSTITUTIONAL RIGHTS IN THE CONDITIONS OF  
 SPECIAL REGIMES ..... 16

**АЛЕКСАНЯН КРИСТИНЕ**

СОРАЗМЕРНОСТЬ ОГРАНИЧЕНИЯ КОНСТИТУЦИОННЫХ ПРАВ ЧЕЛОВЕКА В УСЛОВИЯХ  
 СПЕЦИАЛЬНЫХ РЕЖИМОВ УПРАВЛЕНИЯ ..... 16

**ՄՈՒՍԻՆ ԿԱՆԱՏ**

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ..... 27

**MUSIN KANAT**

CONSTITUTIONAL PRINCIPLES OF JUSTICE ..... 27

**МУСИН КАНАТ**

КОНСТИТУЦИОННЫЕ ПРИНЦИПЫ ПРАВОСУДИЯ ..... 27

**ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՆՈՐԻԿ**

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ..... 35

**SHAHNAZARYAN NORIK**

THE DEVELOPMENT TENDENCIES OF MODERN CONSTITUTIONS ..... 35

**ШАХНАЗАРЯН НОРИК**

ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ СОВРЕМЕННЫХ КОНСТИТУЦИЙ ..... 35

**ՊԵՏՐՈՍՅԱՆ ՎԱՐԴՈՒԿԻ**

ՄՈՌԱՅՎԱԾ ԼԻՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ՄԵԴԻԱՆ ..... 43

**PETROSYAN YARDUHI**

THE RIGHT TO BE FORGOTTEN AND MEDIA ..... 43

**ПЕТРОСЯН ВАРДУИ**

ПРАВО НА ЗАБВЕНИЕ И МЕДИА ..... 43

**ՄԱՍՆԱՎՈՐ ԻՐԱՎՈՒՆՔ / PRIVATE LAW / ЧАСТНОЕ ПРАВО**

**ՄԵԼՔՈՆՅԱՆ ՆՈՒՆԵ**

ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ՄՈՒՍՈՒԼՄԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԱՄՈՒՍՆԱԸՆՏԱՆԵԿԱՆ  
 ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ ..... 52



**MELKONYAN NUNE**

ON THE ISSUES OF LEGISLATIVE REGULATION OF FAMILY RELATIONS OF MUSLIM COMMUNITIES IN EUROPE.....52

**МЕЛКОНЯН НУНЕ**

К ВОПРОСУ О ЗАКОНОДАТЕЛЬНОМ РЕГУЛИРОВАНИИ СЕМЕЙНЫХ ОТНОШЕНИЙ МУСУЛЬМАНСКИХ ОБЩИН В ЕВРОПЕ.....52

**ՕՀԱՆՅԱՆ ԴԱՎԻԹ**

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ.....59

**OHANYAN DAVIT**

POLICE ACTIVITIES IN THE FIELD OF REAL ESTATE PROTECTION .....59

**ОГАНЯН ДАВИТ**

ФУНКЦИИ ПОЛИЦИИ В СФЕРЕ ЗАЩИТЫ НЕДВИЖИМОСТИ .....59

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ / CIVIL PROCEDURE / ГРАЖДАНСКОЕ СУДОПРОИЗВОДСТВО**

**ՍՏԵՓԱՆՅԱՆ ՄԱՐԻԱՆՆԱ**

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԲԱՐԵԽԴՃՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ..... 68

**STEPANYAN MARIANNA**

THE RIGHT TO EXERCISE CIVIL PROCEDURAL RIGHTS IN THE CONTEXT OF THE PRINCIPLE OF GOOD FAITH ..... 68

**СТЕПАНЯН МАРИАННА**

ПРАВО ОСУЩЕСТВЛЯТЬ ГРАЖДАНСКИЕ ПРОЦЕССУАЛЬНЫЕ ПРАВА В КОНТЕКСТЕ ПРИНЦИПА ДОБРОСОВЕЩНОСТИ..... 68

**ՕՐԲԱՆՆԵ ԱՋԵԼ ՆԱՊՍՈՒԳԱՐ ԱԳՆԵՍ**

ՆՅՈՒ-ՅՈՐԲՅԱՆ ԿՈՆՎԵՆՏԻԱՅԻ 12-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ ԱՋԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵԽԱՅԱԿԵՆՏՐՈՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎՐԱ ՀՈՒՆԳԱՐԻԱՅԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍՊՐՔՈՒՄ .....78

**ORBÁNNÉ SZÉL NAPSUGÁR ÁGNES**

THE IMPACT OF ARTICLE 12 OF THE NEW YORK CONVENTION ON THE DEVELOPMENT OF CHILD-CENTRED JUSTICE IN THE HUNGARIAN CIVIL PROCEDURE CODE.....78

**ՕՐԲԱՆՆԵ ՏՅԵԼ ՈՒՍՍՈՒԳԱՐ ԱԳՆԵՍ**

ВЛИЯНИЕ СТАТЬИ 12 НЬЮ-ЙОРКСКОЙ КОНВЕНЦИИ НА РАЗВИТИЕ ПРАВОСУДИЯ, ОРИЕНТИРОВАННОГО НА РЕБЕНКА, В ГРАЖДАНСКОМ ПРОЦЕССУАЛЬНОМ КОДЕКСЕ ВЕНГРИИ.....78

**ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ /CRIMINAL PROCEDURE / УГОЛОВНОЕ СУДОПРОИЗВОДСТВО**

**ՄԵԼԻՔՅԱՆ ԳԱՅԱՆԵ**

«ՄԻԱՅՆ ԱՅՆ ՀԱՆՑԱՆՔԻ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼԸ, ՈՐԸ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԲԱՎԱՐԱՐԵԼՈՒ ՀԻՄՔ Է ՀԱՆԴԻՍԱՑԵԼ» ՍԿԶԲՈՒՆՔԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ..... 89





**MELIKYAN GAYANE**

ESSENCE AND MAIN FEATURES OF THE PRINCIPLE OF «BRINGING TO RESPONSIBILITY ONLY FOR CRIME FOR WHICH EXTRADITION IS SATISFIED (THE PRINCIPLE OF SPECIALTY)» ..... 89

**МЕЛИКЯН ГАЯНЕ**

СУЩНОСТЬ И ОСНОВНЫЕ ОСОБЕННОСТИ ПРИНЦИПА «ПРИВЛЕЧЕНИЯ К ОТВЕТСТВЕННОСТИ ЛИШЬ ЗА ПРЕСТУПЛЕНИЕ, КОТОРОЕ ПОСЛУЖИЛО ОСНОВАНИЕМ ДЛЯ ВЫДАЧИ (ПРИНЦИПА СПЕЦИАЛИЗАЦИИ)»..... 89

**ԿՐԻՄԻՆԱԼՈԳԻԱ / CRIMINOLOGY / КРИМИНОЛОГИЯ**

**ԿՐԿՅԱՇԱՐՅԱՆ ԱՐՏԱԿ**

ՁԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԿԱՆՈՆԱԳՐՔԱՅԻՆ ՓՈԽՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ, ՈՐՈՆՑ ՀԻՄՔՈՒՄ ԸՆԿԱԾ Է ՁԻՆՎՈՐԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ..... 98

**KRKYASHARYAN ARTAK**

THE REASONS FOR VIOLATION OF THE STATUTORY RELATIONS BETWEEN MILITARY PERSONEL, WHICH ARE BASED ON THE MILITARY CHARACTER..... 98

**КРКЯШАРЯН АРТАК**

ПРИЧИНЫ НАРУШЕНИЯ УСТАВНЫХ ВЗАИМООТНОШЕНИЙ МЕЖДУ ВОЕННОСЛУЖАЩИМИ, В ОСНОВЕ КОТОРЫХ ЛЕЖИТ ВОЕННЫЙ ХАРАКТЕР..... 98

**ՄԻՄՈՆՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ**

ՓՈԽԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ.....110

**SIMONYAN ANDRANIK**

COORDINATION OF INTERACTION AT THE FRAME OF THE ORGANIZING THE PROCESS OF PREVENTING OF CRIMES .....110

**СИМОНЯН АНДРАНИК**

КООРДИНАЦИЯ ВЗАИМОДЕЙСТВИЯ ПРИ ОРГАНИЗАЦИИ ПРЕДУПРЕЖДЕНИЯ ПРЕСТУПЛЕНИЙ .....110

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ / INTERNATIONAL LAW / МЕЖДУНАРОДНОЕ ПРАВО**

**ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԳԵՎՈՐԳ**

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶՈՀԱՔԱՆԱԿԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ «ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՍԵՌԱԿԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԻՑ ԵՎ ՍԵՌԱԿԱՆ ԲՈՒՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ.....118

**ISRAYELYAN GEVORG**

THE MEASURES OF VICTIMOLOGICAL PREVENTION OF CRIMES FROM THE ASPECT OF REGULATIONS OF COUNCIL OF EUROPE CONVENTION FOR THE «PROTECTION OF CHILDREN FROM SEXUAL EXPLOITATION AND SEXUAL VIOLENCE» .....118

**ИСРАЕЛЯН ГЕВОРГ**

МЕРЫ ВИКТИМОЛОГИЧЕСКОГО ПРЕДУПРЕЖДЕНИЯ ПРЕСТУПЛЕНИЙ СОГЛАСНО ПОЛОЖЕНИЯМ КОНВЕНЦИИ СОВЕТА ЕВРОПЫ «О ЗАЩИТЕ ДЕТЕЙ ОТ СЕКСУАЛЬНОЙ ЭКСПЛУАТАЦИИ И СЕКСУАЛЬНОГО НАСИЛИЯ» .....118



## ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ

### **Հարգելի՛ ընթերցող.**

Ձեզ է ներկայացվում «Բանբեր Արդարադատության ակադեմիայի» գիտագործնական եռալեզու հանդեսի հերթական համարը, որում ամփոփված են հայ հեղինակների և Ակադեմիայի օտարերկրյա գործընկեր կառույցների ներկայացուցիչների ուսումնասիրությունների արդյունքները: Հանդեսը հրատարակվում է 2019 թվականից՝ յուրաքանչյուր անգամ առավել կատարելագործվելու և նոր նշաձողեր սահմանելու մղումով:

Հատկանշական է, որ այս տարի ևս «Բանբեր Արդարադատության ակադեմիայի» գիտագործնական հանդեսն ընդգրկվել է ՀՀ ԲՈԿ ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական հրատարակությունների ցուցակում:

Հանդեսի այս համարում տեղ գտած հոդվածներում քննության առարկա են դարձել միջազգային, հանրային և մասնավոր իրավունքի, քրեական և քաղաքացիական դատավարության, կրիմինալոգիայի ոլորտներին առնչվող բազմաթիվ առանցքային և խնդրահարույց հարցեր: Նշված ոլորտներում առկա մի շարք հարցերի ուսումնասիրության արդյունքում հոդվածագիրները կատարել են բազմաթիվ եզրահանգումներ, մշակել համապատասխան գործնական առաջարկություններ, որոնք հավակնում են օգտակար լինել մասնագիտական շրջանակներում և դառնալ նոր ուսումնասիրությունների առարկա:

«Բանբեր Արդարադատության ակադեմիայի» գիտագործնական հանդեսը այս տարիների ընթացքում ապացուցել է, որ կոչված է վեր հանելու իրավագիտության ոլորտի նոր հիմնախնդիրները և առաջադրելու կարգավորման նոր մեխանիզմներ: Լիահույս եմ՝ այն կշարունակի կատարել մասնագիտական կարծիքների և փորձի փոխանակման գիտական արժեքավոր հարթակի չափազանց պատասխանատու դերակատարությունը:

**Սերգեյ Առաքելյան**  
**Արդարադատության ակադեմիայի ռեկտոր**



---

## BY THE CHIEF EDITOR

*Dear Reader,*

The serial edition of the trilingual scientific-practical journal "Bulletin of the Academy of Justice" is presented to you, involving the results of the researches of both Armenian and the representatives from the Academy's foreign partner institutions. The journal has been published since 2019 with the stimulus to improve and set new standards.

It is noteworthy that this year also the scientific-practical journal "Bulletin of the Academy of Justice" was included in the list of periodical scientific publications, acceptable for publication of the main results and provisions of the dissertation of the Supreme Certifying Committee of the RA.

In the articles of this edition of the journal several key and problematic aspects in the spheres of international law, public and private law, criminal and civil procedure, criminology are examined.

As a result of the study of a number of issues in the mentioned areas, the authors made conclusions, developed relevant practical recommendations, which claim to be useful in professional circles and become the subject of new observations.

Throughout the years, the scientific-practical journal "Bulletin of the Academy of Justice" has proven it is called to raise new issues in the sphere of law and propose new regulation mechanisms. Hope it will continue to play its responsible role as a valuable scientific platform for the exchange of professional opinions and experiences.

***Sergey Arakelyan***

***Rector of the Academy of Justice***



## ОТ ГЛАВНОГО РЕДАКТОРА

### *Уважаемый читатель!*

Представляем Вашему вниманию очередной номер трехязычного научно-практического журнала «Вестник Академии юстиции», в котором собраны результаты исследований армянских авторов и представителей зарубежных партнеров Академии. Журнал публикуется с 2019 года, с каждым выпуском совершенствуясь и стремясь к установлению новых стандартов.

Примечательно, что и в этом году научно-практический журнал «Вестник Академии юстиции» включен в список периодических научных изданий, приемлемых для публикации основных результатов и положений диссертаций Высшего аттестационного комитета Республики Армения (ВАК РА).

В представленных в данном номере журнала статьях предметом исследований стали ключевые и актуальные вопросы в области международного, публичного и частного права, уголовного и гражданского процесса, криминологии. В результате изучения ряда вопросов в упомянутых выше сферах, авторы статей сделали множество заключений, разработали соответствующие практические рекомендации, которые могут быть полезны для специалистов соответствующих сфер и стать предметом новых исследований.

В течение последних лет научно-практический журнал «Вестник Академии юстиции» доказал, что призван выявлять новые проблемы в области правоведения и предлагать механизмы их урегулирования. Я полон надежд, что журнал и впредь будет полноценной научной платформой для обмена профессиональными мнениями и опытом.

*Сергей Аракелян*

*Ректор Академии юстиции*



**ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ / PUBLIC LAW / ПУБЛИЧНОЕ ПРАВО**



**ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ**

*Երևանի պետական համալսարանի  
սահմանադրական իրավունքի ամբիոնի ասպիրանտ*

**ALEKSANYAN KRISTINE**

*PhD student at the Yerevan State University  
Chair of Constitutional law*

**АЛЕКСАНЫЯ КРИСТИНЕ**

*аспирант кафедры конституционного права  
Ереванского государственного университета*

**ՄԱՐԴՈՒ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ  
ՀԱՄԱԶԱՓՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՏՈՒԿ ՌԵԺԻՄՆԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ\***

**PROPORTIONALITY OF THE RESTRICTION OF CONSTITUTIONAL RIGHTS IN THE  
CONDITIONS OF SPECIAL REGIMES\***

**СОРАЗМЕРНОСТЬ ОГРАНИЧЕНИЯ КОНСТИТУЦИОННЫХ ПРАВ ЧЕЛОВЕКА В УСЛОВИЯХ  
СПЕЦИАЛЬНЫХ РЕЖИМОВ УПРАВЛЕНИЯ\***

**1. Ներածություն:**

Վերջին մի քանի տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում հայտարարվեցին կառավարման երեք տեսակի հատուկ ռեժիմներ: Մասնավորապես, կորոնավիրուսային հիվանդությամբ պայմանավորված, նախ հայտարարվեց արտակարգ դրություն, ապա՝ համաճարակ: Ադրբեջանի Հանրապետության կողմից սկսված ռազմական գործողությունները պայմանավորեցին Երկրում ռազմական դրության հայտարարումը:

Կառավարման հատուկ ռեժիմները հզոր իրավաբանական գործիք են քաղաքացիների իրավունքների և ազատությունների սահմանափակման համար: Մարդու իրավունքների պաշտպանության խնդրով զբաղվող միջազգային կառույցները բազմիցս նշել են, որ մարդու իրավունքների ամենալուրջ խախտումները, որպես կանոն, տեղի են ունենում հենց արտակարգ դրության համատեքստում, և որ պետությունները կարող են հակված լինել արտակարգ դրության պատրվակով օգտագործել իրենց նահանջի իրավունքը այլ նպատակներով կամ ավելի մեծ չափով, քան դա արդարացված է իրավիճակի սրությամբ [7; 4, 13; 1, 17]: Այս համատեքստում կառավարման հատուկ ռեժիմների պայմաններում մարդու սահմանադրական իրավունքների սահմանափակման համաչափության հարցի ուսումնասիրության գիտագործնական նշանակությունը կասկած չի հարուցում:

\* Հոդվածը ներկայացվել է 23.06.2022, գրախոսվել է 13.07.2022, ընդունվել է տպագրության 01.08.2022:

\* The article was presented 23.06.2022, was reviewed 13.07.2022, was accepted to publication 01.08.2022.

\* Статья представлена 23.06.2022, рецензирована 13.07.2022, принята в печать 01.08.2022.



## **2. Հիմնական հետազոտություն:**

Կառավարման հատուկ ռեժիմների բավանդակության վերաբարյալ իրավաբանական գրականությունում առկա հիմնական մոտեցումների [1, 426-432, 440-443, 3; 8, 59-60, 60-62, 148-149, 4] ուսումնասիրության հիման վրա կարող ենք առանձնացնել դրանց հետևյալ հիմնական հատկանիշները՝

- վերջնական նպատակը կենսագործունեության բնականոն պայմանների վերականգնումն է.
- անմիջականորեն կապված է անձի իրավունքները սահմանափակող միջոցների ընդունման հետ, և այս առումով կառավարման հատուկ ռեժիմը կարելի է համարել «կոպիտ» իրավական ռեժիմ.
- քաղաքացիների իրավունքների և ազատությունների սահմանափակման նպատակի ակնհայտ պայմանավորվածությունը տվյալ միջոցի կիրառումն առաջացրած հանգամանքներով [2; 161].
- ենթադրում է գործադիր իշխանության մարմինների լիազորությունների ուժեղացում [7]:

Կառավարման հատուկ ռեժիմների նշված հիմնական հատկանիշները միայն այդ ռեժիմի պայմաններում համաչափության սկզբունքի պահպանման խիստ կարևորությունը չէ, որ պայմանավորում են: Կառավարման հատուկ ռեժիմի այս հիմնական հատկանիշները պայմանավորում են նաև համաչափության կիրառման առանձնահատկությունները, որոնք դրսևորվում են այս ռեժիմներն ապահովող միջոցառումների նախատեսման և կիրառման շրջանակներում:

Կառավարման հատուկ ռեժիմների շարքում կարևորագույն տեղ են զբաղեցնում արտակարգ և ռազմական դրության ռեժիմները՝ որպես քաղաքացիների առանձին իրավունքների և ազատությունների առավել խիստ ժամանակավոր սահմանափակում առաջացնող, ինչով էլ պայմանավորված է դրանց սահմանադրաիրավական կարգավորումը: Իրավունքների սահմանափակումների տեսանկյունից առավել մեղմ կառավարման հատուկ ռեժիմ է «ՀՀ-ում բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» օրենքով սահմանված կարանտինի իրավական ռեժիմը<sup>1</sup>, ինչպես նաև «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» օրենքով արտակարգ իրավիճակի հիմք հանդիսացող համաճարակով պայմանավորված կարանտինի իրավական ռեժիմը<sup>2</sup>:

Պետության և նրա ժողովրդավարական ինստիտուտների անվտանգությունը, ինչպես նաև նրա պաշտոնատար անձանց և բնակչության անվտանգությունը կենսական հասարակական և մասնավոր շահեր են, որոնք արժանի են պաշտպանության, եթե դա անհրաժեշտ է:

Պաշտպանության միջոցները կարող են նաև սահմանափակվել մարդու որոշակի իրավունքները և ազատությունները կամ հանգել դրան: Սա նաև ճանաչում գտավ մարդու իրավունքների հիմնական պայմանագրերում: Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ ՄԻԵԿ) 15-րդ հոդվածի համաձայն՝ Պայմանավորվող պետությունները կարող են «պատերազմի կամ այլ արտակարգ դրություն, որը սպառնում է ազգի կյանքին» շեղվել ՄԻԵԿ-ի իրենց պարտավորությունների մեծամասնությունից: Որոշ իրավունքներ, սակայն, 15-րդ հոդվածով հայտարարվել են անշեղելի [9, պարագրաֆ 62]: Սա կարևոր է, քանի որ պետությունների պրակտիկան

<sup>1</sup> Կարանտինի ռեժիմը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսվեց 2020 թվականի սեպտեմբերի 4-ին ընդունված «ՀՀ-ում բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-402-Ն օրենքով:

<sup>2</sup> Արտակարգ իրավիճակի հիմք հանդիսացող համաճարակով պայմանավորված կարանտինի իրավական ռեժիմը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսվեց 2020 թվականի սեպտեմբերի 4-ին ընդունված «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-403-Ն օրենքով:



ցույց է տալիս, որ (նաև) այդ իրավունքները կարող են լուրջ վտանգի տակ լինել հայտարարված արտակարգ դրության պայմաններում: Նմանատիպ դրույթ նախատեսված է նաև Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին միջազգային դաշնագրի (այսուհետ՝ ՔՔԻՄՄԴ) 4-րդ հոդվածում:

Սահմանադրության 76-րդ հոդվածը ևս սահմանում է, որ արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները կարող են օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես կասեցվել կամ լրացուցիչ սահմանափակումների ենթարկվել միայն այնքանով, որքանով դա պահանջում է իրավիճակը՝ արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ պարտավորություններից շեղվելու վերաբերյալ ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակներում: Մինևույն ժամանակ, նույն հոդվածը նախատեսում է բացարձակ և հարաբերական իրավունքների որոշակի ցանկ, որոնք չեն կարող կասեցվել կամ ենթարկվել լրացուցիչ սահմանափակումների<sup>1</sup>:

Ներկայումս կորոնավիրուսային հիվանդության տարածումը նոր մարտահրավերներ է ստեղծել հասարակության և մարդու իրավունքների պաշտպանության համար: Այսպես, այդ հիվանդության տարածման կանխումն անխուսափելիորեն հանգեցնում է մարդկանց որոշ իրավունքների սահմանափակմանը: Ավելին, Covid-19 համաճարակի դեմ պայքարը հանգեցրել է նրան, որ շատ երկրներ դիմել են արտակարգ լիազորությունների [10]: Այսպիսի պայմաններում իրավաբանական գրականության մեջ լայնորեն քննարկվող հարցերից մեկը հենց արտակարգ դրության՝ որպես կառավարման հատուկ ռեժիմի տեսակի հայտարարման անհրաժեշտության հարցի քննարկումն է:

Հեղինակների մի զգալի հատված գտնում է, որ կորոնավիրուսի համավարակը, լինելով մեր կողմից երբևէ տեսանելի երևույթներից ամենամոտը, որը օբյեկտիվորեն կարելի է դասակարգել որպես բացառիկ միջոցներ պահանջող, համապատասխանում է արտակարգ դրության չափանիշներին, որը իրական և անխուսափելի սպառնալիք է (կախված երկրից) բոլոր մարդկանց առողջության և կյանքի իրավունքի համար: Այս մոտեցումը պաշտպանող հեղինակների [6, 14] կողմից ներկայացված հիմնավորումները հանգում են հետևյալին.

- «Փաստարկը, որ ամեն ինչ կարող է և պետք է հարմարեցվի համաչափության չափանիշի միջոցով»՝ նահանջի միջոցները դարձնում են «մեռած տառ» և դրանով իսկ վերացնում է դրանց կարանտինային ազդեցությունը և մեծացնում է բացառիկ լիազորությունների նորմալացման հնարավորությունը» [6]: Այս վտանգի մասին նախազգուշացրել է նաև Վենետիկի հանձնաժողովը: Մասնավորապես, վերջինս նշել է, որ վարակիչ հիվանդությունների (կամ այլ արտակարգ իրավիճակների) մասին սովորական օրենսդրության ձևավորումն այնպիսի ճկուն ձևով, որ դրանում կարող են ներառվել բոլոր հնարավոր միջոցները, որոնք անհրաժեշտ են ներկայիս կորոնա-համավարակի (կամ սպառնալիքի) դեմ պայքարելու համար, կրում է երկարատև կամ նույնիսկ մշտական արտակարգ դրության առաջացման վտանգ [8]:
- Արտակարգ դրությունը, որպես մշտապես կիրառման ենթակա ռեժիմ ընկալելը խոչընդոտում է միջազգային արդյունավետ վերահսկողությանը: Մարդու իրավունքների միջազգային հիմնական պայմանագրերից նահանջելու դրույթները նախատեսված չեն եղել որպես «սովորական» ինքնիշխան օրենսդրությանը հակազդելու մեխանիզմներ: Միջազգային պարտավորություններից շեղվելու մասին տեղեկատվության հրապարակային բացահայտումն ու հաշվետվողականությունը նպաստում են պետություններին խրախուսելուն՝ ծանուցելու և բացատրելու

<sup>1</sup> Արժանապատվության իրավունք, կյանքի իրավունք, ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունք, օրենքի առջև ընդհանուր հավասարություն, խտրականության արգելք, կանանց և տղամարդկանց իրավահավասարություն և այլն:





բացառիկ կասեցումները, այլ ոչ թե փորձելու արտակարգ միջոցները ներառել սահմանափակումների կամ բացառությունների մասին ընդհանուր դրույթներում:

Այս տեսակետը կիսողներից Լ.Ռ. Հելֆերը, պաշտպանելով կորոնավիրուսային պանդեմիայի ներկայիս պայմաններում արտակարգ դրության հայտարարման և դրա միջոցների նկատմամբ միջազգային վերահսկողության անհրաժեշտությունը, միևնույն ժամանակ ընդունում է միջազգային վերահսկողության իրավական մեխանիզմների և միջոցների ոչ բավարար չափով արդյունավետ, որոշ դեպքերում հակասական և ուշացած լինելու մասին և ներկայացնում է առաջարկություններ դրանք արդյունավետ դարձնելու համար [14]:

Կիսելով նշված հեղինակների մտահոգությունները՝ մարդու սահմանադրական իրավունքների սահմանափակման համաչափության ապահովման անհրաժեշտությունով պայմանավորված մենք գտնում ենք, որ պետությունը պետք է խուսափի առաջին հերթին առավել խիստ, այդ թվում՝ արտակարգ դրության կառավարման հատուկ ռեժիմին դիմելուց, եթե ճգնաժամը հնարավոր է հաղթահարել առավել մեղմ կառավարման հատուկ ռեժիմի կիրառմամբ:

Մեր մոտեցումը, նախ պայմանավորված է նրանով, որ նահանջի ենթարկվող իրավունքների մեծամասնությունը բացարձակ չէ: Դիտարկենք ազատ տեղաշարժի իրավունքը, մեկն այն իրավունքներից, որն առավել հաճախ է կասեցվում՝ COVID-19-ի կանխման համատեքստում: Այդ իրավունքը «կարող է սահմանափակվել միայն օրենքին համապատասխան այնքանով, որքանով դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում հանցավորության կանխարգելման կամ ազգային անվտանգության, հասարակական անվտանգության, հասարակական կարգի, հասարակական բարոյականության, հասարակական առողջության կամ այլոց իրավունքների կամ ազատությունների պաշտպանության համար»: Լայն մեկնաբանության դեպքում այս դրույթն ապահովում է բավարար ճկունություն՝ սահմանելու կարանտիններ և լոքդաուններ պանդեմիայի ժամանակ: Այդպիսի դրույթների կիրառելիության վերաբերյալ տարբեր հայացքները կարող են բացատրել, թե ինչու են COVID-19-ի կողմից նույն սպառնալիքներին բախվող պետությունները նման ներքին հսկողության միջոցներ են ձեռնարկել, սակայն նահանջի նկատմամբ լայնորեն տարբեր մոտեցումներ են դրսևորել: ՄԻԵԿ-ի 5-րդ հոդվածը նաև նախատեսում է վարակիչ հիվանդությունների հետ կապված անձանց ազատությունից զրկելու ակնհայտ հիմք: Սահմանադրության 27-րդ հոդվածը թույլ է տալիս զրկել անձին անձնական ազատությունից հանրության համար վտանգավոր վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու համար: Այլ իրավունքներն ավելի ընդհանուր հիմքեր են պարունակում սահմանափակման համար, և Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հաշվի է առնում իրավունքների ծավալի մեկնաբանման համատեքստը [11]:

Արտակարգ դրության ժամանակ նահանջելու հնարավորությունը չի փոխարինում մարդու իրավունքների թույլատրելի սահմանափակումներին, և եթե պետությունները կարող են հասնել պետական քաղաքականության իրենց նպատակներին՝ չդիմելով նահանջի միջոցների, նրանք պետք է դա անեն [15]: Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովը, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովը գտել են, որ սովորական սահմանափակումները նախընտրելի են նահանջից՝ պնդելով. «նորմալ միջոցները կամ սահմանափակումները... հասարակական անվտանգության, առողջության և կարգի պահպանման համար պետք է հստակորեն անհամապատասխան լինեն, նախքան նահանջի, արտակարգ միջոցներ ձեռնարկելը [16; պարագրաֆ 4, 21; պարագրաֆ 96]:

Բացի այդ, արտակարգ դրության իրավական ռեժիմը, ուղղակիորեն կապված լինելով գործադիր իշխանության լիազորությունների ընդլայնման հետ, մարդու սահմանադրական իրավունքների սահմանափակման առավել լայն հնարավորություններ է ստեղծում: Այսպես, օրինակ, 1983 թ. Իրավաբանների միջազգային հանձնաժողովը համապարփակ վերլուծություն է իրակա-





նացրել ամբողջ աշխարհում արտակարգ դրության առնչությամբ [13]: Մանրամասն ուսումնասիրվել է 19 երկրների պրակտիկան, որոնք արտակարգ դրություն են վերապրել 1960-ականներին և 1970-ականներին<sup>1</sup>: Հանձնաժողովն ի սկզբանե առաջարկել է վարկած, որ արտակարգ դրության և մարդու իրավունքների լուրջ խախտումները, որպես կանոն, փոխկապակցված են [13; 1]: Դրանում նաև հստակ ձևակերպված է այն սկզբունքը, ըստ որի՝ շատ կառավարություններ ցանկացած մարտահրավեր դիտում են որպես իրենց իշխանությանն ուղղված «սպառնալիք», որի պայմաններում նահանջի դրույթների օգտագործումը դիտարկվում է անխուսափելի՝ ֆիզիկական անձանց պաշտպանության գոյություն ունեցող իրավական մեխանիզմի վերանայմամբ: Այլ կեպ ասած՝ համաչափության անվան տակ հաճախ գործնականում նկատի են ունեցվում սոսկ իշխանությունը որոշակի շեղումների գնով պահելու նկրտումները:

Վերջապես, համաչափության սկզբունքի պահպանումը, և ըստ այդմ, միայն որպես վերջին տարբերակ՝ արտակարգ դրության հայտարարումը բխում է հենց պետության շահերից: Ինչպես նշում է Գ. Դանիելյանը. «Արտակարգ դրությունն ինքնին անվերապահորեն նախընտրելի իրավական ռեժիմ չէ, քանզի այն, ի զորու չլինելով ամբողջովին լուծելու բոլոր խնդիրները, ուղեկցվում է ոչ միայն անձանց իրավունքների անխուսափելի սահմանափակմամբ, այլև բերում է ֆինանսատնտեսական անցանկալի հետևանքների և այլն: Այն կիրառվում է միայն ծայրահեղ դեպքերում, երբ առկա է սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վտանգ, ինչը հնարավոր չէ հաղթահարել այլ միջոցներով»: Այս համատեքստում պետության կողմից առավել խիստ կառավարման հատուկ ռեժիմի և որպես հետևանք նաև առավել խիստ սահմանափակումների կիրառումն անխուսափելիորեն հանգեցնելու է ծանր տնտեսական և սոցիալական հետևանքների:

Հարկ է նկատել նաև, որ հաճախ անգամ անհրաժեշտ սահմանափակումներն են թողնում զգալի սոցիալ-տնտեսական հետևանքներ: Այսպես, օրինակ՝ համաճարակի պայմաններում միանգամայն իրավաչափ էր դիտարկվում հեռավար ուսուցումը, հեռավար շփումները վարչարարության և սպասարկման ոլորտներում: Սակայն, երբ արդեն բավարար հիմքեր ստեղծվեցին այս սահմանափակումները հանելու համար, պարզվեց, որ մարդկանց մի հսկայական հատված այնքան էին ընտելացել հեռավար շփումներին, որ կամ մեծ դժվարությամբ էին վերադառնում սովորական ռեժիմ, կամ ընդհանրապես հրաժարվեցին իրենց աշխատանքից: Ի դեպ, այս երևույթը բնորոշ է ամբողջ աշխարհին, օրինակ ԱՄՆ-ում հեռավար շփումների դադարեցումից հետո ակնհայտ նկատվել է աշխատանքից ազատվելու դիմումների մեծ աճ [22] և այլն:

Ընդհանրացնելով վերոշարադրվածը, գտնում ենք, որ արտակարգ դրություն հայտարարելու համար անհրաժեշտ պայման պետք է լինի այն, որ սովորական օրենսդրությամբ նախատեսված լիազորությունները և սահմանափակումները ոչ միայն բավարար չեն արտակարգ իրավիճակը հաղթահարելու համար, այլև անխուսափելիորեն հանգեցնելու են իրավիճակի վատթարացմամբ թելադրված նաև մարդու իրավունքների օբյեկտիվ սահմանափակումների: Ըստ այդմ, Կառավարությունը յուրաքանչյուր դեպքում պետք է հիմնավորի, թե ինչու ներպետական օրենսդրությամբ նախատեսված ավելի մեղմ իրավական ռեժիմի սահմանմամբ հնարավոր չէ հաղթահարել ստեղծված ճգնաժամը: Ցանկացած կառավարման հատուկ ռեժիմի վերջնական նպատակը պետք է լինի այն, որ պետությունը հաղթահարի արտակարգ դրությունը և վերադառնա բնականոն իրավիճակին:

<sup>1</sup> Որպես օրինակ դիտարկվել են Արգենտինան, Կանադան, Կոլումբիան, Գանան, Հունաստանը, Հնդկաստանը, Մալայզիան, Հյուսիսային Իռլանդիան, Պերուն, Սիրիան, Թաիլանդը, Թուրքիան, Ուրուգվայը և Զաիրը: Բացի այդ, Արևելյան Եվրոպայի երկրներին նվիրված մեկ գլխում քննարկվում էր Խորհրդային Միության, Հունգարիայի, Չեխոսլովակիայի, Հարավսլավիայի և Լեհաստանի պրակտիկան:



Ասվածը բնականաբար չի նշանակում, որ պետությունը պետք է խուսափի առավել խիստ կառավարման հատուկ ռեժիմ՝ արտակարգ դրություն հայտարարելուց, եթե ստեղծված ճգնաժամի հաղթահարումը պահանջում է իրավունքների առավել խիստ սահմանափակումներ, այդ թվում՝ ամբողջությամբ կասեցումների և արգելքների տեսքով: Վենետիկի հանձնաժողովը, տարբերակելով դե յուրե և դե ֆակտո արտակարգ դրությունները, նշել է, որ պետք է խուսափել փաստացի արտակարգ դրությունից և պաշտոնապես հայտարարել արտակարգ դրություն [7; 30]:

Այն դեպքում, երբ համաչափության սկզբունքի հետևողական կիրառման արդյունքում, պետությունն ամեն դեպքում հանգում է նրան, որ ստեղծված ճգնաժամը հնարավոր է հաղթահարել միայն առավել խիստ կառավարման իրավական ռեժիմ՝ արտակարգ դրություն հայտարարելու միջոցով, ապա այս դեպքում համաչափության սկզբունքը պահանջում է, որ այն պետք է ունենա ժամանակավոր բնույթ: Ժամանակավոր բնույթի պայմանի համաձայն՝ արտակարգ միջոցները կարող են գործել միայն այն ժամանակ, երբ պետությունը բացառիկ իրավիճակ է զգում: Դրանք պետք է դադարեցվեն, երբ բացառիկ իրավիճակն ավարտվի: Հետևաբար, նրանք չպետք է ունենան մշտական հետևանքներ: Բոլոր այդ միջոցները պետք է համաչափ լինեն սպառնալիքին և նրա անմիջականությանը, չպետք է ավելի երկար տևեն, քան բուն սպառնալիքը, և պետք է կիրառվեն միայն այն տարածաշրջանների նկատմամբ, որոնցում առկա է դրանց անհրաժեշտությունը, որոնք տուժել են դրանից: Այս առումով համաչափության սկզբունքի պահպանումը ևս բխում է ոչ միայն մարդու սահմանադրական իրավունքների պաշտպանության, այլ նաև պետության կողմից իր գործառույթների անխափան իրականացման ապահովման անհրաժեշտությունից:

Այս համատեքստում համաչափության սկզբունքի խախտման թերևս ամենավառ օրինակը Հայաստանի Հանրապետությունում հայտարարված ռազմական դրության պահպանումն էր: Այսպես, թեև 2020 թվականի նոյեմբերի 9-ին ստորագրված եռակողմ հատարարությամբ ռազմական գործողությունները դադարեցվեցին, Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրությունը ոչ իրավաչափորեն շարունակվեց մինչև 2021 թվականի մարտի 24-ը, երբ Ազգային ժողովի որոշմամբ վերացվեց ՀՀ-ում ռազմական դրությունը: Արդյունքում ստեղծվել էր մի իրավիճակ, երբ ռազմական դրություն հայտարարելու հիմքով կասեցված վարչական վարույթները արհեստականորեն չէին կարող վերսկսվել, ինչն էլ հանգեցրել էր որոշ ոլորտներում վարչական մարմինների բնականոն գործունեության խաթարմանը:

Համաչափության սկզբունքին պետք է համապատասխանի ոչ միայն արտակարգ դրության հայտարարումը, այլ նաև արտակարգ միջոցները և հիմնական իրավունքներից և ազատություններից նահանջները և դրանց սահմանափակումները: Այլ կերպ ասած, նահանջները, սահմանափակումները և կասեցումները պետք է համաչափ լինեն արտակարգ դրությանը: Ընդ որում, նահանջներն ու կասեցումները թույլատրելի են միայն պատերազմի կամ ազգի կյանքին սպառնացող արտակարգ դրության դեպքում:

Կառավարման հատուկ ռեժիմների պայմաններում միջոցների համաչափության գնահատման համար կարևորում ենք դրանց նպատակի սահմանումը: Այս հարցի քննարկման անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ կառավարման իրավական ռեժիմների դեպքում մարդու սահմանադրական իրավունքները սահմանափակող կամ կասեցնող միջոցների նպատակն ունի երկակի բնույթ:

Նախ կառավարման հատուկ ռեժիմի պայմաններում սահմանվող սահմանափակումներն ու կասեցումները ուղղված են այն հանրային շահերի կամ այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանությանը, որոնց համար տվյալ արտակարգ դրությունը պայմանավորող իրավիճակը սպառնալիք է ստեղծել: Մյուս կողմից, ինչպես ընդգծում է Ք. Հեսսեն. «Յուրաքանչյուր բացառիկ միջոց միայն այն ժամանակ է թույլատրելի, երբ այն ծառայում է իրավիճակի վերա-



կանգնմանը (...) քանի որ դա անխուսափելի է բնականոն դրության վերականգնման համար» [5; 332]: Անդրադառնալով արտակարգ դրության ժամանակ կիրառվող արտակարգ միջոցների նպատակին, Վենետիկի հանձնաժողովը բազմիցս նշել է, որ դրանք ձեռնարկելու միակ օրինական նպատակը և օրինական հիմքը բացառիկ իրավիճակը հաղթահարելու գործում պետությանը ցուցաբերվող օգնությունն է, այսինքն՝ նահանջի գերակա նպատակը պետք է լինի նորմալ վիճակի վերականգնումը, որտեղ կարող է կրկին ապահովվել մարդու իրավունքների լիակատար հարգանքը [8]: Այս բացառիկ իրավիճակի բնույթը, լրջությունն ու տևողությունը որոշում են այն միջոցների տեսակը, մասշտաբները և տևողությունը, որոնց պետությունը կարող է օրինական կերպով դիմել:

«Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային պակտի դրույթներից սահմանափակումների և շեղումների մեկնաբանման Սիրակուզյան սկզբունքներում» տրված պարզաբանումներում հստակ նշվում է, որ «... Սահմանադրությունը կասեցվում է առանձին հատվածներում, որպեսզի կարողանա վերականգնել դրա անսահմանափակ գործողությունը»: Նույն ձևով ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեն բազմիցս նշել է, որ նահանջող միջոցների հիմնական նպատակը պետք է լինի նորմալ վիճակի վերականգնումը, որտեղ հնարավոր կլինի կրկին ապահովել ՔՔԻՄՄԴ-ին լիարժեք համապատասխանությունը [20; 2-րդ կետի «բ» ենթակետ, 21; 1-ին կետ]:

Ելնելով վերոշարադրվածից՝ կարող ենք եզրակացնել, որ ի տարբերություն սովորական միջոցների, կառավարման հատուկ ռեժիմների ժամանակ սահմանվող լրացուցիչ սահմանափակումների ու նահանջների նպատակը երկակի նշանակություն ունի՝ եթե այդ միջոցների միջանկյալ նպատակը այն հանրային շահերի կամ այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանությունն է, որոնց համար տվյալ կառավարման հատուկ ռեժիմը պայմանավորող իրավիճակը սպառնալիք է ստեղծել, ապա դրանց վերջնական և գերակա նպատակը բնականոն վիճակի վերականգնումն է: Ուստի արտակարգ դրության ժամանակ սահմանված ցանկացած միջոցի համաչափությունը (պիտանիության, անհրաժեշտության և համարժեքության) գնահատումը պետք է կատարվի ոչ միայն հանրային շահերի կամ այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության, այլ նաև ստեղծված ճգնաժամը հաղթահարելու ունակության տեսանկյունից:

Համաչափ պետք է լինի նաև կառավարման հատուկ ռեժիմների ապահովմանն ուղղված միջոցների կիրառումը: Համաչափության սկզբունքի տարրերի՝ լեգիտիմ նպատակի, պիտանիության, անհրաժեշտության և համարժեքության պահանջների բովանդակությանն ու կիրառման առանձնահատկություններին արդեն իսկ անդրադարձել ենք նախորդ աշխատանքների շրջանակներում: Առանձին քննարկման առարկա է ուժի և հատուկ միջոցների կիրառման համաչափությունը, որին կանդրադառնանք առաձին աշխատանքի շրջանակներում:

### **3. Եզրակացություն:**

Ամփոփելով աշխատանքը՝ ցանկանում ենք առանձնացնել հետևյալ հիմնական եզրահանգումները.

- Մարդու սահմանադրական իրավունքների սահմանափակման համաչափության ապահովման անհրաժեշտությունով պայմանավորված պետությունը պետք է խուսափի առաջին հերթին առավել խիստ, այդ թվում՝ արտակարգ դրության կառավարման հատուկ ռեժիմին դիմելուց, եթե ճգնաժամը հնարավոր է հաղթահարել առավել մեղմ կառավարման հատուկ ռեժիմի կիրառմամբ: Ընդ որում, «հաղթահարել» եզրույթի տակ չպետք է հասկանալ ամբողջությամբ բոլոր բացասական դրսևորումները բացառելը, քանզի հարկ է նաև չդիմել առավել խիստ միջոցների, եթե հնարավոր բացասական դրսևորումները այնչափ զգալի չեն, որ սոսկ դրանք բացառելու համար հարկ լինի դիմել էլ ավելի բացասական հետևանքների հանգեցնող

միջոցների: Այլ կերպ ասած՝ հարկ է հավասարակշռել իրավիճակը, հետևանքները և միջոցները: Արտակարգ դրություն հայտարարելու համար անհրաժեշտ պայման պետք է լինի այն, որ սովորական օրենսդրությամբ նախատեսված լիազորությունները և սահմանափակումները բավարար չեն արտակարգ իրավիճակը՝ վերը շարադրված իմաստով հաղթահարելու համար: Ըստ այդմ՝ Կառավարությունը յուրաքանչյուր դեպքում պետք է հիմնավորի, թե ինչու ներպետական օրենսդրությամբ նախատեսված ավելի մեղմ իրավական ռեժիմի սահմանմամբ հնարավոր չէ հաղթահարել ստեղծված ճգնաժամը:

- Ցանկացած կառավարման հատուկ ռեժիմ պետք է ունենա ժամանակավոր բնույթ. Կառավարման հատուկ ռեժիմը չի կարող գործել ավելի երկար, քան այն պայմանավորող իրավիճակը: Արտակարգ դրությունը կարող է երկարաձգվել միայն մշտական մտորումների գործընթացի հիման վրա, որը պետք է ենթադրի ոչ միայն արտակարգ դրության, այնպես էլ է արտակարգ միջոցառումների անհրաժեշտության մշտական վերանայում: Կառավարությունը պետք է պարբերաբար վերանայի ինչպես արտակարգ դրության, այնպես էլ առանձին արտակարգ միջոցառումների անհրաժեշտությունը՝ ապահովելու դրանց համաչափությունը թե՛ ժամանակային և թե՛ տարածքային առումներով:
- Ի տարբերություն սովորական միջոցների, կառավարման հատուկ ռեժիմների ժամանակ սահմանվող լրացուցիչ սահմանափակումների ու նահանջների նպատակը կրում է երկակի բնույթ, որը կայանում է նրանում, որ եթե այդ միջոցների միջանկյալ նպատակը այն հանրային շահերի կամ այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանությունն է, որոնց համար տվյալ կառավարման հատուկ ռեժիմը պայմանավորող իրավիճակը սպառանալիք է ստեղծել, ապա դրանց վերջնական և գերակա նպատակը նորմալ վիճակի վերականգնումն է: Ուստի արտակարգ դրության ժամանակ սահմանված ցանկացած միջոցի համաչափությունը (պիտանիության, անհրաժեշտության և համարժեքության) գնահատումը պետք է կատարվի ոչ միայն հանրային շահերի կամ այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության, այլ նաև ստեղծված ճգնաժամը հաղթահարելու ունակության տեսանկյունից:
- Մարդու իրավունքների սահմանափակման համաչափությունը ոչ միայն ապահովում է այդ իրավունքների պաշտպանությունը, այլ նաև բխում է հենց պետության շահերից: Այս առումով, համաչափության սկզբունքի պահպանումն ապահովում է վարչական մարմինների բնականոն գործունեությունն ու վարչական ռեսուրսների արդյունավետ օգտագործումը, այն նաև անհարկի չի հանգեցնում արտակարգ ռեժիմից բնականոն ռեժիմի վերադառնալու գործոնով թելադրված հոգեբանական բարդոյթների ի հայտ գալուն:

Կարծում ենք, որ նշված եզրահանգումները, ապահովելով մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանությունը, կարող են ծառայել նաև կառավարման հատուկ ռեժիմների պայմաններում առավել հիմնավորված և ծախսարդյունավետ որոշումների կայացմանը:

### Գրականության ցանկ / Bibliography / Библиографический список

1. Бахрах Д.Н., Россинский Б.В., Стариков Ю.Н., Административное право Российской Федерации: Учебник для вузов. М.: Норма. 2004. – 798 с.
2. Пчелинцев С.В., Ограничения прав и свобод граждан в условиях особых правовых режимов: методология, теория, практика: дис. ... д-ра юрид. наук. – М., 2006. – 548 с.
3. Рушайло В.Б., Специальные административно- правовые режимы в Российской Федерации. дисс... докт. юрид. наук. М.: РАГС. 2004. – 347 с.
4. Тихомиров С.В. Административное право Российской Федерации: Учебное пособие. М.: Юрлитинформ. 2003. – 299 с.



5. Хессе К. Основы конституционного права ФРГ. М.: Юрид. лит. 1981, 368 с.
6. Alan Greene, States Should Declare a State of Emergency Using Article 15 ECHR to Confront the Coronavirus Pandemic, STRASBOURG OBSERVERS (Apr. 1, 2020), <https://strasbourgobservers.com/2020/04/01/states-should-declare-a-state-of-emergency-using-article-15-echr-to-confront-the-coronavirus-pandemic/> (Վերջին մուտք՝ 16.05.2022).
7. CDL-STD(1995)012, European Commission for Democracy through Law, Emergency powers, Collection Science and technique of democracy No. 12 (1995), p. 33, [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-STD\(1995\)012-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-STD(1995)012-e) (Վերջին մուտք՝ 15.05.2022).
8. CDL-AD(2016)037, Turkey - Opinion on Emergency Decree Laws N°s 667-676 adopted following the failed coup of 15 July 2016, adopted by the Venice Commission at its 109th Plenary Session, 9-10 December 2016, p. 49, [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2016\)037-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2016)037-e) (Վերջին մուտք՝ 15.05.2022).
9. ECtHR judgement of 18 December 1996, Aksoy v. Turkey.
10. French Conseil d'Etat to the Prime minister and to the Minister of Health in respect of the extent of the emergency measures: <https://www.conseil-etat.fr/ressources/decisions-contentieuses/dernieres-decisions-importantes/conseil-d-etat-22-mars2020-demande-de-confinement-total> (Վերջին մուտք՝ 16.05.2022).
11. Hassan v. the United Kingdom, 16 September 2014 (Grand Chamber).
12. Human rights and the functioning of the democratic institutions in emergency situations, Collection Science and technique of democracy No. 17 (1996), p. 182.
13. International Commission of Jurists, States of Emergency: Their Impact on Human Rights (Geneva: International Commission of Jurists, 1983), p. 477.
14. Laurence R. Helfer, Rethinking Derogations from Human Rights Treaties 115(1) American Journal of International Law, pp. 20-40 (2021), <https://www.cambridge.org/core/journals/american-journal-of-international-law/article/rethinking-derogations-from-human-rights-treaties/9B1B3B3B304C7045C9F03FB9250D30B9> (Վերջին մուտք՝ 14.05.2022).
15. Lebret, A., COVID-19 pandemic and derogation to human rights. Oxford Academic. Journal of Law and the Biosciences, (2020), p. 15, <https://academic.oup.com/jlb/article/7/1/ljaa015/5828398> (Վերջին մուտք՝ 14.05.2022).
16. Parliamentary Assembly, Council of Eur., Res. 2209 (2018): State of Emergency – Proportionality Issues Concerning Derogations Under Article 15 of the ECHR, (Apr. 24, 2018), <https://pace.coe.int/pdf/11f1a5a8ddc8a2f47bb47437c5f27524e154ed3206f0804538a93783c1b4d3f6/resolution%202209.pdf> (Վերջին մուտք՝ 16.05.2022).
17. The 1955 report of the UN Special Rapporteur on States of Emergency and Human Rights, E/CN.4.Sub.2/1955/20, p. 11.
18. The International Law Association's (ILA) Warsaw Report (1988), p. 1072:
19. UN Human Rights Committee (HRC), Statement on derogations from the Covenant in connection with the COVID-19 pandemic, 24 april 2020, p. 2, <https://www.ohchr.org/Documents/HRBodies/CCPR/COVIDstatementEN.pdf> (Վերջին մուտք՝ 14.05.2022).
20. UN Human Rights Committee (HRC), CCPR General Comment No. 29: Article 4: Derogations during a State of Emergency, 31 August 2001, p. 8, <https://www.refworld.org/docid/453883fd1f.html> (Վերջին մուտք՝ 14.05.2022).
21. UNHRC, General Comment No. 37 (2020) on the Right of Peaceful Assembly (Article 21), <https://www.ohchr.org/EN/HRBodies/CCPR/Pages/GCArticle21.aspx> (Վերջին մուտք՝ 16.05.2022).



22. [https://tass.ru/ekonomika/11905543?utm\\_source=google.com&utm\\_medium=referrer=google.com](https://tass.ru/ekonomika/11905543?utm_source=google.com&utm_medium=referrer=google.com) (Վերջին մուտք՝ 16.05.2022).

### Ամփոփագիր

Կառավարման հատուկ ռեժիմների պայմաններում մարդու իրավունքների սահմանափակման համաչափությունը ոչ միայն ապահովում է այդ իրավունքների պաշտպանությունը, այլ նաև բխում է հենց պետության շահերից, քանի որ ապահովում է վարչական մարմինների բնականոն գործունեությունն ու վարչական ներուժի արդյունավետ օգտագործումը: Նշվածով պայմանավորված, աշխատանքում հիմնավորվել է, որ պետությունը պետք է խուսափի առաջին հերթին առավել խիստ, այդ թվում՝ արտակարգ դրության կառավարման հատուկ ռեժիմին դիմելուց կամ այն երկարաձգելուց, եթե ճգնաժամը հնարավոր է հաղթահարել առավել մեղմ իրավական ռեժիմի կիրառմամբ:

Կառավարման հատուկ ռեժիմների կապակցությամբ ներպետական օրենսդրությամբ առկա դրույթների, ինչպես նաև միջազգային կառույցների դիրքորոշումների վերլուծության հիման վրա աշխատանքում համաչափության սկզբունքի համատեքստում որպես կառավարման հատուկ ռեժիմների պայմաններում սահմանվող լրացուցիչ սահմանափակումների ու պահանջների հիմնական առանձնահատկություն է ներկայացվել դրանց նպատակի երկակի բնույթը. սահմանափակումների ու նահանջների միջանկյալ նպատակն այն հանրային շահերի կամ այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանությունն է, որոնց համար տվյալ կառավարման հատուկ ռեժիմը պայմանավորող իրավիճակը սպառնալիք է ստեղծել, իսկ դրանց վերջնական և գերակա նպատակը նորմալ վիճակի վերականգնումն է: Ըստ այդմ, ներկայացվել է առաջարկություն, ըստ որի՝ կառավարման հատուկ ռեժիմների պայմաններում սահմանված ցանկացած միջոցի համաչափության (պիտանիության, անհրաժեշտության և համարժեքության) գնահատումը պետք է կատարվի ոչ միայն հանրային շահերի կամ այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության, այլ նաև ստեղծված ճգնաժամը հաղթահարելու տեսանկյունից:

### Annotation

In the conditions of special regimes, the proportionality of the restriction of human rights not only ensures the protection of these rights, but also proceeds from the interests of the state itself, since it ensures the normal operation of administrative bodies and the effective use of administrative potential. In this regard, it was justified in the work that the state should avoid, first of all, resorting to a stricter, including a special regime of emergency, if the crisis can be overcome with the help of a more lenient legal regime.

In the context of the principle of proportionality, based on the analysis of the provisions of national legislation, as well as the positions of international institutions in connection with special legal regimes, as the main feature of additional restrictions and requirements established under special management regimes is presented the dual nature of the purpose: the intermediate purpose of restrictions and derogations is to protect those public interests or the rights and freedoms of others for whom the situation stipulating a special regime has created an exhaustive perspective, and their ultimate and priority purpose is to restore a normal situation. In accordance with this, a proposal was submitted according to which an assessment of the proportionality (suitability, necessity and adequacy) of any measure established under special legal regimes should be carried out not only from the point of view of protecting public interests or the rights and freedoms of others, but also from the point of view of overcoming the crisis.



### Аннотация

В условиях специальных режимов управления соразмерность ограничения прав человека не только обеспечивает защиту этих прав, но и исходит из интересов самого государства, поскольку обеспечивает нормальную деятельность административных органов и эффективное использование административного ресурса. В связи с вышеизложенным в статье было обосновано, что государство должно избегать, в первую очередь, обращения к более строгому, в том числе к особому режиму управления чрезвычайным положением или продления особого режима чрезвычайного положения, если кризис можно преодолеть с помощью более мягкого правового режима.

В контексте принципа соразмерности в работе на основе анализа положений, имеющих в национальном законодательстве, а также позиций международных структур в связи с особыми режимами управления, в качестве основной особенности дополнительных ограничений и требований, устанавливаемых в условиях специальных режимов управления, был представлен двойной характер их назначения: промежуточной целью ограничений и отступлений является защита тех общественных интересов или прав и свобод других лиц, для которых положение, обуславливающее особый режим управления, создало угрозу, а их конечной и приоритетной целью является восстановление нормального состояния.

В соответствии с вышеизложенным, было представлено предложение, согласно которому, оценка соразмерности (пригодности, необходимости и эквивалентности) любой меры, установленной в условиях специальных режимов управления, должна производиться не только с точки зрения защиты общественных интересов или прав и свобод лиц, но и с точки зрения преодоления создавшегося кризиса.

**Հիմնարաներ**՝ սահմանադրական իրավունքի սահմանափակում, կառավարման հատուկ ռեժիմ, համաչափության սկզբունք, արտակարգ դրություն:

**Key words:** restriction of constitutional law, special legal regime, principle of proportionality, state of emergency.

**Ключевые слова:** ограничение конституционного права, специальный правовой режим, принцип соразмерности, чрезвычайное положение.

**ՄՈՒՍԻՆ ԿԱՆԱՏ**

իրավաբանական գիտությունների թեկնածու,  
Ղազախստանի Հանրապետության Գերագույն դատարանին կից  
արդարադատության ակադեմիայի դոցենտ

**MUSIN KANAT**

Candidate of Legal Sciences,  
Associate Professor of the Academy of Justice at the Supreme Court  
of the Republic of Kazakhstan

**МУСИН КАНАТ**

кандидат юридических наук,  
доцент Академии правосудия при Верховном Суде  
Республики Казахстан

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ\*****CONSTITUTIONAL PRINCIPLES OF JUSTICE\*****КОНСТИТУЦИОННЫЕ ПРИНЦИПЫ ПРАВОСУДИЯ\*****1. Введение.**

Независимая судебная власть в правовом государстве является едва ли не решающим инструментом обеспечения конституционной законности и правопорядка. Судебная власть выступает сдерживающим фактором, предупреждающим нарушение правовых установлений, как со стороны законодательных, так и исполнительных органов государственной власти, обеспечивая тем самым подлинное разделение властей.

Суд действует вне «политики», поэтому другие властные структуры должны принимать на себя ограничения по недопущению противоправного воздействия на правосудие. Проверкой на реальность независимости правосудия, неподвластной политической конъюнктуре, могут являться разные ситуации – смена власти, курса страны, политического режима и т.д.

Государство, функционирующее на подлинных демократических началах, должно:

- во-первых, расширять, укреплять гарантии независимости суда на конституционном и отраслевом уровне, путем принятия соответствующих правовых актов;
- во-вторых, на деле обеспечивать авторитет судебной власти, пресекая всякие попытки административного давления со стороны других властных структур.

При этом важным является именно последнее условие, ибо правовые гарантии могут соответствовать всем международным стандартам, однако быть неспособными остановить противоправное воздействие на судебную власть.

Конституция закрепляет принципы правосудия в качестве особых условий функционирования судебной ветви в системе государственной власти. Принципы правосудия, при их правильной интерпретации и соблюдении, способны обеспечить эффективную деятельность суда по осу-

\* Հոդվածը ներկայացվել է 22.11.2021, գրախոսվել է 17.12.2021, ընդունվել է տպագրության 01.08.2022:

\* The article was presented 22.11.2021, was reviewed 17.12.2021, was accepted to publication 01.08.2022.

\* Статья представлена 22.11.2021, рецензирована 17.12.2021, принята в печать 01.08.2022.





ществлению правосудия. Они также служат своего рода ориентиром для правоприменителя и оказывают одновременно дисциплинирующее воздействие на должностное лицо, государственный орган.

## **2. Основное исследование.**

Слово «принцип» производно от лат. «principium», означающего «первоначально» [2; 490]. Принципы правосудия в тексте правовых актов находят выражение в виде особой разновидности правовых норм – норм-принципов, «закрепляющих установочные по своей сути правоположения наиболее высокого уровня обобщения и абстрагированности» [1; 8].

Нормы-принципы наиболее емко и концентрированно выражают сущность и характер правовой регламентации отношений, возникающих при осуществлении судами правосудия. Они играют главенствующую роль в системе правовых норм, регулирующих деятельность суда, им присущ императивный характер предписаний, обладание высокой степенью концентрации воли законодателя.

Такое понимание норм-принципов дает возможность дать четкое определение конституционным принципам правосудия. Под ними понимаются закрепленные в Конституции и других законодательных актах Республики Казахстан базовые руководящие положения, которые определяют сущность правосудия и устанавливают основные начала судоустройства и судопроизводства. Как свойственно Конституции в целом (п.2 ст.4), конституционные принципы имеют высшую юридическую силу и прямое действие на всей территории страны.

Конституционным принципам правосудия присущи следующие признаки:

1) принципы правосудия представляют собой объективные правовые положения, закрепляющие политические, правовые и нравственные идеи, складывающиеся в обществе. В принципах находят отражение наиболее передовые идеи, как правило, соответствующие стандартам международного права. К примеру, согласно Конституции, конституционные принципы правосудия, в первую очередь, призваны защищать права, свободы и законные интересы граждан и организаций. Это корреспондирует провозглашенному статусу Республики Казахстан, которая утверждает себя демократическим, светским, правовым и социальным государством, высшими ценностями которого являются человек, его жизнь, права и свободы (п.1 ст.1);

2) принципы правосудия являются нормами наиболее общего и руководящего характера. Будучи эталоном, они находят конкретизацию в нормах отраслевого законодательства, однако при этом не теряют свой непосредственный регулятивный характер;

3) принципы правосудия нормативно закрепляются в Конституции и судебном законодательстве. Текстуально принципы правосудия имеют конкретно выраженный характер. Хотя в ряде случаев некоторые принципы обнаруживают относимость к правосудию на основе интерпретационного толкования тех или иных конституционных норм;

4) принципы правосудия образуют целостную и взаимосвязанную систему. Нарушение одного из принципов правосудия вызывает нарушение всей системы принципов или большинства из них и делает само правосудие незаконным.

Несмотря на свой стержневой характер по отношению к другим нормам, принципы при этом не являются чем-то статичным, неизменным. Они отражают интересы общества на конкретном этапе его исторического развития. Отсюда можно говорить о вероятной подвижности (изменчивости) конституционных принципов правосудия в зависимости от социально-экономических условий и факторов развития общества.



До закрепления современных формулировок принципов правосудия в Конституции РК, они прошли достаточно длительный эволюционный путь развития. Формирование их шло параллельно и неразрывно с развитием прав и свобод человека. Так, например, «презумпция невиновности» впервые была официально провозглашена в Декларации прав человека и гражданина 1789 г. во время французской буржуазной революции и в 1791 г. включена в Конституцию Франции. Концентрированное выражение и характер общемирового стандарта принципы правосудия приобрели уже в международных документах, таких как Всеобщая декларация прав человека 1948 года, Международный пакт о гражданских и политических правах 1966 года и др.

Казахстанский законодатель при выработке принципов правосудия учитывал как собственные правовые традиции, так и международный опыт, законодательную практику других стран. Принципы правосудия находят закрепление в тексте Конституции Республики Казахстан, в Разделе VII «Суды и правосудие». Это является важным достижением демократии, если учитывать тот факт, что основные законы многих стран вообще не упоминают о принципах правосудия. Разумеется, это ещё не является поводом для принципиальных выводов о развитости судебной системы. И все же, Казахстан, устанавливая на конституционном уровне принципы правосудия, тем самым определяет базовые начала и требования к организации и деятельности судов. На основе и в развитие принципов правосудия формируется отраслевое право, придавая им наивысшую степень императивности.

Согласно статье 77 Конституции РК при применении закона судья должен руководствоваться следующими принципами:

- 1) лицо считается невиновным в совершении преступления, пока его виновность не будет признана вступившим в законную силу приговором суда;
- 2) никто не может быть подвергнут повторно уголовной или административной ответственности за одно и то же правонарушение;
- 3) никому не может быть без его согласия изменена подсудность, предусмотренная для него законом;
- 4) в суде каждый имеет право быть выслушанным;
- 5) законы, устанавливающие или усиливающие ответственность, возлагающие новые обязанности на граждан или ухудшающие их положение, обратной силы не имеют. Если после совершения правонарушения ответственность за него законом отменена или смягчена, применяется новый закон;
- 6) обвиняемый не обязан доказывать свою невиновность;
- 7) никто не обязан давать показания против самого себя, супруга (супруги) и близких родственников, круг которых определяется законом. Священнослужители не обязаны свидетельствовать против доверившихся им на исповеди;
- 8) любые сомнения в виновности лица толкуются в пользу обвиняемого;
- 9) не имеют юридической силы доказательства, полученные незаконным способом. Никто не может быть осужден лишь на основе его собственного признания;
- 10) применение уголовного закона по аналогии не допускается.

Диапазон действия указанных принципов охватывает преимущественно уголовно-процессуальную сферу. Однако, не умаляя достоинств статьи 77 Конституции РК, можем ли утверждать о достаточности приведённого перечня принципов правосудия?

Следует назвать и ряд других принципов, имеющих наряду с рассмотренными важное значение для правосудия. В тексте Конституции РК они не именуется таковыми и находят отражение



в различных его статьях и разделах. К принципам правосудия можно отнести следующие положения:

- право на судебную защиту своих прав и свобод (п.2 ст.13);
- право на получение квалифицированной юридической помощи (п.3 ст.13);
- равенство перед законом и судом (п.1 ст.14);
- неприкосновенность достоинства человека (п.1 ст.17);
- неприкосновенность частной жизни, личной и семейной тайны, защита своей чести и достоинства (п.1 ст.18);
- неприкосновенность жилища (п.1 ст.25).
- осуществление правосудия в Республике Казахстан только судом (п.1 ст.75);
- независимость судьи при отправлении правосудия и подчинение его только Конституции и закону (п.1 ст.77);
- неприменение законов и иных нормативных правовых актов, ущемляющих закрепленные Конституцией права и свободы человека и гражданина (ст.78).

Самое общее рассмотрение принципов, позволяет сделать некоторые выводы о выполняемой их роли в общественно-государственной системе:

1. Все эти принципы, так или иначе, преследуют цель: обеспечить максимальную защиту законных прав и свобод человека при отправлении правосудия. Права человека наиболее уязвимы в государственно-властной деятельности, а преднамеренное их ущемление или ограничение может привести к наиболее существенным негативным последствиям. По этой причине права человека «красной нитью» проходят через все конституционное и процессуальное законодательство, имея определяющий характер для правосудия.

2. Принципы правосудия, установленные Конституцией РК, являются общими и едиными для всех судов и судей Республики, кроме того, по смыслу Конституционного Закона 2000 года «О судебной системе и статусе судей РК» обеспечивают единство судебной системы. Ни один суд не вправе игнорировать принципы правосудия или трактовать их на свое усмотрение. Принципы правосудия – это своего рода стержень, хребет правосудия, который обуславливает все остальное содержимое законодательства. Любая принимаемая новая норма должна соответствовать принципам правосудия, любое правоприменение должно соизмеряться с этими руководящими началами.

Конституционные принципы правосудия находят свое закрепление в судопроизводственном законодательстве: Гражданском процессуальном кодексе РК, Уголовном процессуальном кодексе РК, Кодексе РК об административных правонарушениях. Более того, в этих законах конституционные принципы детализируются, определяются правовые последствия их неприменения. Наряду с сугубо отраслевыми принципами правосудия, конституционные принципы, трансформируясь, продолжают играть базовую роль в построении того или иного законодательства. Во всех процессуальных законах принципы правосудия отражаются в начальных статьях, определяя «путь» формирования законодательства.

Значение и учредительная роль принципов раскрывается в их юридическом определении в законе. Так, по смыслу п.1. ст. 9 УПК РК под принципами понимаются фундаментальные начала уголовного процесса, определяющие систему и содержание его стадий, институтов и норм, обеспечивающих общие условия реализации прав и обязанностей участников уголовного процесса и решение стоящих перед ним задач.

В судопроизводственных кодексах каждый принцип правосудия детализируется и раскрывается отдельной статьей. Чем больше законодатель раскрывает содержание того или иного



принципа, определяет механизм его действия, тем более он становится функциональным. Так, согласно статье 11 УПК РК, принцип осуществления правосудия только судом находит следующее подробное изложение: «Правосудие по уголовным делам в Республике Казахстан осуществляется только судом. Присвоение полномочий суда кем бы то ни было влечет уголовную ответственность, предусмотренную законом... Приговор и другие решения суда по уголовному делу могут быть проверены и пересмотрены только соответствующими судами в порядке, предусмотренном настоящим Кодексом».

Принципы правосудия, будучи фундаментальными началами процессуального законодательства, могут играть роль универсального критерия истины в случае юридической коллизии, а также нормы, подлежащей применению в порядке аналогии права. В частности, это прямо фиксирует ст. 10 УПК РК, согласно которой в случаях коллизии норм Кодекса подлежат применению те из них, которые соответствуют принципам уголовного процесса, а при отсутствии в нормах соответствующей регламентации вопросы судопроизводства разрешаются непосредственно на основе принципов уголовного процесса. В данной норме в полном объеме раскрывается весь возможный потенциал принципов правосудия.

Значение принципов правосудия было бы ничтожным, если бы законодатель не предусмотрел нормы, определяющие последствия их несоблюдения:

- нарушение принципов гражданского судопроизводства в зависимости от его характера и существенности влечет отмену вынесенных судебных актов (п.2 ст.5 ГПК РК);
- значение принципов законодательства об административных правонарушениях состоит в том, что их нарушение в зависимости от его характера и существенности влечет признание состоявшегося производства по делу недействительным, отмену вынесенных в ходе такого производства решений либо признание собранных при этом материалов, не имеющих силы доказательств (ст.7 КОАП РК);
- нарушение принципов уголовного процесса в зависимости от его характера и существенности влечет признание процессуального действия или решения незаконным, отмену вынесенных в ходе такого производства решений либо признание собранных при этом материалов не имеющими силы доказательств или состоявшегося производства по делу недействительным (п.2 ст.9 УПК РК).

Как видим, смысл этих норм прост и заключается в идее о том, что принцип правосудия – не просто декларативное установление, а императивная норма, требующая строгого соблюдения. Игнорирование последних влечет серьезные правовые санкции для правоприменителя.

Верховный Суд РК придает первостепенное значение вопросам соблюдения принципов правосудия, что находит отражение в принимаемых им нормативных постановлениях. Конституция РК относит такие постановления к действующему праву Республики Казахстан (п.1 ст.4). Согласно Закону РК «О правовых актах» от 6 апреля 2016 года, они входят в систему законодательства Республики Казахстан. Отсюда все установления Верховного суда РК касательно соблюдения принципов правосудия имеют обязательный характер.

Так, в нормативном постановлении № 1 от 14 мая 1998 года «О некоторых вопросах применения законодательства о судебной власти в Республике Казахстан» регламентируются вопросы применения принципов состязательности и равноправия сторон, гласности судебного разбирательства, независимости судей. Судья при осуществлении правосудия должен быть беспристрастным, строго придерживаться принципа состязательности и равноправия сторон. Высказывание судьей в какой-либо форме предварительных суждений по делу, находящемуся в его производстве, недопустимо. Судья свое мнение по конкретному делу высказывает только в со-



вещательной комнате. В соответствии с принципом состязательности и равноправия сторон суд должен обеспечить сторонам в судебном заседании равные возможности, а также процессуальную активность сторон по отстаиванию своих интересов.

В числе наиболее актуальных принципов в деятельности судов является принцип независимости судей, в связи с чем судам вменяется в обязанность принимать меры по недопустимости вмешательства в деятельность судей, пресекать попытки контроля за судьями или возложения на них обязанностей, не присущих их полномочиям.

В нормативном постановлении Верховного Суда РК № 13 от 22 декабря 2016 года «О некоторых вопросах применения принципа языка судопроизводства» указывается, что применение принципа языка судопроизводства является правовой гарантией обеспечения защиты прав и свобод лиц, участвующих в судебном процессе. Судопроизводство в Республике Казахстан ведется на казахском языке, наравне с казахским официально употребляется русский язык, а при необходимости и другие языки. К необходимым случаям применения других языков относятся обстоятельства, в силу которых совершение процессуальных действий и принятие решений на том или ином языке обеспечат соблюдение прав и законных интересов участников судопроизводства.

В своих нормативных постановлениях Верховный Суд РК дает разъяснения по вопросам судебной практики. Как видно из примеров, он определяет правовое поле соблюдения принципов правосудия, а в ряде случаев указывает на недопустимость тех или иных ситуаций в действиях судей. Если учитывать, что нормативные постановления Верховного Суда РК являются своего рода методическими указаниями (рекомендациями) по отправлению правосудия, то значимость отражения в них принципов правосудия становится наиболее значимым. В связи со сказанным, было бы уместным продолжить работу по актуализации принципов правосудия и систематизировать их в одно тематическое нормативное постановление.

### **3. Заключение.**

Значение принципов правосудия является таковым, что проблематика их соблюдения отражает уровень правового сознания в обществе. Лакмусовой бумагой действенности принципов правосудия является именно отношение к ней граждан.

Решающим фактором формирования положительного отношения к суду является судья, его действия. Законодатель достаточно хорошо уделяет внимание нормативному закреплению принципов правосудия, о чем свидетельствует проведенный краткий анализ конституционного законодательства. Однако лишь конституционное закрепление принципов правосудия не решает всей полноты вопросов, связанных с их реализацией. Любые неправомерные решения судей, получающие негативную реакцию в обществе, созвучны с нарушением тех или иных принципов. Принципы должны быть мерилем как для правотворчества в сфере судебной деятельности, так и для самого правоприменения.

### **Գրականություն / Bibliography / Библиографический список**

1. Баранов А.В. Нормы-принципы в механизме правового регулирования // Вестник Томского государственного университета. Право. 2016, №4 (22). С. 5-14.
2. Современный словарь иностранных слов. М.: Рус. яз., 1993. – 740 с.



### Ամփոփագիր

Հոդվածում հեղինակն անդրադառնում է Ղազախստանի Հանրապետությունում արդարադատության սահմանադրական սկզբունքների առանձնահատկություններին: Հեղինակի պնդմամբ՝ արդարադատության սկզբունքների պահպանման խնդիրն արտացոլում է հասարակության իրավագիտակցության մակարդակը, իսկ դրանց արդյունավետության անկյունաքարը հենց քաղաքացիների վերաբերմունքն է արդարադատության նկատմամբ: Դատարանի նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորման որոշիչ գործոնը դատավորն է, նրա գործողությունները:

Հեղինակը կարծում է, որ Օրենսդիրը բավականաչափ ուշադրություն է դարձնում արդարադատության սկզբունքների նորմատիվ ամրագրմանը, ինչի մասին է վկայում սահմանադրական օրենսդրության համառոտ վերլուծությունը: Սակայն միայն արդարադատության սկզբունքների սահմանադրական համախմբումը չի լուծում դրանց իրականացման հետ կապված հարցերի ամբողջականությունը: Դատավորների ցանկացած ապօրինի որոշում, որը հասարակության մեջ բացասական արձագանք է ստանում, համահունչ է որոշակի սկզբունքների խախտմանը: Հեղինակը պնդում է՝ դատական գործունեության ոլորտում արդարադատության սկզբունքները պետք է չափորոշիչ լինեն ինչպես իրավաստեղծ, այնպես էլ հենց իրավակիրառ գործունեության համար:

### Annotation

In the article the author touches the features of the constitutional principles of justice in the Republic of Kazakhstan. The author claims, that in the state governed by the rule of law an independent judiciary is almost the main tool which insures constitutional legitimacy and legal regulation. The judiciary acts as a deterrent tool that prevents violations of legal regulations both by legislative and executive bodies of state authority thus ensuring the real separation of powers.

The author claims, that the issue of observation of the principles of justice reflects the level of legal awareness of the society and the cornerstone of the effectiveness of the principles is the attitude of the citizens towards justice. The main factor in the formation of a positive attitude towards the court is the judge and his actions.

The author thinks that the legislator pays much attention to the normative enshrinement of the principles of justice, which is evidenced by the brief analysis of the constitutional legislation. However, the constitutional consolidation of the principles of justice alone doesn't solve the issues related to their implementation. Any illegal decision of judges, which receives a negative response in the society, leads to violation of certain principles. The author argues that the principles of justice in the field of judicial activity should be the standards for both law-making and law-enforcement activities.

### Аннотация

Статья посвящена особенностям принципов правосудия в Республике Казахстан. По мнению автора, независимая судебная власть в правовом государстве является едва ли не решающим инструментом обеспечения конституционной законности и правопорядка. Судебная власть выступает сдерживающим фактором, предупреждающим нарушение правовых установлений как со стороны законодательных, так и исполнительных органов государственной власти, обеспечивая тем самым подлинное разделение властей. Автор считает, что государство, функционирующее на подлинных демократических началах, должно: во-первых, расширять, укреплять гарантии



независимости суда на конституционном и отраслевом уровне путем принятия соответствующих правовых актов; во-вторых, на деле обеспечивать авторитет судебной власти, пресекая всякие попытки административного давления со стороны других властных структур. При этом важным является именно последнее условие, ибо правовые гарантии могут соответствовать всем международным стандартам, однако быть неспособными остановить противоправное воздействие на судебную власть.

По утверждению автора, проблематика соблюдения принципов правосудия отражает уровень правового сознания в обществе. Лакмусовой бумагой действенности принципов правосудия является именно отношение к ней граждан. Решающим фактором формирования положительного отношения к суду является судья, его действия. Автор считает, что законодатель достаточно хорошо уделяет внимание нормативному закреплению принципов правосудия, о чем свидетельствует проведенный краткий анализ конституционного законодательства. Однако лишь конституционное закрепление принципов правосудия не решает всей полноты вопросов, связанных с их реализацией. Любые неправомерные решения судей, получающие негативную реакцию в обществе, созвучны с нарушением тех или иных принципов. Автор утверждает, что принципы правосудия должны быть мерилom как для правотворчества в сфере судебной деятельности, так и для самого правоприменения.

**Հիմնաբառեր**<sup>1</sup> սկզբունքներ, արդարադատություն, Սահմանադրություն, Գերագույն դատարան, դատավոր:

**Key words:** principles, justice, Constitution, Supreme Court, judge.

**Ключевые слова:** принципы, правосудие, Конституция, Верховный Суд, судья.

**ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՆՈՐԻԿ***ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի  
ինստիտուտի հայցորդ***SHAHNAZARYAN NORIK***Applicant at the Institute of Philosophy, Sociology  
and Law of the NAS RA***ШАХНАЗАРЯН НОРИК***соискатель Института философии, социологии  
и права НАН РА***ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ\*****THE DEVELOPMENT TENDENCIES OF MODERN CONSTITUTIONS\*****ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ СОВРЕМЕННЫХ КОНСТИТУЦИЙ\*****1. Ներածություն:**

Ժամանակակից Սահմանադրություններն ունեն երկու հիմնական խնդիր՝ երաշխավորել մարդու հիմնական իրավունքները, սահմանել ժողովրդավարության և իրավական պետության պահանջներին համապատասխանող պետական իշխանության մարմինների համակարգ: Մեր կարծիքով, սահմանադրությունների զարգացման միտումները պետք է լինեն երկրում կայուն ժողովրդավարական համակարգի հաստատումը և իրավական պետության անկյունաքարը հանդիսացող իրավունքի գերակայության երաշխավորումը:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել արդի սահմանադրական զարգացման միտումները, որոնք սկսվել են պատմական ժամանակներից և շարունակվում են մինչ այսօր, ինչպես նաև ցույց տալ այն թիրախային հիմնահարցերը, որոնք դեռ ամրագրված չեն ժամանակակից սահմանադրություններում կամ կիրառվում են մասամբ:

Գիտական նորույթը կայանում է նրանում, որ առաջին անգամ փորձ է արվում ներկայացնել ժամանակակից սահմանադրությունների զարգացման միտումները: Մեր կարծիքով, արդի սահմանադրական զարգացումներն ընթանում են երկու ճանապարհով՝

Սահմանադրական դրույթների բովանդակության հստակեցում, պարզեցում, հողվածների համառոտ շարադրանքի ընդունում,

Սահմանադրությունների ժողովրդավարացում, այդ թվում նաև՝ մահմեդական սահմանադրությունների, որոնցում նշմարվում է իշխանությունների բաժանում և մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների կատարելագործում:

**2. Հիմնական հետազոտություն:**

Մեր օրերում սահմանադրական բարեփոխումները հանդիսանում են հասարակական մարտահրավերների, օբյեկտիվորեն ձևավորված իրավիճակների, որոշակի հասարակական, քաղա-

\* Հոդվածը ներկայացվել է 02.06.2022, գրախոսվել է 11.07.2022, ընդունվել է տպագրության 01.08.2022:

\* The article was presented 02.06.2022, was reviewed 11.07.2022, was accepted to publication 01.08.2022.

\* Статья представлена 02.06.2022, рецензирована 17.07.2022, принята в печать 01.08.2022.





քական ուժերի պահանջների, հասարակության փոփոխվող մենթալիտետի պատասխաններ, որոնք սահմանադրական զարգացման ժամանակակից միտումների հիմքն են: Սահմանադրական մակարդակ են բարձրացվում այնպիսի հարցեր, ինչպիսիք են հասարակությունում աշխատանքի դերի սահմանումը և սոցիալական արժեքների բաշխումը (այդ թվում՝ աշխատավարձի նվազագույն չափի հաստատման), սոցիալական արդարության, սոցիալական համերաշխության, զանգվածային լրատվական միջոցների նկատմամբ հասարակական հսկողության վերաբերյալ պահանջները:

Որպես հատուկ իրավական փաստաթուղթ՝ սահմանադրության ծագումը կապված է Նոր ժամանակներին անցմանը՝ հասարակական զարգացման մեջ բեկմամբ: Սահմանադրության ստեղծումը դարձավ ֆեոդալիզմի և դասակարգային արտոնությունների (ԱՄՆ՝ նաև գաղութային կախվածության) վերացման, իրավական հավասարության և պետական կառավարման այլ համակարգի առաջին հաստատման պահանջի պատասխան [9; 3]: Սահմանադրության ընդունումը նաև հետագայում, որպես կանոն, կապված էր հասարակական զարգացման մեջ նոր կոչերի և տեղաշարժերի հետ: Դա հստակորեն ցուցադրում է «սոցիալիստական տիպի սահմանադրության» ծագումը (այդպես էին կոչվում խորհրդային գրականության մեջ), Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո կապիտալիստական հասարակության նոր սոցիալական սահմանադրությունները, գաղութային կախվածությունից ազատված երկրներում հիմնական օրենքները:

Մարդկության և առանձին վերցված երկրների համար ծագեցին նոր սպառնալիքներ և մարտահրավերներ, որոնք կապված են մարդու (նրա արտադրական և այլ գործունեությամբ) և շրջակա միջավայրի հարաբերությունների, բնակչության գաղթման, բազմաթիվ տեղային կոնֆլիկտների, ահաբեկչության և պատանդների վերցման<sup>1</sup>, բաց ծովում ծովահենության, թմրամոլության, միջուկային զենքի տարածման և այլնի հետ<sup>2</sup>: Այդպիսի մարտահրավերները հանդիսանում են մեր ուսումնասիրության առարկան, որոնց կարգավորումը պահանջում է ոչ միայն օրենսդրական և այլ լուծումներ, այլ որոշակի դեպքերում նաև սահմանադրական հակազդեցություն:

Հետազոտությունից պարզ է դառնում, որ ժամանակակից սպառնալիքները և մարտահրավերները միանման չեն արտահայտվում տարբեր երկրների պայմաններում, միանման չեն նաև դրանց սահմանադրական պատասխանները:

Հոդվածի նպատակը հիմնավորելու համար ուսումնասիրենք ժամանակակից սահմանադրությունների զարգացման միտումները համառոտ:

Առաջնայինը մարդու իրավունքների ընդունումը և պաշտպանությունն է, որը, մեր կարծիքով, կարևոր արտահայտում է ստացել միջազգային ստանդարտների մակարդակում: 1948թ. ՄԱԿ-ի Գլխավոր համաժողովն ընդունեց Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, 1966թ. ընդունվեցին Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների վերաբերյալ միջազգային դաշնագրերը (ուժ ստացան 1976 թ.-ին) [5; 23]: Մինչ այսօր աշխարհի սահմանադրությունների ճնշող մեծամասնությունում պարունակվում են կամ նշված ակտերին հղումներ, կամ սահմանադրության դրույթները համապատասխանեցված են վերջիններիս (ճշմարիտ է, որոշ մուսուլմանական երկրներում խոսվում է տղամարդկանց և կանանց հավասարության վերաբերյալ, սակայն ըստ անհավասարություն

<sup>1</sup> Բազմաթիվ երկրներում ընդունվել է ընդարձակ հակաահաբեկչական օրենսդրություն: Տե՛ս օրինակ՝ Британский “Антитеррористический акт” 2008г.: Counter Terrorism Act 2008. L, 2008.

<sup>2</sup> Խնդիրների տվյալ շրջանակը նշում են տարբեր երկրների քաղաքական գործիչները համատեղ նիստերում և համարում, որ դրանք պահանջում են սահմանադրական լուծումներ (օրինակ՝ Российская газета. 2010, 12 февр): Համակարծիք են նաև գիտնականները, այդ թվում նաև՝ իրավագետները: Օրինակ՝ Lord Woolf. The Pursuit of Justice. Oxford, 2008. P.131.



ամրագրող «շարիաթի»): Այդ միջազգային փաստաթղթերին համապատասխան ընդունվեցին բազմաթիվ կրոնական համաձայնագրեր, խարտիաներ, մարդու իրավունքների վերաբերյալ այլ փաստաթղթեր (1950թ. Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության վերաբերյալ Համաձայնագիրը, 1969թ. Մարդու իրավունքների վերաբերյալ Ամերիկյան համաձայնագիրը, 1981թ. Մարդու և ազգությունների իրավունքների վերաբերյալ Աֆրիկյան խարտիան, 1990թ. Մուսուլմանության մեջ մարդու իրավունքների վերաբերյալ Կահիրյան հռչակագիրը և այլն):

Ժամանակի մարտահրավերի պատասխան եղել և մնում է պետության տարածքային կառուցվածքի և կառավարման ձևերի, պետական կառույցների դեմոկրատացումը: Տարածքային կառուցվածքում դեմոկրատացումը սկզբում արտահայտում ստացավ տեղի ինքնակառավարման համակարգի (սկզբում այն կիրառում էին միայն որոշ քաղաքներ՝ ըստ միապետների նվիրման հրովարտակի), իսկ հետագայում դաշնությունների (այս ձևը, ըստ ավանդության, համարվում է իրավաբանորեն առավել դեմոկրատական, քան ունիտար պետությունը), ի վերջո, Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո տարածաշրջանային պետության հատուկ ձևի ստեղծման մեջ:

Փոփոխվեցին կառավարման ձևերը: Աստիճանական չեզոքացվեցին միապետությունները, դրանց տեղում ծագեցին հանրապետություններ: Սակայն այս գործընթացը դանդաղ էր ընթանում և բազմաթիվ դեպքերում ձեռք բերում հատուկ ձև. միապետերին աստիճանական զրկում էին իշխանական լիազորություններից, և նրանք վերածվում են անվանական ֆիգուրաների, այսինքն՝ միապետը թագավորում է, սակայն չի կառավարում [2; 77-135]: Այդպիսին է իրավիճակը բոլոր Եվրոպական երկրներում, Ճապոնիայում և որոշ այլ երկրներում: Սակայն նաև ներկայումս հանդիպում են ուժեղ իրավասություններով միապետեր (օրինակ՝ Մարոկկո, Հորդանան և այլն), կիսաբացարձակ միապետությունը բնորոշ է մուսուլմանական ֆունդամենտալիզմի երկրների համար (Օման, Սաուդյան Արաբիա և այլն): Աշխարհի պետությունների մոտ մեկ ութերորդ մասը (Բրիտանական միության միապետական անդամների հաշվառմամբ) ըստ կառավարման ձևի մնում են միապետական:

Աստիճանաբար իրականացվում է վերին պալատների արտոնությունների լիկվիդացում: Արդյունքում, ներկայումս երկրների ճնշող մեծամասնությունում գերագույն պալատներն օրենսդրական գործընթացներում փոքր դեր ունեն. ստորին պալատն օրենքի նախագիծը որոշակի դեպքերում իրավասու է ընդունել ինքնուրույն (օրինակ, եթե ստորին պալատը հաղթահարել է վերին պալատի վետոն): Ճշմարիտ է, որոշ երկրներում (Իտալիա, Չիլի և այլն) գոյություն ունի կարգ, երբ նաև վերին պալատը բացառիկ իրավիճակներում իրավասու է ընդունել օրենքի նախագիծը՝ առանց ստորին պալատի համաձայնության [8; 174]:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ժամանակի մարտահրավերները դուրս եկան մարդու իրավունքների և պետական կառույցների շրջանակներից: Սահմանադրական կարգավորումն ընդգրկեց քաղաքական կուսակցությունները և հասարակական միավորումները (մինչ այդ կուսակցությունների (կոմունիստական) և հասարակական միավորումների դերի վերաբերյալ խոսվել է դեռ 1936թ. ԽՍՀՄ սահմանադրության մեջ), չնայած նաև այսօր հասարակական միավորումների դերի վերաբերյալ (բացի արհմիությունների վերաբերյալ նշումից) դեպքերի մեծամասնությունում սահմանադրություններում ամրագրումներ առկա չեն: Մի շարք երկրներում սահմանադրության մեջ ներառված են դրույթներ, որոնք վերաբերում են զանգվածային տեղեկատվության միջոցներին, նաև դրույթներ, որոնք կապված են քաղաքական համակարգի դեմոկրատացման հետ: Քաղաքական կուսակցությունների, որոշ հասարակական միավորումների (արհմիությունների) սահմանադրականացումը և ինստիտուտացումը (հիմնական օրենքների հրատարակումը) հանդիսացան ժամանակի մարտահրավերների պատասխան:



Քաղաքական համակարգի ժողովրդավարացմանը զուգահեռ սահմանադրության կատարելագործումը կապված է սոցիալական հարցերի պատասխանների հետ: Երկար ժամանակ սահմանադրություններում սոցիալական հարցերը (բացի մասնավոր սեփականության իրավունքների ընդունումից և ժողովրդի իշխանության հռչակումից), ըստ էության, չէին շոշափվում: Ժամանակակից պայմաններում սահմանադրության նորմերը, որոնք պարունակում են սոցիալական դրույթներ, սերտորեն կապված են մարդու և քաղաքացու սոցիալական իրավունքների, սոցիալական կողմնորոշված տնտեսության ստեղծման պահանջների, սեփականության հարցերի սահմանադրական կարգավորման, բնակչության սոցիալական շերտերի հարաբերությունների փոփոխությունների և այլնի հետ: Մանրամասն այս հարցերը քննարկվում են այն հատվածներում, որոնք նվիրված են հասարակական կառուցվածքին և սոցիալական պետությանը: Տվյալ դեպքում միայն նշենք, որ սոցիալականների շարքում առաջինները հանդիսացան սահմանադրություններում, օրենսդրության մեջ անհատի սոցիալ-տնտեսական իրավունքների և մասնավոր սեփականության սոցիալական գործառույթյան ընդունման և ամրագրման վերաբերյալ պահանջները:

Առաջին անգամ սոցիալական դրույթներ ի հայտ եկան հեղափոխական իրադարձություններում 1917թ. Մեքսիկայի Սահմանադրության և 1919թ. Գերմանիայի Վեյմարյան Սահմանադրության մեջ: Դրանցում ասվում էր, որ մասնավոր սեփականությունը պետք է ծառայի ոչ միայն սեփականատիրոջը, այլ նաև հասարակությանը, նշվում միավորական սոցիալական իրավունքներ (մասնավորապես՝ կրթության վերաբերյալ):

Սոցիալ-տնտեսական իրավունքների առավել լայն ծավալ առաջին անգամ հռչակվել է 1936թ. ԽՍՀՄ Սահմանադրությամբ, սակայն այդ իրավունքները ամրագրվում էին միայն «աշխատավորության» համար և միայն սոցիալիզմի կառուցման նպատակներով [6; 5]: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո սոցիալ-տնտեսական իրավունքներն ամրագրվեցին բազմաթիվ սահմանադրություններում, իսկ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների վերաբերյալ միջազգային դաշնագրի ընդունումից հետո աշխարհի սահմանադրությունների մեծամասնության մեջ՝ չնայած տարբեր ծավալներով: Դրանց իրական կենսագործումը կախված է երկրի զարգացման մակարդակից և հասարակական կառուցվածքի բնույթից:

Վերջին տասնամյակներում ընդունված սահմանադրություններում արտահայտում են ստացել սոցիալ-տնտեսական բնույթի նոր մարտահրավերները: Այսպես, որոշ սահմանադրություններում, չնայած ոչ բավականին հստակ, խոսվում է սոցիալապես կողմնորոշված տնտեսության մասին (օրինակ, 1997թ. Լեհաստանի սահմանադրություն): Պորտուգալիայի (1976թ.), Իսպանիայի (1978թ.) սահմանադրությունների մեջ խոսվում է տնտեսական զարգացման պետական պլանավորման մասին: 1971թ. (2007թ. խմբ.) Եգիպտոսի սահմանադրության մեջ առկա է սոցիալական համագործակցության վերաբերյալ դրույթ: Որոշ սահմանադրություններում հաստատված է, որ տնտեսության առանձին օբյեկտներ հանդիսանում են բացառապես պետական սեփականություն (բացի մուսուլմանական ֆունդամենտալիզմի երկրներից, սովորաբար դրանք ամենակարևոր օբյեկտները չեն): Սահմանադրություններում հռչակված է տնտեսության որոշ ոլորտների ազգայնացման և ագրարային բարեփոխությունների իրականացման հնարավորությունները: Առկա են սոցիալական բնույթի նաև այլ դրույթներ, օրինակ, պետության տարբեր տարածքների բնակչության կենսամակարդակների հավասարեցման մասին պետության քաղաքականության վերաբերյալ:

Ներկայումս մուսուլմանական երկրներում և Եվրոպայում առաջադրվում են պահանջներ՝ կապված աշխարհիկ պետության վերաբերյալ պահանջների և գաղափարախոսության որոշ ասպեկտների հետ: Մուսուլմանական ֆունդամենտալիզմի որոշ երկրներում որոշ կրոնական արգելքներ թուլացվում են, նույնիսկ Աշ-շուրում (միապետին առընթեր խորհրդատվական ժողով)



ի հայտ են գալիս կանայք, իհարկե, կարճ ժամանակով: Մյուս կողմից, պահպանվում են հագուստի վրա կրոնական պատկանելիության նշանների կրման պահանջները (Իրան): Եվրոպայի բազաթիվ պետություններում ընդունվել է օրենսդրություն, որն արգելում է կրթական հաստատություններում կրել կրոնական պատկանելիության խոշոր նշաններ (մեծ քրիստոնեական խաչ, մուսուլմանական կանացի գլխաշոր և այլն), երբեմն նման արգելքները վերաբերում են բոլոր հասարակական վայրերին: Ընդունվել են օրենքներ, որոնք արգելում են կանանց հասարակական վայրերում և փողոցներում կրել դեմքը ծածկող փարաջա: Եվրոպայում առկա են սահմանափակումներ ըստ որոշակի բարձրության մինարեթների կառուցման վերաբերյալ և այլն: Գերմանիայում կազմակերպվում են գերմանական հասարակությունում գաղթականների ինտեգրման դասընթացներ, առանց որոնց հաճախման հնարավոր չէ ստանալ գերմանական քաղաքացիություն: Մի խոսքով, բավականին սրվում են որոշ էթնիկ և կրոնական խնդիրները, որոնք սահմանադրության մեջ դեռ արտացոլում չեն ստացել:

Տնտեսական ճգնաժամը, որը սկսեց 2008թ., սրեց տնտեսական և սոցիալական խնդիրները: Զարգացած կապիտալիստական երկրների որոշ առաջնորդներ ներկայումս ակտիվորեն հանդես են գալիս ժամանակակից կապիտալիզմի քննադատությամբ՝ ցուցելով դրա արմատական բարեփոխումները: Հավանաբար, նոր սոցիալ-տնտեսական մարտահրավերներն առջևում են կարծում ենք, որ ժամանակակից սահմանադրությունները դրանց կպատասխանեն:

Մեր կարծիքով, երկրագնդի բնակչության առջև ծառայել են էկոլոգիայի հարցերը: Վերջին տասնամյակներում բազմաթիվ սահմանադրություններում ներառվել են մարդու և քաղաքացու՝ բնության, շրջակա միջավայրի պահպանության, խնայողության, բնական հարստությունների խնայողական վերաբերմունքի պարտականությունների վերաբերյալ նորմերը:

Վերը նշվել է ահաբեկչության, պատանդներ վերցնելու, ծովահենության, թմրամոլության և մեր ժամանակի այլ բացասական երևույթների մասին: Դեռ ժամանակակից սահմանադրությունները չունեն այս թիրախային հարցերի վերաբերյալ ընդարձակ դրույթներ, սակայն բազմաթիվ երկրներում համապատասխան օրենսդրական ակտեր արդեն ընդունվել են:

### **3. Եզրակացություն:**

Հետազոտության արդյունքում եզրահանգում ենք, որ պատմականորեն ժամանակի մարտահրավերին առաջին պատասխանը սահմանադրության ընդունմամբ կամ դրա ընդունումից հետո հանդիսացել է մարդու իրավական կարգավիճակի փոփոխությունը: Ենթակայության փոխարեն ներածվեց քաղաքացիություն հասկացությունը (ոչ ամենուր և միանգամից), հռչակվեցին մարդկանց իրավահավասարություն, անձնական և քաղաքական իրավունքներ, պետական մարմինների ձևավորման մեջ (ընտրություններում) քաղաքացիների մասնակցությունը (երկարատև ժամանակում սահմանափակված), հանրաքվեները (նախկինում կիրառվել են միավորական երկրներում՝ տեղի մակարդակում):

Այս ոլորտում երկրորդ պատասխանը՝ սահմանադրության մեջ մարդու և քաղաքացու սոցիալ-տնտեսական իրավունքների ներառումն էր, սակայն դա տեղի է ունեցել բավականին ուշ: Ընդունվել են կանանց, երեխաների, ազգային փոքրամասնությունների, տեղաբնակ սակավաթիվ ազգությունների և այլնի իրավունքների վերաբերյալ համաձայնագրեր և հռչակագրեր: Որոշակի ծավալով նման դրույթներ ներառվում են նաև ժամանակակից սահմանադրության մեջ:

Հիմնավորելով հոդվածի նպատակը՝ նշենք, որ սահմանադրությունները փոփոխվում են. տեղի է ունենում դրանց ժողովրդավարացում, սոցիալականացում և գաղափարականացում, զարգանում են ինչպես ընդհանուր բնույթի, այնպես և ըստ կոնկրետ հասարակական հարաբերությունների ծրագրային դրույթներ, դրանք ներառվում են առանձին նորմերում: Դա վերաբերում է ոչ միայն դեմոկրատական, այլ երբեմն նաև ավտորիտար և տոտալիտար բնույթի սահմանա-



դրություններին, չնայած դրանց սոցիալականացումը և գաղափարական բովանդակության ներածումն ունի այլ բնույթ:

Միաժամանակ խնդրահարույց են մնում հետազոտության մեջ նշված թիրախային հարցերը, որոնք դեռ հստակ ամրագրված չեն ժամանակակից սահմանադրություններում, սակայն ունեն խիստ կարևորություն:

### Գրականության ցանկ / Bibliography / Библиографический список

1. Манов Г.Н. Гражданское общество и правовое государство: предпосылки формирования. М., 1976. – 120 с.
2. Ромашков Р.А. Современный конституционализм: теоретико – правовой анализ: диссертация доктора юридических наук. Санкт – Петербург, 1998, 406 с.
3. Давид Р., Жоффре-Спинози К. Основные правовые системы современности. /Пер. с фр. и вступ. ст. В. А. Туманова. – М.: Прогресс,. 1988. – 496 с.
4. Конституция и закон: стабильность и динамизм. / [Туманов В.А., Баглай М.В., Малеин Н. С. и др; Отв. ред. Казимирчук В. П.]; Ин-т государства и права Рос. акад. наук. – М.: Юрид. кн.: ТОО "ЧеРо", 1998. – 206 с.
5. Конституционное (государственное) право зарубежных стран: актуальные проблемы. М., 1990. – 320 с.
6. Государственное право зарубежных социалистических стран: Учебно-методическое пособие. Свердловск, 1970. С.11. Государственное право зарубежных социалистических стран / Под. ред. В.Е. Чиркина и Б.Н. Топорнина. М., 1970. – 224 с.
7. Степанков И.М. конституция и политика. М., Наука, 1984. – 460 с.
8. Энтин Л.М. Разделение властей: опыт современных государств. М.: Юрид. лит., 1995. – 174 с.
9. Alde JU. Constituitional and Administrative Law. M.Y. , 2007, P 3:
10. Burns W. Ancients and moderns. The Emergence os Modern Constitutionalism // Birns W. Democracy and Constitution: Essays Washington, 2006.P. 4
11. Creat Britain. Constitutions of the Countries of the Word. M.Y., 1984.
12. Constitutional Reform Act 2005. L, 2005. Chap.4.
13. Guissani E. Constitutional abd Administrative Law. L., 2008. P. 4-5.
14. Homon P., Troper M. Drot Constitutionnel. 30-e ed.P., 2007. P. 24.
15. Barnett H. Constitutional abd Administrative Law. 7th ed. L., 2009. P. 5.
16. Alder J. Constitutional abd Administrative Law. 6th ed. N.Y., 2007. P. 7.

### Ամփոփագիր

Սույն հոդվածում հանգամանորեն և համակողմանիորեն իրավահամեմատական վերլուծության են ենթարկվել ժամանակակից սահմանադրությունների զարգացման միտումները: Ուսումնասիրության առարկան են ժամանակակից սահմանադրության էությունը և բովանդակությունը: Ըստ այդմ՝ ժամանակակից սահմանադրությունը պետության հիմնական օրենքն է, նրա իրավաքաղաքական գլխավոր փաստաթուղթը, յուրահատուկ հասարակական պայմանագիր (դաշինք)՝ հասարակության (ժողովրդի) և պետության միջև: Հատկանշական է, որ ժամանակակից սահմանադրությունների տեքստում հաճախ ամրագրվում են շրջակա միջավայրի պաշտպանության





հարցերը, ահաբեկչության դեմ պայքարի անհրաժեշտությունը, տիեզերքի խաղաղ օգտագործման մասին դրույթներ:

Հոդվածում հիմնավորվում է, որ սահմանադրությամբ է ամրագրվում անձի իրավական կարգավիճակի հիմունքները, պետության կառուցվածքը, կառավարման ձևը, քաղաքական ռեժիմը, արտաքին և ներքին քաղաքականության հիմունքները: Ժամանակակից սահմանադրություններն ընդունվում և փոփոխվում են, որպես կանոն, հանրաքվեի միջոցով՝ ժողովրդի ուղղակի կամաարտահայտությամբ:

Հոդվածում առաջարկվում է հիմք ընդունել մի շարք երկրների փորձը, որտեղ սահմանադրության մեջ ներառված զանգվածային տեղեկատվության միջոցներին, քաղաքական համակարգի ժողովրդավարացմանը, հասարակական միավորումների սահմանադրականացմանը, սահմանադրության ընդունման և փոփոխման կարգին վերաբերող իրավադրույթներ:

### Annotation

Tendencies of the development of modern constitutions have been thoroughly, comprehensively and law-comparatively analyzed in this article. The essence and content of the modern constitution are the main subject of study. The modern constitution is the basic law of the state, its main legal-political document, a unique social contract (alliance) between the society (people) and the state. It is noteworthy that the issues of environmental protection, the need to fight terrorism, the peaceful use of outer space are often stipulated in the texts of modern constitutions.

The purpose of the article is to substantiate that the structure of the state, the form of government, the political regime, the legal status of the individual, foreign and domestic policy are established by the constitution. Modern constitutions are adopted and amended, as a rule, by the means of referendum with the direct expression of the will of the people.

It is proposed to take as a basis the experience of a number of countries where the constitution includes legal provisions concerning the media, the democratization of the political system, the constitutionalization of public associations, the procedure for adopting and amending the constitution, etc.

### Аннотация

В настоящей статье обстоятельно и всесторонне проведен сравнительно-правовой анализ тенденции развития современных конституций. Научная новизна данного исследования – своеобразное раскрытие сущности и содержания современной конституции. Известно, что современная конституция является основным законом государства, его главным политико-правовым документом, своеобразным общественным договором (альянсом) между обществом (народом) и государством. Примечательно, что в тексте современных конституций часто закрепляются вопросы охраны окружающей среды, необходимости борьбы с терроризмом, мирного использования космоса.

Цель статьи – обосновать, что конституцией закрепляются структура государства, форма управления, политический режим, основы правового статуса личности, основы внешней и внутренней политики. Современные конституции принимаются и изменяются, как правило, путем референдума с прямым волеизъявлением народа.

Предлагается принять за основу опыт ряда стран, где в конституцию включены правовые положения, касающиеся средств массовой информации, демократизации политической сис-



---

темы, конституционализации общественных объединений, порядка принятия и изменения конституции и т.д.

**Հիմնարարներ**<sup>1</sup> ժամանակակից սահմանադրություն, զարգացման միտումներ, ժողովրդավարություն, սահմանադրականացում, սոցիալական և իրավական պետություն:

**Keywords:** modern constitution, tendencies of the development, democracy, constitutionalization, social and legal state.

**Ключевые слова:** современная конституция, тенденции развития, демократия, конституционализация, социальное и правовое государство.

**ՊԵՏՐՈՍՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ**

բանասիրական գիտությունների թեկնածու,  
ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի նոր մեդիայի և  
հաղորդակցության ամբիոնի դոցենտ

**PETROSYAN VARDUHI**

Candidate of Philological Sciences,  
Associate Professor of the Chair of New Media and  
Communication of the Faculty of Journalism at YSU

**ПЕТРОСЯН ВАРДУИ**

кандидат филологических наук,  
доцент Кафедры новых медиа и коммуникации  
факультета журналистики ЕГУ

**ՄՈՌԱՑՎԱԾ ԼԻՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ՄԵԴԻԱՆ\*****THE RIGHT TO BE FORGOTTEN AND MEDIA\*****ПРАВО НА ЗАБВЕНИЕ И МЕДИА\*****1. Ներածություն:**

Տեղեկատվական դարաշրջանում համացանցում հաշված թույլների ընթացքում կարելի է փնտրել և գտնել անհրաժեշտ ցանկացած տեղեկություն, այլ կերպ ասած՝ վիրտուալ տիրույթում մուտքագրված տեղեկություններն այլևս ստանում են հանրային հասանելիություն: Որոնողական համակարգերն ու սոցիալական մեդիա հարթակներն իրենց հերթին երբեմն ապահովում են այնպիսի տեղեկատվության հասանելիություն, որի շարունակական տարածումը տհաճություն կարող է պատճառել հենց այդ տվյալների սուբյեկտներին: Նկատենք, որ անձի վերաբերյալ անձնական տվյալների պաշտպանությունը, ինչպես նաև անձի վերաբերյալ տեղեկությունների մշակման օրինականությունն ու հրապարակման իրավաչափությունը կարգավորված են միջազգային իրավական ակտերով և ներպետական օրենսդրությամբ:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ ՄԻԵԴ) տարբեր գանգատներով կայացված որոշումներում Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 8-րդ հոդվածի մեկնաբանությունը դիտարկել է կոնկրետ հանգամանքների առկայության պարագայում: Միաժամանակ եվրոպական դատարանը (այսուհետ՝ ԵԴ) կարևորում է Կոնվենցիայի 10-րդ հոդվածով երաշխավորված ազատ արտահայտվելու իրավունքի և 8-րդ հոդվածով նախատեսված հեղինակության պաշտպանության իրավունքի հավասարակշռումը:

«Թեև մամուլը չպետք է հատի որոշակի սահմաններ, մասնավորապես՝ այլ անձանց հեղինակության և իրավունքների պաշտպանության առնչությամբ, նրա վրա, այնուամենայնիվ, դրված է պարտավորություն՝ իր պարտականությունների և պատասխանատվությունների կատարման ընթացքում հաղորդել տեղեկություններ և գաղափարներ հանրային հետաքրքրություն

\* Հոդվածը ներկայացվել է 22.02.2022, գրախոսվել է 18.03.2022, ընդունվել է տպագրության 01.08.2022:

\* The article was presented 22.02.2022, was reviewed 18.03.2022, was accepted to publication 01.08.2022.

\* Статья представлена 22.02.2022, рецензирована 18.03.2022, принята в печать 01.08.2022.





ներկայացնող բոլոր հարցերի վերաբերյալ, որոնց տեղեկանալու իրավունքն ունի հանրությունը» [1, 46]:

## **2. Հիմնական հետազոտություն:**

Համացանցում տեղեկատվության հասանելիության պատճառով վերջին տարիներին ամբողջ աշխարհում քննարկման առարկա է դարձել անձի «մոռացված լինելու» իրավունքը: Նկատենք, որ եզրույթը բավականին նոր է, այլ կերպ՝ անվանում են «վիրտուալ մահվան իրավունք» կամ «ջնջվելու իրավունք», և այն հիմնականում կապված է համացանցում անձնական տվյալների հասանելիության առանձնահատկությունների հետ [2]: Այս իրավունքն իր ներկայիս կարգավիճակով զարգացավ տեխնոլոգիայի շնորհիվ կամ ավելի ճիշտ ձևակերպմամբ՝ որպես պատասխան զարգացող տեխնոլոգիաներին: Մինչև 2015 թվականը ինտերնետ մատակարարողների կողմից կատարելագործված և կիրառված ալգորիթմները վերափոխեցին տեղեկատվական գերիզոր կապուղու, որի միջոցով օգտատերերը կարողանում էին հաշված թույլտվությունների ընթացքում ստանալ իրենց անհրաժեշտ տեղեկատվությունը [10]:

«Թամիզն ընդդեմ Միացյալ Թագավորության» գործի շրջանակներում Եվրոպական դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել տեղեկատվական համայնքի ծառայություններ մատուցողների, օրինակ՝ «Google Inc.»-ի համար Կոնվենցիայի 8-րդ հոդվածով նախատեսված անձնական կյանքը հարգելու իրավունքի տարածման տիրույթի Կոնվենցիայի 10-րդ հոդվածից բխող ազատ արտահայտվելու իրավունքի առնչությամբ: Դատարանը համարել է, որ պատասխանող պետությունն օգտվում է սեփական հայեցողության լայն լուսանցքից և ընդգծել է ծառայություն մատուցողների կարևոր դերակատարումը տեղեկատվության հասանելիությունը և մի շարք քաղաքական, սոցիալական և մշակութային հարցերի շուրջ բանավեճի դյուրացման գործում [4, 47]:

2007 թվականին ՄԻԵԴ-ը, «Փֆայֆերն ընդդեմ Ավստրիայի» գործով անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի զարգացման քայլ ներկայացնող իր որոշմամբ հստակ սահմանեց, որ 8-րդ հոդվածը կիրառելի է անձի վարկանիշի պաշտպանության իմաստով [3, 19]:

«Մոռացված լինելու իրավունք»-ի էությունը անձանց վերաբերյալ որոշակի տեղեկատվության որոնումը որոնողական համակարգերում դժվար կամ անհնարին դարձնելն է, անգամ եթե այդպիսի տեղեկատվությունը տարիներ շարունակ հայտնի է եղել հանրությանը: Իրավունքի այս տեսակի վերաբերյալ քննարկումները սկսվեցին, երբ անհատները սկսեցին դատական կարգով պահանջել, որ որոնողական համակարգերի տվյալների բազաներից հեռացվեն իրենց անձնական կյանքին վերաբերվող ոչ պատշաճ տվյալները (լուսանկարներ, տեսահոլովակներ, հոդվածներ և այլն):

Եզրույթի առնչությամբ նախադեպային եղավ Եվրամիության Արդարադատության դատարանի 2014 թվականի մայիսի 13-ի C-131/12 որոշումը<sup>1</sup>:

### **1. Գործի նախապայմանությունը.**

1998-ին Իսպանիայի La Vanguardia թերթը, որը մեծ տպաքանակ ունեցող պարբերական է, հոդված է հրապարակում Մարիո Կոստեխա Գոնսալեսի մասին, որոնցում առկա են վերջինիս անձնական տվյալները՝ կապված իր հարկային պարտքերի հետ: 2009 թ.-ին Գոնսալեսը կապ է հաստատում թերթի խմբագրության հետ՝ պնդելով, որ թերթը հեռացնի այդ հոդվածը, քանի որ իր անունը Գուգլ որոնողական համակարգում մուտքագրելիս հայտնվում է այդ հրապարակումը, որում առկա տեղեկություններն այլևս արդիական չեն, դատավարությունն ավարտվել է վաղուց և իր կողմից չմարված պարտականություն չկա: La Vanguardia պարբերականը, սակայն, հրա-

<sup>1</sup> Եվրամիության արդարադատության դատարանի (Court of Justice of the European Union) որոշումները տարածվում են ԵՄ անդամ բոլոր երկրների վրա:



ժարվում է հեռացնել հոդվածը: 2010 թվականին Մարիո Կոստելխա Գոնսալեսը կապ է հաստատում Google Spain-ի հետ՝ պնդելով, որ իր անվան առցանց որոնման արդյունքները չպետք է հղում կատարեն իր վերաբերյալ թերթի այդ հրապարակմանը: Սակայն Google Spain-ը ևս չի կատարում Գոնսալեսի պահանջը: Այսպիսով, Գոնսալեսին վատ լույսի ներքո ներկայացնող տեղեկությունները, որոնք հրապարակվել էին լրագրողական նպատակով և այդ փուլում իրավաչափորեն, տարիներ անց կորցրել էին իրենց արդիականությունը, բայց շարունակում էին բացասաբար ազդել նրա վրա: Google-ի կողմից իր պահանջները չկատարելուց հետո Գոնսալեսը բողոք է ներկայացնում Իսպանիայի Տվյալների պաշտպանության գործակալություն (Spanish Data Protection Agency /AEPD)՝ ընդդեմ La Vanguardia պարբերականի և Գուգլի իսպանական գրասենյակի՝ Google-Spain-ի՝ պահանջով, որ պարբերականն իր կայքից հեռացնի Գոնսալեսի հարկային պարտքերի հետ կապված 1998թ. իր էջերում տեղ գտած անշարժ գույքի աճուրդի հայտարարությունը կամ տեխնիկապես անհնար դարձնի այդ տվյալների ի հայտ գալը որոնողական համակարգերում [5]: Տվյալների գործակալությունը մերժել էր բավարարել Գոնսալեսի պահանջը՝ պատճառաբանելով, որ թերթի հրապարակումն օրինական է եղել: Գործակալությունը միաժամանակ դիմել էր Google Spain-ին՝ խնդրանքով, որ տվյալների բազայից հեռացնեն Գոնսալեսի անձնական տվյալները և անհնար դարձնեն դրանց հետագա հասանելիությունը: Գուգլի իսպանական գրասենյակը և Google Inc.-ն չէին համաձայնվել այս որոշման հետ և առանձին վիճարկել էին որոշումը: Արդյունքում Գուգլի իսպանական գրասենյակը դիմում է ԵՄ Արդարադատության դատարան, որի ընդունած որոշումն էլ հայտնի դարձավ որպես «մոռացված լինելու իրավունքի» մասին որոշում անվամբ:

Ըստ որոշման՝ մասնավոր, ոչ հանրային անձանց Եվրոպայում տրվում է որոնողական համակարգերի օպերատորներին դիմելու և իրենց վերաբերյալ անձնական տվյալները այդ համակարգերից հեռացնելու իրավունք, եթե, իհարկե, չկան «օբյեկտիվ պատճառներ»՝ մերժելու այդ խնդրանքը: «Օբյեկտիվ պատճառ» կարող է լինել դիմող սուբյեկտի հանրային դեմք լինելը կամ այդ տվյալների՝ հանրային կարևորություն ներկայացնելը:

Այս որոշումը ձևավորեց մեկ այլ օրակարգ, թե արդյո՞ք չի սահմանափակվում խոսքի ազատությունը: Այս հարցում տարբեր են նաև կարծիքները, բայց դատարանն այս գործով նշել է, որ անձի անձնական կյանքի գաղտնիության իրավունքը, որպես կանոն, ոչ միայն գերակայում է որոնողական համակարգի օպերատորի տնտեսական շահի նկատմամբ, այլ նաև ընդհանուր հանրության հետաքրքրությանը՝ գտնել սուբյեկտի անվան հետ կապված տեղեկատվությունը: Սա զարմանալի չէ, որովհետև ինքնին անձնական կյանքի գաղտնիությունը շատ հաճախ է հակադրվում խոսքի ազատությանը: Միևնույն ժամանակ դատարանի մոտեցումն այն է, որ ոչ թե պետք է հեռացվի ցանկացած տեղեկատվություն, այլ միայն այն տեղեկատվությունը, որը համապատասխանում է որոշակի չափանիշներին: Հեռացման ենթակա տեղեկատվությունը պետք է լինի ոչ ճշգրիտ, ոչ աղեկվատ, ոչ համապատասխան կամ այլևս ոչ համապատասխան, ավելորդ իր նպատակի և հրապարակման ժամանակի լույսի ներքո: ԵՄ Արդարադատության դատարանը, հղում տալով նաև լրագրողների համար Դիրեկտիվով սահմանված բացառությա- նը, նշել է, որ մոռացված լինելու իրավունքը չի կարող իրացվել համացանցային էջի հրատարակ- չի դեմ, եթե տվյալների մշակումն իրականացվել է բացառապես լրագրողական նպատակներով [1, 150]:

## **2. Հայաստանյան փորձը.**

«Մոռացված լինելու» իրավունքի խնդրին ՀՀ ԱՆ Անձնական տվյալների գործակալությունն անդրադարձել է 2019 թվականին քաղաքացիների դիմումների հիման վրա քննված վարույթ- ներով կայացրած դիրքորոշումներում [2]:



Լրագրողական նպատակով անձնական տվյալների մշակմանը վերաբերող վարույթներից մեկի ուսումնասիրությամբ պարզ է դառնում, որ քաղաքացու անձնական կյանքի տվյալները մի քանի տարի առաջ հենց ինքն էր ներկայացրել առցանց լրատվամիջոցի լրագրողին հարցազրույցի ընթացքում, որոնք հրապարակվել էին և արտատպվել այլ առցանց լրատվամիջոցների կողմից, հայտնվել այլ կայքերում: Բնականաբար, հրապարակումից տարիներ անց նույնպես քաղաքացու տվյալները հասանելի էին համացանցում՝ այդ թվում որոնողական համակարգերի միջոցով քաղաքացու անունը և ազգանունը որոնելիս: Քաղաքացին թեև Գործակալությանը դիմելով նշել էր, որ չի վիճարկում նախկինում իր տվյալների հրապարակման իրավաչափությունը, սակայն հայտնել էր, որ այդ տվյալների հրապարակայնությունը միջամտում է իր կյանքին և ակնկալում էր, որ վարույթի արդյունքում իր տվյալները կհեռացվեն, կջնջվեն կայքերից՝ իր անձնական կյանքի տվյալներն անհասանելի դարձնելով որոնողական համակարգերի համար: Գործակալության կողմից վարույթը կարճվում է, քանի որ լրատվամիջոցները հեռացնում են քաղաքացու անձնական տվյալներ պարունակող հրապարակումը կամ ապանձնավորում են նրա անձնական տվյալները՝ նրան անհասանելի դարձնելով որոնողական համակարգերով որոնման համար:

Այս վարույթով արտահայտած դիրքորոշմամբ Գործակալությունը հաշվի էր առել մի կողմից համացանցում տվյալների հասանելիության առանձնահատկությունները (առանց ժամանակի և տարածության սահմանափակման), մյուս կողմից՝ լրագրողների բացառիկ դերը ժողովրդավարական հասարակություններում հանրային շահի սպասարկման համար և գտել, որ վարույթով քաղաքացու բարձրացված հարցի հիմնական լուծումն ամեն դեպքում գտնվում է լրագրողական բարեխղճության (էթիկայի) դաշտում և առաջարկել էր որպես ինքնակարգավորման մեխանիզմ սահմանել կառուցակարգեր, որոնց շրջանակներում հնարավոր կլինի ապահովել մարդու մոռացված լինելու իրավունքը, այն է՝ հաղորդման նպատակին հասնելուց հետո, անձի դիմումի հիման վրա սահմանափակել (անհնար դարձնել) անձնական կյանքի իրավունքին միջամտող տեղեկություններ պարունակող հրապարակման կամ դրա համապատասխան հատվածի մատչելիությունն այն հարթակներում, որոնք գտնվում են լրատվամիջոցի տնօրինության տակ [2]:

2018 թվականին հունիսին [www.iravaban.net](http://www.iravaban.net) էլեկտրոնային պարբերականը հայտարարեց, որ անձի դիմումի հիման վրա անձի մոռացվելու իրավունքը իրացնելու նպատակով կայքում երկու և ավելի տարի վաղեմության նյութերում հրապարակված որոշ տեղեկություններ խմբագրվելու են՝ համապատասխան նշում անելով նյութի խմբագրված լինելու մասին: Այլ կերպ ասած՝ անձի դիմումի բավարարման դեպքում կայքից **կհեռացվեն անձի անունը, ազգանունը, կհեռացվեն կամ կփակվեն լուսանկարի/ների, տեսանյութի/ների այն հատվածները, որոնք կարող են տվյալ անձի նույնականացման հիմք լինել** [6]:

Ելնելով ԵԽԽՎ թիվ 1165 (1998) բանաձևի 7-րդ հոդվածի [12] կարգավորումներից, որ հանրային պաշտոնյաների վերաբերյալ հրապարակումները հանրային հետաքրքրություն են ներկայացնում, խմբագրությունն, ըստ էության, տարանջատել է մասնավոր քաղաքացիներին և հանրային պաշտոնյաներին: Որոշման մեջ ասվում է. «Հանրային պաշտոն չզբաղեցրած և չզբաղեցնող, հանրային գործիչ չհամարվող անձինք կարող են դիմել [iravaban.net](http://iravaban.net) անկախ, մասնագիտացված կայքին՝ իրենց վերաբերյալ տեղեկությունները երրորդ անձանց անհասանելի դարձնելու խնդրանքով հետևյալ դեպքերում.

- 1) եթե անձը կատարել է գանցանք, դելիկտ և իր վերաբերյալ դատական ակտի հրապարակվելուց անցել է առնվազն երկու տարի,
- 2) եթե անձը կատարել է թեթև ծանրության հանցանք, իր դատվածությունը մարվել է և իր վերաբերյալ դատական ակտի հրապարակումից անցել է առնվազն երկու տարի,



3) եթե անձը ներկայացնում է փաստարկներ, որ իր մահացած հարազատի (եթե անձը չի եղել հանրային ճանաչում ունեցող և բարձրաստիճան պաշտոն զբաղեցնող) վերաբերյալ հրապարակված տեղեկությունը վիրավորում է հանգուցյալի պատիվն ու արժանապատվությունը, միևնույն ժամանակ հանրության համար մեծ կարևորություն չունի,

4) եթե անձը ներկայացնում է փաստարկներ, որ հրապարակված տեղեկությունը, որի հրապարակումը ժամանակին ծառայում էր որոշակի նպատակի, սակայն ներկայումս դադարել է ծառայել այդ նպատակին, միևնույն ժամանակ խոչընդոտներ է ստեղծում անձի հասարակությանը լիարժեք ինտեգրվելու և այլ իրավունքների պաշտպանության համար,

5) եթե անձը ներկայացնում է փաստարկներ այն մասին, որ հրապարակված տեղեկությունը, որը ժամանակին իրավական հետևանքներ էր առաջացնում անձանց համար, դադարել է այդպիսի հետևանքներ առաջացնելուց, միևնույն ժամանակ խոչընդոտներ է ստեղծում անձի հասարակությանը լիարժեք ինտեգրվելու և այլ իրավունքների պաշտպանության համար [6]:

Որոշման ընդունման արդյունքում խմբագրությունը 2018 թվականին վերախմբագրեց 2014 թվականին հրապարակված «Քեմբրիջի շրջանավարտի և մյուսների գործը Վճռաբեկ դատարանը հետ է վերադարձրել» վերտառությամբ հոդվածը, քանի որ հրապարակված տվյալները կորցրել էին իրենց արդիականությունն ու հանրային շահի տեսանկյունից այլ կարևոր նպատակ չունեին և պարզապես վնասում էին անձի կյանքի որակին: Հոդվածի վերախմբագրված տարբերակի վերջում կա նշում, որ «Անձի մոռացվելու իրավունքի իրացման նպատակով հրապարակման մեջ անուն-ազգանուն/ները, լուսանկար/ները, տեսանյութ/երը խմբագրվել են և չեն արտացոլում իրական անձանց տվյալները: 7.06.2018» [9]: Սակայն iravaban.net-ի խմբագրությունը մերժել է նույն հարցով խմբագրությանը ուղղված պաշտոնյաների վերաբերյալ տվյալների հեռացման դիմումները:

«Հետք» էլեկտրոնային պարբերականը մոռացված լինելու իրավունքի խնդրին առնչվել է երկու դեպքով: «Հետք»-ի խմբագիր Լիանա Սայադյանի մեկնաբանմամբ՝ մի դեպքում ոչ թե բավարարվել է տարիներ տևած դատական գործով անցնող ամբաստանյալներից մեկի խնդրանքը՝ հեռացնելու գործի լուսաբանման ամբողջ հոդվածաշարը, քանի որ այն խանգարում է իրեն աշխատանքի անցնելիս. գործատուները իր վերաբերյալ տվյալներ որոնելիս հանդիպում են այդ հրապարակումներին, այլ վերջինիս ամբողջական անվան փոխարեն նշվել են անուն ազգանվան առաջին տառերը: Մեկ այլ դեպքում, երբ «Հետք»-ը, հղում տալով ռուսական լրատվամիջոցներին, անդրադարձել էր Չեխիայում Ռուբեն Թաթուլյանի ձերբակալմանը, ՌԴ Կապի, տեղեկատվական տեխնոլոգիաների և զանգվածային հաղորդակցության վերահսկողության Ֆեդերալ ծառայությունից (Роскомнадзор) նամակ է ստանում, որով ծառայությունը տեղեկացնում է, որ քաղաքացի Ռուբեն Թաթուլյանը դիմել է իրենց՝ խնդրելով աջակցել իր անձնական տվյալները «Հետք» ինտերնետային կայքից հեռացնելու հարցում [7]: Բնականաբար, «Հետք»-ը նյութը չի հեռացնում, ինչի արդյունքում Ռուսկոմնադզորը սպառնում է արգելափակել «Հետք»-ի ռուսական էջը Ռուսաստանի տարածքում: Այդպես վարվել էր արդեն «Առավոտ» առցանց պարբերականի ռուսական էջի պարագայում [8]: Ի վերջո, խմբագրությունը որոշում է հեռացնել Ռուբեն Թաթուլյանի վերաբերյալ հրապարակումը միայն պարբերականի ռուսական էջից:

Նկատենք, որ գործնականում բավական խնդրահարույց իրավիճակ է ստեղծվում մի կողմից անձի անձնական տվյալների գաղտնիության իրավունքի պաշտպանության, պատվի և արժանապատվության ոտնահարման, մյուս կողմից լրագրողների ազատ խոսքի իրավունքի իրացման ծավալների համաչափության տեսանկյունից: Թեև 2022 թվականի 2-րդ եռամսյակում Գուգլը հայտարարեց իր գաղտնիության քաղաքականության թարմացման մասին, որ օգտատերերը

<sup>1</sup> Ծանոթագրություն՝ Հարցազրույցն արվել է հոդվածի հեղինակի կողմից, Երևան, 12.11.2021թ.:



կարող են պահանջել, որպեսզի իրենց անձնական տվյալները հեռացվեն որոնումներից, այդուհանդերձ ընկերության ծրագրավորողները զգուշացնում են, որ որոնումից բովանդակությունը ջնջելը չի հանգեցնի այն համացանցից հեռացնելուն: Հետևաբար, հեռացվող բովանդակության ամբողջական անհասանելիության ապահովման համար անհրաժեշտ է կապ հաստատել այդ տվյալները տարածած կայքի հետ [11]:

Տարբեր երկրների քրեական օրենսդրությամբ սահմանված է, որ որոշակի ժամանակահատված անցնելուց հետո քրեական արձանագրությունները պետք է ոչնչացվեն, որպեսզի հնարավորություն ընձեռեն անձանց վերաինտեգրվելու հասարակությանը: Իսկ մի շարք երկրների քրեական օրենսգրքերում ամրագրված է, որ որոշ տեսակի հանցագործություններ կատարած անձինք, օրենքով նախատեսված ժամկետների սպառումից հետո, համարվում են հանցագործություններ չկատարածներ: Մեզանում այս հարցի որոշակի կարգավորում է նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի 8-րդ մասով, ըստ որի՝ դատվածությունը հանելը կամ մարելը վերացնում է դատվածության հետ կապված իրավական բոլոր հետևանքները: Մի շարք երկրներում դատապարտված անձինք հնարավորություն ունեն դիմելու զանգվածային լրատվության միջոցներին հեռացնելու իրենց վերաբերյալ տպագրված հոդվածները: Առանձին կարգավորում է նախատեսում նաև «Անձնական տվյալների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածը, որը վերաբերում է հանրամատչելի անձնական տվյալների հեռացմանը:

Մեզանում մոռացված լինելու իրավունքի որոշակի կարգավորում է նախատեսված նաև Բարձրագույն դատական խորհրդի 14.01.2019թ. «Չանգվածային լրատվության միջոցների հետ Բարձրագույն դատական խորհրդի և դատարանների փոխհարաբերության կանոնները հաստատելու մասին» թիվ ԲԴԽ-2-Ն-1 նորմատիվ որոշման հավելվածի 22-րդ կետով, համաձայն որի՝ «Չանգվածային լրատվության միջոցների հարցումներով՝ վերջիններիս՝ հանրության մեջ դատապարտյալների արդյունավետ ինտեգրման, ինչպես նաև մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության երաշխավորման նպատակով, դատավճիռների կատարումից հետո պատիժը կրած անձանց ազատվելու վերաբերյալ տեղեկատվություն կարող է տրամադրվել, եթե այդ անձինք նախապես համաձայնություն են տվել, կամ եթե նրանք կամ նրանց կատարած հանցագործությունները շոշափում են հանրության շահերը: Բարձրագույն դատական խորհրդի կամ դատարանների տնօրինության ներքո գտնվող այդպիսի տեղեկատվությունը տրվում է անարգել: Այլ մարմինների իրավասությանը վերապահված հարցերով զանգվածային լրատվության միջոցներին տրվում է համապատասխան պարզաբանում»:

Բարձրագույն դատական խորհրդի 27.09.2018թ. «Դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակվող դատական ակտերում անձնական տվյալների ապանձնավորման կարգը և անձնական տվյալների ապանձնավորման այլ դեպքերը սահմանելու մասին» թիվ ԲԴԽ-40-Ո-105 ընթացիկ որոշմամբ էլ սահմանել է դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակվող դատական ակտերում անձնական տվյալների ապանձնավորման կարգը, որի 1-ին կետով սահմանված են, թե որ բնույթի տվյալներն են դատական ակտերում և դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին Բարձրագույն դատական խորհրդի որոշումները դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակվում ապանձնավորված եղանակով:

### **3. Եզրակացություն:**

Այսպիսով, թեև նմանատիպ իրավական ակտերն ու օրենսդրական դրույթներն անձանց հնարավորություն են տալիս օգտվել նույնականացվող տվյալների ապանձնավորման կամ նյութն ամբողջությամբ հեռացնելու հնարավորությունից, այդուհանդերձ այսօր մոռացված լինելու իրավունքը բավականին դժվարությամբ է կիրառվում տարբեր երկրների օրենսդրություններում մի





շարք հանգամանքներից ելնելով: Դժվար կիրառելիության առաջին պատճառը մոռացված լինելու իրավունքի ազդեցությունն է արտահայտվելու ազատության վրա, քանի որ հիմնական մոտեցումն այն է, որ կոնկրետ դեպքերով պետք է ուսումնասիրվի՝ արդյո՞ք տեղեկությունն արդեն կորցրել է իր արդիականությունն ու այլևս հանրային հետաքրքրություն չի ներկայացնում: Երկրորդը օրենքի փոխազդեցությունն է անձնական կյանքի գաղտնիության օրենքի հետ: Որպես երրորդ պատճառ կարելի է մատնանշել այն փաստը, որ մոռացված լինելու իրավունքը կարող է հանգեցնել ինտերնետի որակի կրճատման, գրաքննության և պատմություններ խմբագրելուն: Հետևաբար, որպես նոր իրավական եզրույթ՝ «մոռացված լինելու իրավունքը» կարիք ունի հստակ կարգավորման՝ հիմքում ուղենիշ ունենալով խոսքի ազատության, պատվի և արժանապատվության պաշտպանությունն ու տվյալների սուբյեկտի գաղտնիության իրավունքի համաչափությունը:

### Գրականության ցանկ / Bibliography / Библиографический список

1. Հովհաննիսյան Ա.Ա., Այվազյան Մ.Գ., Մեդիա իրավունք, Ուսումնական ձեռնարկ, «Հայրապետ» հրատարակչություն, Երևան, 2020, 272 էջ:
2. ՀՀ արդարադատության նախարարության Անձնական տվյալների պաշտպանության գործակալության հանրային հաշվետվություն, 2019թ.:
3. Ռոանյա Իվանա, Անձնական և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի պաշտպանությունն ըստ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի, ԵԽ մարդու իրավունքների ձեռնարկներ, 2012թ., թարգմանվել է հայերեն 2014թ., 105 էջ:
4. Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի վերաբերյալ ուղեցույց, Անձնական և ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք, Թարմացված տարբերակ 2020թ., 376 էջ // [https://www.echr.coe.int/Documents/Guide\\_Art\\_8\\_HYE.pdf](https://www.echr.coe.int/Documents/Guide_Art_8_HYE.pdf) (Վերջին մուտք՝ 20.02.2022թ.):
5. «Մոռացված լինելու իրավունքը» շրջադարձային կդառնա համացանցի և համացանցից օգտվողների համար», «Առավոտ» օրաթերթ, 21-ը մայիսի, 2014թ. // <https://www.aravot.am/2014/05/21/462179/> (Վերջին մուտք՝ 20.02.2022թ.):
6. Մոռացվելու իրավունք // [https://iravaban.net/the-right-to-be-forgotten-hy?fbclid=IwAR2bKTTrnkPnM7UVBI7wbP5exc\\_WkPTq0WjNpo8oHC6CUfjO4nzcQvTexydc](https://iravaban.net/the-right-to-be-forgotten-hy?fbclid=IwAR2bKTTrnkPnM7UVBI7wbP5exc_WkPTq0WjNpo8oHC6CUfjO4nzcQvTexydc) (Վերջին մուտք՝ 17.02.2022թ.):
7. «Ռոսկոմնադզորը» դիմել է «Հետք»-ին Ռուբեն Թաթուլյանին վերաբերող հրապարակումը հեռացնելու խնդրանքով», Հետք, 27.10.2017թ. // [https://hetq.am/hy/article/82235?fbclid=IwAR3kOVO13uiQ\\_7K27UF9LHBykEjakZ67VrXjd94sDKhUaNn0CBGurrY7ygw](https://hetq.am/hy/article/82235?fbclid=IwAR3kOVO13uiQ_7K27UF9LHBykEjakZ67VrXjd94sDKhUaNn0CBGurrY7ygw) (Վերջին մուտք՝ 15.02.2022թ.):
8. «Ռոսկոմնադզորը սպառնում է արգելափակել «Հետքը» Ռուսաստանի տարածքում», Հետք, 02.02.2019թ. // [https://hetq.am/hy/article/100542?fbclid=IwAR0GHH\\_cUK5IT2o1uGwU4PojRducCxc7gpt7ZY1rnL\\_efGiYQxqQePvDwSI\\_hղմամբ](https://hetq.am/hy/article/100542?fbclid=IwAR0GHH_cUK5IT2o1uGwU4PojRducCxc7gpt7ZY1rnL_efGiYQxqQePvDwSI_hղմամբ): (Վերջին մուտք՝ 15.02.2022թ.):
9. «Քեմբրիջի շրջանավարտի և մյուսների գործը Վճռաբեկ դատարանը հետ է վերադարձրել», Iravaban.net, 06.30.2014թ. // [https://iravaban.net/60537.html?fbclid=IwAR2\\_n0JC0jewLcz06pXmKALzTon0xBRuIDLxlyUqe3Wlb9Zy1P9NncAGnbOY](https://iravaban.net/60537.html?fbclid=IwAR2_n0JC0jewLcz06pXmKALzTon0xBRuIDLxlyUqe3Wlb9Zy1P9NncAGnbOY) (Վերջին մուտք՝ 17.02.2022թ.):
10. Michael J. Kelly, David Satola, The right to be forgotten, Vol 2017, 65 p.
11. Remove your personal information from Google // <https://support.google.com/websearch/troubleshooter/3111061?hl=en>
12. Right to privacy, Resolution 1165 (1998), Assembly debate on 26 June 1998 (24th Sitting).



## Ամփոփագիր

Հոդվածը նվիրված է անձի՝ «վիրտուալ մահվան» կամ մոռացված լինելու իրավունքի՝ որպես իրավական համեմատաբար նոր եզրույթի տարատեսակ մեկնաբանություններին, դրսևորումներին, իրավական կարգավորմանն առնչվող հարցերին, ինչպես նաև որոնողական համակարգերում անձնական տվյալների հասանելիության թույլատրելի սահմաններին:

Այսօր տեղեկատվության հասանելիության պատճառով անձանց վերաբերյալ որոշակի տեղեկություններ հեռացնելու պահանջը կամ դրանց որոնումը Գուգլ որոնողական համակարգում և սոցիալական մեդիա հարթակներում դժվար կամ անհնարին դարձնելն արդիական խնդիր է, որին անմիջականորեն առնչվում են նաև լրատվամիջոցներն իրենց գործառույթներն իրականացնելիս: Տեղեկատվության տարածման այս հարթակներն իրենց հերթին երբեմն ապահովում են այնպիսի տվյալների հասանելիություն, որի շարունակական տարածումը ոչ միայն կարող է դադարել լինել արդիական, այլև խախտել հենց այդ տվյալների սուբյեկտների իրավունքներից մեկը՝ մոռացված լինելը: Իրավական տարբեր փաստաթղթերում թեև ամրագրված է, որ մամուլը չպետք է հատի որոշակի սահմաններ, մասնավորապես՝ այլ անձանց հեղինակության և իրավունքների պաշտպանության առնչությամբ, նրա վրա, այնուամենայնիվ, դրված է պարտավորություն՝ իր պարտականությունների կատարման ընթացքում հաղորդել տեղեկություններ և գաղափարներ հանրային հետաքրքրություն ներկայացնող բոլոր հարցերի վերաբերյալ, որոնց տեղեկանալու իրավունքն ունի հանրությունը:

Այս համատեքստում հոդվածում քննարկման առարկա են դարձել նաև անձի անձնական տվյալների գաղտնիության իրավունքի, պատվի, արժանապատվության պաշտպանության և խոսքի ազատության իրավունքի իրացման օրինաչափությունը:

## Annotation

This article is dedicated to the virtual death of a human being or his or her right of being forgotten as the interpretation of a relatively new legal term, issues related to legal regulation, as well as the permissible limits of access to personal data via search engines.

Nowadays, due to the availability and mobility of information, the removal of certain information about individuals on Google search engine, on social media has become difficult or even impossible task which is also directly related to the mass media and its performance. In their turn, social media platforms sometimes provide access to such data, the continuous dissemination of which can not only stop being up-to-date, but also violate the rights of the data subjects such as the right of being forgotten. Various legal documents state that the press should not cross certain boundaries, in particular as regards to the authority and the protection of the basic human rights, however, in the framework of their professional obligations they are “forced” to spread the information to meet public information needs.

In this context, the article discusses the regularity of the exercise of the right to privacy, protection of the honor, dignity, and the right to freedom of speech.

## Аннотация

Статья посвящена различным толкованиям такого относительно нового юридического понятия, как право личности на забвение, или «виртуальную смерть», и его различным проявлениям, вопросам юридического регулирования, а также допустимым пределам доступности личных дан-



ных в поисковых сетях. В настоящее время в связи с доступностью информации особую актуальность приобретает проблема удаления определенных личных сведений или усложнение – невозможность их поиска в Google и социальных медиаплатформах. Средства массовой информации непосредственно сталкиваются с данной проблемой в процессе своей деятельности. Эти платформы, в свою очередь, время от времени обеспечивают доступность такой информации, распространение которой может не только перестать быть актуальным, но и нарушить одно из прав этих субъектов – быть забытым.

При том, что в различных правовых документах закреплено положение, что пресса не должна нарушать определенные границы, в частности, в целях защиты репутации и прав иных лиц, на нее, тем не менее, возлагается обязанность сообщать в процессе своей деятельности сведения и идеи по всем вопросам, представляющим общественный интерес, о которых общественность имеет право знать.

В данном контексте предметом рассмотрения в статье является право личности на сокрытие персональных данных, а также закономерности реализации права на защиту чести и достоинства и на свободу слова.

**Հիմնարաներ՝** «վիրտուալ մահվան» իրավունք, մոռացված լինելու իրավունք, անձնական տվյալ, հանրային գործիչ, խոսքի ազատություն, Գուգլ որոնողական համակարգ, Մարիո Կոստեյա Գոնսալես:

**Keywords:** «virtual death» right, public figure, freedom of information, personal data, Google search engine, Mario Costeja Gonzalez.

**Ключевые слова:** право на «виртуальную смерть», право на забвение, персональные данные, общественный деятель, свобода слова, поисковая система Google, Марио Костеха Гонсалес.



**ՄԱՍՆԱՎՈՐ ԻՐԱՎՈՒՆՔ / PRIVATE LAW / ЧАСТНОЕ ПРАВО**



**ՄԵԼԿՈՆՅԱՆ ՆՈՒՆԵ**

*ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դիվանագիտական ծառայության և մասնագիտական հաղորդակցման ամբիոնի ասիստենտ*

**MELKONYAN NUNE**

*Assistant at the Chair of diplomatic service and professional communications, Faculty of International Relations, Yerevan State University*

**МЕЛКОНЯН НУНЕ**

*ассистент кафедры дипломатической службы и профессиональной коммуникации факультета международных отношений Ереванского государственного университета*

**ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ՄՈՒՍՈՒԼՄԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԱՄՈՒՍԱԸՆՏԱՆԵԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ\***

**ON THE ISSUES OF LEGISLATIVE REGULATION OF FAMILY RELATIONS OF MUSLIM COMMUNITIES IN EUROPE\***

**К ВОПРОСУ О ЗАКОНОДАТЕЛЬНОМ РЕГУЛИРОВАНИИ СЕМЕЙНЫХ ОТНОШЕНИЙ МУСУЛЬМАНСКИХ ОБЩИН В ЕВРОПЕ\***

**1. Ներածություն:**

Հետազոտության թեման ունի իրավաքաղաքական արդիական նշանակություն՝ կապված տեղական և միջազգային իրավունքի նորմերին համապատասխան փախստականների և ներգաղթյալների կարգավիճակների ճշտման հետ: Մեր հետազոտության շրջանակներում ընդգրկված արևմտաեվրոպական երկրներում այլադավան կրոնական համայնքների ինտեգրման գործում էական նշանակություն ունի ամուսնաընտանեկան հարաբերությունների օրենսդրական կարգավորումների և միջկրոնական երկխոսության խնդիրը, որովհետև դա հասարակական հարաբերությունների այն ոլորտն է, որտեղ ավելի շատ հակասություններ են ծնվում: Յուրաքանչյուր կրոնական համայնք գերադասում է իր ընտանիքը կառուցել իր կրոնաավանդական սկզբունքներով, քան թե տվյալ պետության օրենսդրությամբ: Այս հանգամանքը թելադրում է ուսումնասիրել նաև մուսուլմանների ամուսնաընտանեկան հարաբերությունների կարգավորման ու կրոնաֆորիայի հաղթահարման հարցերը:

**2. Հիմնական հետազոտություն:**

**1. Ամուսնաընտանեկան օրենսդրական կարգավորումները Ֆրանսիայում.**

Ֆրանսիայում բոլորն ազատ են ամուսնանալ իրենց ընտրած անձի հետ՝ անկախ կրոնական նկատառումներից: Ամուսնության շրջանակներում յուրաքանչյուր ամուսին պահպանում է խղճի

\* Հոդվածը ներկայացվել է 29.10.2021, գրախոսվել է 24.11.2021, ընդունվել է տպագրության 01.08.2022:

\* The article was presented 29.10.2021, was reviewed 24.11.2021, was accepted to publication 01.08.2022.

\* Статья представлена 29.10.2021, рецензирована 24.11.2021, принята в печать 01.08.2022.



և կրոնի տոտալ ազատություն, ինչը ենթադրում է կրոն ունենալու և այն կիրառելու իրավունք, ինչպես նաև չունենալու իրավունք: *Քաղաքացիական օրենսդրությունը* չի ընդունում կրոնական խմբերի կողմից մատնանշվող որևէ խոչընդոտ (միջկրոնական ամուսնության արգելում կամ, ամուսնական զույգի ընտրության այլ սահմանափակումներ): Որևէ հատուկ դրույթ չի կանոնակարգում ամուսնական արարողությունների ընթացքում կրոնական բաղադրիչի պարտադիր լինելը (օրինակ՝ իմամի առկայությունը): Դրանք պարզ պարտավորություններ են, որոնք կարող են ազատորեն խախտվել, դատարանները չեն կարող ներգրավվել և քննել դրանց իրավական հետևանքները: Բաժանման պատճառ հանդիսացող զուգընկերը քաղաքացիական պատասխանատվություն չի կրում: Բացի ամուսնությունից, զույգերը ունեն համատեղ կյանք վարելու ևս երկու այլընտրանքների միջև ընտրություն կատարելու հնարավորություն. ազատ համատեղ ապրելու իրավունք կամ համատեղ կյանքի մասին քաղաքացիական պակտ: Կրոնի խնդիրը կարծես դերակատարում չունի այս երկու տեսակի միության մեջ՝ բացի երեխաների հետ կապված խնդիրներից, որոնք կարող են լինել այդ միությունների արդյունքը:

Ֆրանսիայի մուսուլմանական գործիչներից շատերը կարծում են, որ իսլամական ավանդությունները հնարավորություն են տալիս համակերպվել երկրի օրենքներին: Նրանց կարծիքով անձի կարգավիճակի առումով Շարիաթի մեծ ճկունությունն էական հակասության մեջ չի մտնում քաղաքացիական օրենսդրության հետ, և Ֆրանսիայում բնակվող մուսուլմանների կողմից ամուսնության հարցերով քաղաքացիական օրենսդրությանը դիմելը համապատասխանում է իսլամական օրենքների նպատակներին: Սակայն խնդիրներ մշտապես առաջանում են: Օրինակ, ժամանակին մի շարք մուսուլմանական միությունների նախագահներ և մուսուլմանական մտավորականներ ստորագրեցին «Բանավեճ բոլորի համար» խորագրով մանիֆեստը [1]՝ խնդրելով նախագահ Ֆրանսուա Օլլանդին կազմակերպել համազգային բանավեճ ընտանիքի, ամուսնության և երեխաների խնամակալության վերաբերյալ, այլ ոչ թե աջակցել օրենքին, որը թույլ է տալիս միասեռականներին ամուսնանալ: Առանձին մուսուլմաններ և մուսուլմանական միություններ մասնակցեցին նախագծի դեմ տարբեր փողոցային ցույցերի, որոնց ակտիվ մասնակցում էին նաև մզկիթների հոգևորականներ:

## **2. Ամուսնանքանական օրենսդրական կարգավորումները Գերմանիայում.**

Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում մուսուլմանական կրոնի հետևորդների ամուսնանքանական հարաբերությունների հարցում աշխատում են շատ չխորանալ: Գերիշխում է այն դիրքորոշումը, որ իսլամական նորմերը [2] (ինչպես որ դրանք ձևակերպված են իսլամական պետություններում) հիմնականում կիրառելի են *միջազգային մասնավոր իրավունքի* կանոնների համաձայն հանրային քաղաքականության սահմանների շրջանակներում [3; 353], ըստ որի ընտանեկան հարցերում հիմք է ընդունվում քաղաքացիությունը՝ պարտավորեցնելով դատարաններին ու իշխանություններին կիրառել օտարերկրյա/միջազգային իրավունքը Գերմանիայում բնակվող «օտարերկրացիների» նկատմամբ՝ նույնիսկ մի քանի սերունդ հետո: Այսպիսով, Գերմանիայում ավելի հաճախ է անհրաժեշտ լինում կիրառել օտարերկրյա նորմեր, քան այլ եվրոպական երկրներում, որոնք նախընտրում են բնակության վայրը՝ որպես վճռորոշ գործոն: Երբեմն այս հարցում անհամապատասխանություն է առաջանում ԵՄ օրենսդրության հետ: Քիչ տեղեկատվություն կա ոչ ֆորմալ հատվածի վերաբերյալ: Որոշ մզկիթներ միջնորդություն են առաջարկում ամուսնության և ամուսնալուծության հարցերով ընտանեկան բախումներում: Դրանք կիսաիրավական ծառայություններ են, երբ մուսուլման փախստականները, որոնք ի վիճակի չեն տրամադրել պաշտոնական ամուսնության համար անհրաժեշտ փաստաթղթերն իրենց հայրենի երկրից, դիմել են իմամների կողմից կնքված զուտ կրոնական ամուսնությունների մասին տեղեկանքներ ստանալու համար: Այս ամուսնությունները Գերմանիայում չունեն օրինական կարգավիճակ, բայց կարող են խնդիրներ առաջացնել, եթե դրանք սոցիալական պարտավորություններ



են ենթադրում մարգինալացված համայնքի ներսում: Այսպիսով, որոշակի իմպրովիզացիա է անհրաժեշտ այն դեպքերում, երբ այդպիսի «կանայք» ամուսնալուծություն են պահանջում, ինչը դատարանները չեն կարող անել օրինական ուժի մեջ մտած ամուսնության բացակայության պատճառով: Պետական ինստիտուտներն այս դեպքում երբեմն անզոր են և բնակչության այս խմբերին վանում են իրենցից: Շարիաթի և Գերմանիայի սահմանադրության վերաբերյալ պարզեցված հրապարակային բանավեճերը ցույց են տալիս, որ բնակչության ահռելի հատվածներ, ներառյալ իրավական առումով պատրաստված քաղաքական գործիչները, ակնհայտորեն չեն պատկերացնում հարցի կարևորությունը: Օրինակ, այդպիսի թեժ բանավեճերից է տղաների թլպատման հարցը, որը բուռն ալիք է առաջացրել հրեական և մուսուլման համայնքներում:

### **3. Ամուսնալուծության օրենսդրական կարգավորումները Մեծ Բրիտանիայում.**

Բրիտանական օրենսդրությամբ ամուսնությունը քաղաքացիական կարգավիճակ է, բայց ծնունդների, մահերի և ամուսնությունների տեղական ռեգիստրը ամուսնություն կնքելու իրավունքը կարող է փոխանցել համապատասխան կերպով գրանցված կրոնական պաշտոնյային (Անգլիայի եկեղեցու քահանաներն ունեն ամուսնություններ կնքելու պաշտոնական իրավունք): Հավասարության պահպանման ակնկալիքով մեծ թվով մզկիթներ նույնպես ստացել են այդ իրավունքը, և քաղաքացիական պաշտոնյաները ներգրավվում են իսլամական ավանդույթներով ամուսնությունների գրանցմանը: Որոշ տեղական տարբերություններով՝ իրավիճակը նույնն է Մեծ Բրիտանիայի բոլոր հատվածներում: Միաժամանակ, մամուլը բարձրաձայնում է մեծ թվով մուսուլմանական ամուսնությունների դեպքերի մասին, որոնք օրենքով չեն գրանցվում: Արդարադատության նախարարությունը ձգտում է բարձրացնել մուսուլմանական հոգևորականության շրջանում իրազեկվածությունը սեփականության, կենսաթոշակների, խնամակալության և ժառանգության հետ կապված խնդիրների հետևանքների մասին, որոնք ի հայտ են գալիս ամուսիններից մեկի մահվան կամ ամուսնալուծության հետևանքով:

Ընդհանրապես, արևմտաեվրոպական պետություններում մուսուլմանական ավանդություններով ամուսնությունների իրականացումը բազմաթիվ խնդիրներ է առաջացնում և խոչընդոտներ ստեղծում հասարակական հարաբերությունների բնականոն զարգացմանը: Մեծ Բրիտանիայում փորձում են գնալ անգլիական օրենսդրության պահանջներին համապատասխանող իսլամական լուծումներ գտնելու ուղիով: Ապագայում մուսուլմանական ընտանեկան իրավունքի նորմերը կարող են կիրառվել պետական մարմինների կողմից:

### **4. Ամուսնալուծության օրենսդրական կարգավորումները Հոլանդիայում և Բելգիայում.**

Հոլանդական մուսուլմաններն իսլամական ընտանեկան օրենսդրություն հաստատելու պահանջներ չեն ներկայացնում: Բայց այստեղ ևս բավականին շատ են մուսուլման հոգևորականների կողմից իրականացվող այսպես կոչված «ոչ պաշտոնական ամուսնությունները»: Դրանք հոլանդական օրենսդրությամբ չեն ճանաչվում, և հետևաբար, չունեն օրինական ուժ: Բազմակնությունը ևս օրենքով չի ճանաչվում: Եթե պոլիգամիստը ցանկանում է ձեռք բերել Հոլանդիայի քաղաքացիություն, ապա նա պետք է բաժանվի իր բոլոր կանանցից, բացի մեկից: Հնարավոր է, որ զույգերը գրանցեն իրենց հարաբերությունները նոտարի կնքած պայմանագրով, որը նշանակում է այսպես կոչված «համատեղ բնակության մասին պայմանագիր», ինչը տեսականորեն հնարավորություն է տալիս ունենալ բազմաթիվ զուգընկերներ: Ժառանգության հարցը կարող է լուծվել նույն ձևով՝ կտակը գրանցելով [4; 507-510]:

Բելգիայում գոյություն չունի մուսուլմանական դատարանների կողմից տեղական արբիտրաժի համակարգ: Այնուամենայնիվ, մուսուլմանական իրավական համակարգերը պարբերաբար հատվում են Բելգիայի ազգային կանոնակարգերի հետ՝ հիմնականում այն պատճառով, որ մուսուլման քաղաքացիների մեծ մասն (սովորաբար մարոկացի կամ թուրք) ունեն օտարերկրյա քաղաքացիություն կամ երկքաղաքացիություն: Մարոկկոյի անձնական և ընտանեկան իրավական



կանոնակարգերը ազդեցություն են ունենում մարոկկո-բելգիական համայնքի վրա, քանի որ մարոկկոյի ծագմամբ մուսուլմանների մեծ մասը, նույնիսկ երկրորդ կամ երրորդ սերունդների, իրենց ամուսնությունները գրանցում են Մարոկկոյում կամ Բելգիայում՝ Մարոկկոյի հյուպատոսությունում: Չնայած այս երկակի իրավական համակարգը միշտ չէ, որ խնդիրներ է առաջացնում, կան որոշ դեպքեր, որոնք չեն ճանաչվում բելգիական օրենսդրության համակարգում: Սա հատկապես պատահում է, երբ խոսքը վերաբերում է ամուսնալուծության կամ բազմակնության, ժառանգության կամ ամուսնալուծության դեպքում խնամակալության խնդիրներին, որտեղ կարևոր տարբերություններ կան Մարոկկոյի և Բելգիայի իրավական համակարգերի միջև: Մինչ Բելգիայի և Մարոկկոյի իշխանությունները աշխատում են երկկողմ համաձայնագրերի շուրջ՝ այդ խնդրահարույց կետերը կարգավորելու համար, այդ հարցերի վերաբերյալ կոնկրետ ուղեցույցների և կանոնակարգերի բացակայությունը հանգեցրել է մի իրավիճակի, երբ այդ տարբեր իրավական համակարգերի պատճառով դատարաններում խնդիրներ են առաջանում: Դա հիմնականում կախված է առանձին դատավորների հայեցողությունից և միջազգային մասնավոր իրավունքի կանոնակարգերի վերաբերյալ նրանց գիտելիքներից: Որոշ ուսումնասիրություններ ցույց են տալիս, որ դատավորների մեծ մասը սահմանափակվում է միայն բելգիական օրենսդրությամբ: Այն փոքր թվով դատավորները, ովքեր տեղյակ են Մարոկկոյի օրենսդրությունից, ձեռնպահ են մնում կիրառել դա այն դեպքերում, երբ հակասություններ են առաջանում բելգիական իրավակարգի հետ (հատկապես տղամարդկանց և կանանց հավասարության հարցում, ինչն ակնհայտորեն հակասում է բազմակնության կամ ամուսնալուծության սովորույթներին) [5; 149, 200]: Այնուամենայնիվ, կան որոշ դեպքեր, երբ դատավորները պարզապես հետևում են օտարերկրյա կանոնակարգերին, նույնիսկ երբ հակասություններ են առաջանում բելգիական սկզբունքների հետ [6; 141-142]:

Բացի ինստիտուցիոնալ կերպով ճանաչված և տեսանելի հատումներից, իսլամական նորմատիվային սկզբունքները նաև ազդում են մուսուլմանների առօրյա կյանքի ավելի անտեսանելի կամ ոչ ֆորմալ ձևերի վրա: Բարեպաշտ մահմեդականները հաճախ հիփոթեքային պայմանագիր կնքելուց առաջ հարցնում են շատ հարգված կրոնականների կամ իմամների խորհուրդներ: Կան դեպքեր, երբ քաղաքացիական կարգավորումները նույնիսկ մի կողմ են մնում:

### **3. Եզրակացություն:**

Արդի համաշխարհային հիմնական դավանանքների վրա հիմնված բոլոր կրոններն ապրում են վերափոխման ժամանակաշրջան, որն էլ այս կամ այն կերպ կապված է քաղաքական գործընթացներում **զանգվածային ռեսուրսների կիրառման** հետ: Այսինքն, և՛ համաշխարհային քաղաքականության, և՛ ներքաղաքական հարթություններում զանգվածային ռեսուրսների ընդլայնման հստակ ընդգծված ձգտումն ակնհայտ է: Այդ կապակցությամբ հրատապ է դառնում կրոնական և ադմինիստրատիվ-վարչական էլիտաների համագործակցության հասարակական պահանջը՝ ժամանակակից պետությունների սոցիալական կառավարման ոլորտում: Պետական մասնակիցների համար նման փոխգործակցությունը թույլ է տալիս պահպանել կամ նույնիսկ ամրապնդել փափուկ ուժի ներուժը քաղաքական ասպարեզում, իսկ կրոնական շրջանակների համար՝ ամրապնդել իր աստիճանակարգության կարգավիճակը գլոբալիզացիայի պայմաններին հարմարվելու ընթացքում: Այս ընդհանուր համապատկերում արևմտաեվրոպական պետությունների ներքաղաքական գործընթացներում հստակ ընդգծվում է երկու միտում: Իշխանությունները ինտեգրման բազմակողմանի գործիքակազմով ձգտում են իրավաքաղաքական մասնակցության դաշտ բերել իսլամ դավանող բնակչությանը: Մյուս կողմից, մուսուլմանական համայնքների կրոնական առաջնորդները, քաղաքական կյանքին ներգրավվածությանը չհակառակվելով, ամեն կերպ աշխատում են պահպանել հավատը, կենցաղը, մշակույթը, հոգեբանական կերտվածքը,





դաստիարակությունը, էթնոկրոնական մտածողության հենքը և արգելակում են լայն ինտեգրումը եվրոպական արժեհամակարգով ապրող հասարակությանը: Այս համատեքստում առանձնակի կարևորություն են ստանում մուսուլմանական համայնքներում ամուսնաընտանեկան հարաբերությունների **օրենսդրական կարգավորումները**:

### Գրականության ցանկ / Bibliography / Библиографический список

1. Une débat agité entre Syriens // <http://oumma.com/15340/un-debat> (Վերջին մուսք՝ 20.10.2021):
2. Իսլամական նորմերի կիրառման մասին անգլերեն լեզվով ակնարկը տե՛ս Գերմանիայի իսլամական կոնֆերանսի կայքում [www.deutscheislam-konferenz.de/DIK/EN/Magazin/Recht/islam-recht-node.html](http://www.deutscheislam-konferenz.de/DIK/EN/Magazin/Recht/islam-recht-node.html) (Վերջին մուսք՝ 20.10.2021):
3. Cf. Rohe Mathias, Das islamische Recht: Geschichte und Gegenwart, 3rd ed. (Munich: C.H. Beck, 2011), pp. 353:
4. Berger, Maurits, “Sharia in Nederland is vaak keurig Nederlands” (Sharia in the Netherlands is often neatly Dutch), Mens en Maatschappij (People and Society), vol. 57, no. 6 (2007), pp. 507-510; Dessing, Rituals of Birth; Dessing, Nathal M., “An Islamic wedding in a Dutch living room”, ISIM Newsletter, no. 31 (2002).
5. Verhellen, Jinske, "Entretiens avec des Juristes Practiciens et Travailleurs Sociaux" in Foblets, M.C. (ed.) Femmes marocaines et conflits familiaux en immigration: quelles solutions juridiques appropriées (Moroccan women and migration or domestic conflicts: which proper juridical solutions?) (Antwerpen-Apeldoorn: Maklu, 1998), pp. 149, 200.
6. Foblets Marie-Claire, Families - Islam - Europe: le droit confronte au change-ment (Ընտանիք, իսլամ, Եվրոպա. Օրենքը բախվում է փոփոխություններին) (Փարիզ. L'Harmattan, 1996), էջեր 141-142:

### Ամփոփագիր

Հետազոտության թեման ունի իրավաքաղաքական արդիական նշանակություն, որովհետև արևմտաեվրոպական երկրներում վերջին տասնամյակների ընթացքում մուսուլման ներգաղթյալների մեծ հոսք է առաջացել:

Հոդվածում շեշտադրված է այլադավան կրոնական համայնքների ինտեգրման գործում ամուսնաընտանեկան հարաբերությունների էական նշանակությունը, որովհետև դա հասարակական հարաբերությունների այն ոլորտն է, որտեղ ավելի շատ հակասություններ են ծնվում: Ուսումնասիրվում է Ֆրանսիայի, Գերմանիայի, Մեծ Բրիտանիայի, Հոլանդիայի և Բելգիայի մահմեդական բնակչության ամուսնական հարաբերությունների իրավական կարգավորումը՝ միջազգային իրավունքի նորմերին համապատասխան:

Արեւմտյան Եվրոպայի երկրների կրոնական համայնքներում նկատվում է օրենսդրության շրջանցման ակնհայտ միտում: Ավանդական կրոնական սկզբունքների վրա հիմնված ամուսնությունները հաճախ հակասում են տվյալ պետության օրենքներին: Այս փաստը թելադրում է մահմեդական ամուսնական հարաբերությունների կարգավորման հարցերի ուսումնասիրման անհրաժեշտությունը:

Ֆրանսիայում *քաղաքացիական օրենսդրությունը* չի ընդունում կրոնական խմբերի կողմից մատնանշվող որևէ խոչընդոտ (միջկրոնական ամուսնության արգելում կամ ամուսնական զույգի ընտրության այլ սահմանափակումներ):



Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում մուսուլմանական կրոնի հետևորդների ամուսնաընտանեկան հարաբերությունների հարցերում հիմք է ընդունվում քաղաքացիությունը՝ պարտավորեցնելով դատարաններին ու իշխանություններին կիրառել օտարերկրյա/միջազգային իրավունքը:

Բրիտանական օրենսդրությամբ ամուսնությունը քաղաքացիական կարգավիճակ է, բայց ծնունդների, մահերի և ամուսնությունների տեղական ռեգիստրը ամուսնություն կնքելու իրավունքը կարող է փոխանցել համապատասխան կերպով գրանցված կրոնական պաշտոնյային:

Հոլանդական մուսուլմանները իսլամական ընտանեկան օրենսդրություն հաստատելու պահանջներ չեն ներկայացնում: Բայց այստեղ ևս բավականին շատ են մուսուլման հոգևորականների կողմից իրականացվող այսպես կոչված «ոչ պաշտոնական ամուսնությունները»:

Բելգիայում գոյություն չունի մուսուլմանական դատարանների կողմից տեղական արբիտրաժի համակարգ: Այնուամենայնիվ, մուսուլմանական իրավական համակարգերը պարբերաբար հատվում են Բելգիայի ազգային կանոնակարգերի հետ՝ հիմնականում այն պատճառով, որ մուսուլման քաղաքացիների մեծ մասն ունեն օտարերկրյա քաղաքացիություն կամ երկքաղաքացիություն:

### Annotation

The topic of the research is of urgent legal and political importance, as a large influx of Muslim immigrants has emerged in Western European countries in recent decades.

The article emphasizes the importance of marital relations in the integration of non-religious religious communities, as it is the area of public relations where more contradiction arise. The article examines the legal settlement of marital relations between the Muslim population of France, Germany, Great Britain, the Netherlands, and Belgium in accordance with the norms of international law. There is a clear tendency to circumvent legislation in the religious communities of Western Europe. Marriages based on traditional religious principles often violate the laws of the given state. This fact dictates the need to study the issues of normalization of Muslim marriage.

In France, civil law does not recognize any restrictions imposed by religious groups (prohibition of interfaith marriage or other restrictions of a couple's choice).

In the Federal Republic of Germany, citizenship is the basis of marital relations of followers of the Muslim religion, obliging the courts and the authorities to apply foreign/international law.

Under British law, marriage is a civil status, but the local register of births, deaths, and marriages can transfer the right to marry to a duly registered religious official.

Dutch Muslims, do not demand the adoption of Islamic family law. But there are quite a few so-called “informal marriages” carried out by Muslim clerics.

There is no local arbitration system by Muslim courts in Belgium. However, Muslim legal systems regularly intersect with Belgian national regulations, mainly because most Muslim citizens have foreign citizenship or dual citizenship.

### Аннотация

Тема исследования имеет актуальное юридическое и политическое значение, так как в последние десятилетия в странах Западной Европы возник большой приток иммигрантов-мусульман.

В статье подчеркивается важность супружеских отношений в интеграции религиозных сообществ, так как это область общественных отношений, где возникает много проблем. Исследуется





правовое регулирование брачных отношений мусульман Франции, Германии, Великобритании, Нидерландов и Бельгии в соответствии с нормами международного права.

В религиозных общинах Западной Европы наблюдается явная тенденция к обходу законодательства. Браки, основанные на традиционных религиозных принципах, часто нарушают законы данного государства. Этот факт диктует необходимость изучения вопросов нормализации мусульманского брака.

Во Франции гражданское право не признает каких-либо ограничений, налагаемых религиозными группами (запрет межконфессионального брака или другие ограничения на выбор пары брака).

В ФРГ гражданство является основой для супружеских отношений последователей мусульманской религии и обязывает суды и органы власти применять иностранное/международное право.

Согласно британскому законодательству, брак является гражданским статусом, но местный реестр рождений, смертей и браков может передать право на брак официально зарегистрированному религиозному деятелю.

Нидерландские мусульмане не предъявляют требований к исламскому семейному праву. Но существует немало так называемых «неофициальных браков», заключенных мусульманскими священнослужителями.

В Бельгии нет системы местного арбитража мусульманскими судами. Однако мусульманские правовые системы регулярно пересекаются с бельгийскими национальными нормами, главным образом потому, что большинство граждан-мусульман имеют иностранное или двойное гражданство.

**Հիմնարաներ՝** Արևմտյան Եվրոպա, քաղաքացիական օրենսդրություն, մուսուլմանական համայնքներ, ներգաղթյալներ, ամուսնություններ, ընտանեկան հարաբերություններ:

**Keywords:** Western Europe, civil law, Muslim communities, immigrants, marriages, family relationships.

**Ключевые слова:** Западная Европа, гражданское право, мусульманские общины, иммигранты, браки, семейные отношения.

**ՕՀԱՆՅԱՆ ԴԱՎԻԹ**

իրավաբանական գիտությունների թեկնածու, ՀՀ ոստիկանության պարեկային ծառայության պետի տեղակալ, ոստիկանության մայոր

**OHANYAN DAVIT**

Candidate of Legal Sciences, Deputy Head of the RA Police Patrol Service, Police Major

**ОГАНЯН ДАВИТ**

кандидат юридических наук, доцент, заместитель начальника патрульной службы полиции РА, майор полиции

**ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐՆ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ\*****POLICE ACTIVITIES IN THE FIELD OF REAL ESTATE PROTECTION\*****ФУНКЦИИ ПОЛИЦИИ В СФЕРЕ ЗАЩИТЫ НЕДВИЖИМОСТИ\*****1. Ներածություն:**

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 203-րդ հոդվածում 2006թ. կատարվեցին լրացումներ: Ներկայումս Օրենսգրքի 203-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է՝ ոչ ոք իրավունք չունի առանց օրենքով սահմանված հիմքերի կամ օրինական տիրապետողի թույլտվության մուտք գործելու հողամաս, շենք, շինություն և այլ անշարժ գույքի տարածք (այսուհետ՝ ներխուժում):

Ներխուժում է համարվում նաև՝

1) օրինական տիրապետողի թույլտվությամբ հողամաս, շենք կամ շինություն կամ այլ անշարժ գույքի տարածք մուտք գործած անձի կողմից հողամասից, շենքից կամ շինությունից կամ այլ անշարժ գույքի տարածքից դուրս գալու վերաբերյալ դրանց օրինական տիրապետողի պահանջը չկատարելը:

2) օրենքով սահմանված հիմքերով հողամաս, շենք կամ շինություն կամ այլ անշարժ գույքի տարածք մուտք գործած անձի կողմից այդ հիմքերի դադարումից կամ օրենքով նախատեսված համապատասխան գործողություններ կատարելուց հետո հողամասից, շենքից կամ շինությունից կամ այլ անշարժ գույքի տարածքից դուրս գալու վերաբերյալ դրանց օրինական տիրապետողի պահանջը չկատարելը:

Այս օրենսդրական նախաձեռնությունն ապահովելու համար 10.05.2007թ. ընդունվեց «Ներխուժումը կանխելու կամ վերացնելու նպատակով անշարժ գույքի օրինական տիրապետողի կողմից ոստիկանությանը լիազորելու կարգն ու պայմանները սահմանելու մասին» ՀՀ Կառավարության № 797-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշում), որով, ըստ էության, ոստիկանությունը ստանձնեց քաղաքացիաիրավական կարգավորումների ապահովման գործառույթը: Վերոնշյալ իրավա-

\* Հոդվածը ներկայացվել է 30.05.2021, գրախոսվել է 27.06.2022, ընդունվել է տպագրության 01.08.2022:

\* The article was presented 30.05.2022, was reviewed 27.06.2022, was accepted to publication 01.08.2022.

\* Статья представлена 30.05.2022, рецензирована 27.06.2022, принята в печать 01.08.2022.



կարգավորումներն աչքի են ընկնում մի շարք վիճահարույց կողմերով և ոչ միանշանակությամբ, որոնց սույն աշխատանքում ցանկանում ենք անդրադառնալ խմբավորված:

## 2. Հիմնական հետազոտություն:

### 1. Օրինական տիրապետման փոփոխականության և ոչ միանշանակության ազդեցությունը քննարկվող հարաբերությունների նկատմամբ.

Ինչպես տեսնում ենք, օրենսդրությունը ներխուժումից պաշտպանում է օրինական տիրապետողին: Հետևաբար անհրաժեշտություն կա հստակեցնելու այդ կատեգորիան: Օրենսգրքի 163-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տիրապետման իրավունքը գույքը փաստացի տիրապետելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է: Առաջին հայացքից օրենսդրական այս պարզունակ սահմանումն այդքան էլ պարզ չէ: Սահմանումը որակելով որպես անհաջող՝ պրոֆեսոր Տ.Կ. Բարսեղյանը նշում է՝ տիրապետումը գույքի գտնվելն է սեփականատիրոջ տնտեսությունում, նրա փաստացի տնտեսական իշխանության ներքո [1; 294]: Տիրապետման ինստիտուտը առհասարակ միատարր չէ: Դրա շուրջ տեսակետները շատ են ու հակասական: Նույնիսկ միասնական մոտեցում չկա այն հարցում՝ արդյո՞ք տիրապետումը փաստ է, թե՞ իրավունք<sup>1</sup>: Տիրապետումը լինում է օրինական և ապօրինի: Օրինական է համարվում այն տիրապետումը, որը հիմնված է որևէ իրավական հիմքի վրա՝ օրենքի, վարչական ակտի կամ պայմանագրի, այսինքն՝ տիրապետման իրավական տիտղոսի վրա [3; 407]: Ապօրինի տիրապետումն իր հիմքում այս ամենը չունի: Սակայն ապօրինի է համարվում նաև այն տիրապետումը, որը թեկուզև իր հիմքում ունի պայմանագիր, սակայն այդ պայմանագիրն անվավեր է: Ավելին, ապօրինի է համարվում նույնիսկ վավեր պայմանագրից բխող տիրապետումը, եթե տիրապետող-պարտապանը թույլ է տվել պարտավորությունների խախտում: Պատկերացնենք մի իրավիճակ. կողմերի միջև կնքվել է անշարժ գույքի վարձակալության պայմանագիր: Քանի դեռ պայմանագիրը վավեր է, և վարձակալը թույլ չի տվել պարտավորությունների խախտում, վերջինիս տիրապետումը համարվում է օրինական: Հակառակ պարագայում միանգամից օրինական տիրապետումը կանցնի վարձատուին: Ուստի որքան էլ տարօրինակ թվա առաջին հայացքից, փաստ է, որ օրինական տիրապետողի համար **ենթադրյալ ներխուժող** կարող է լինել անգամ գույքի սեփականատերը: Ստացվում է՝ որոշակի դեպքերում տիրապետման օրինականությունը որոշելը և հակառակը, այդքան էլ հեշտ չէ: Բացի այդ, անցումը օրինականից անօրինականի շատ դեպքերում ժամանակային մեծ խզում չի պահանջում:

Հատկանշական է, որ Որոշման 5-րդ կետի համաձայն՝ ներխուժումը կանխելու կամ վերացնելու համար ոստիկանությունը ստուգում է անշարժ գույքի նկատմամբ դիմող անձի օրինական տիրապետումը հավաստող փաստաթղթերը: Չբացառելով այն հանգամանքը, որ որոշ դեպքե-

<sup>1</sup> Այսպես, Լուիզիանայի քաղաքացիական օրենսգրքի 3422-րդ հոդվածը տիրապետումը բնորոշում է որպես փաստացի դրություն (Louisiana Civil Code <https://clck.ru/QxqCG>), Կատալոնիայի քաղաքացիական օրենսգրքի 521-1-րդ հոդվածը (Codigo civil de Catalonia <https://clck.ru/QxqBD>) և Արգենտինայի քաղաքացիական օրենսգրքի 1909-րդ հոդվածը (Argentine Civil Code <https://clck.ru/QxqBo>) որպես գույքի նկատմամբ փաստացի իշխանություն: Պերուի քաղաքացիական օրենսգրքի 896-րդ հոդվածը սահմանում է՝ տիրապետումը սեփականատիրոջ իրավազորությունների փաստացի իրականացումն է (Peru Civil Code <https://clck.ru/Qxq8Q>): Եվրոպական քաղաքացիական օրենսգրքի ընդհանուր մոդելի նախագծի 1:205-րդ հոդվածը սահմանում է տիրապետումը որպես գույքի նկատմամբ անմիջական կամ միջնորդավորված ֆիզիկական հսկողություն (The Draft Common Frame of Reference, DCFR, <https://clck.ru/HxJo6>): Իտալիայի քաղաքացիական օրենսգրքի 1140-րդ հոդվածի համաձայն՝ տիրապետումը իշխանություն է գույքի նկատմամբ, որը դրսևորվում է սեփականության և այլ իրային իրավունքների իրացմանը համապատասխանող գործունեության մեջ (Codice Civile Italiano <https://clck.ru/Qxq9y>):



րում փաստաթղթերի ստուգումը կփարատի տիրապետման օրինականության շուրջ կասկածները՝ ակնհայտ է, որ մեր կողմից վերը նշված դեպքերում նույնիսկ դատավորները երկար ու բազմակողմանի քննության արդյունքում կոժվարանան որոշում կայացնել: Հետևաբար, կարծում ենք, որ ենթադրյալ տիրապետողի կողմից իր տիրապետման օրինականությունը հավաստող և հակառակը, ենթադրյալ ներխուժողի կողմից անշարժ գույքի տարածք մուտք գործելու կամ գտնվելու օրինականությունը հավաստող փաստաթղթերի առկայությունը որոշ դեպքերում դեռևս չի վկայում օրինականության մասին:

## **2. Ապօրինի ներխուժման բնույթի և սահմանների մասին.**

Վերոնշյալ կարգավորումներից հետևում է, որ ներխուժում է համարվում անշարժ գույքի տարածք առանց իրավական հիմքի մուտք գործելը կամ նման մտադրությունը, ինչը համապատասխանաբար հանգեցնում է ներխուժման վերացման կամ կանխման: Ստացվում է՝ օրենսդիրը ներխուժումը հասկացության մակարդակով հավասարեցնում է անշարժ գույքի տարածքում **անձի ապօրինի ֆիզիկական ներկայության հետ**: Այնուհետև նույն հոդվածի 4-րդ կետում սահմանվում է՝ օրինական տիրապետողն իրավունք ունի հեռացնելու իր հողամասում, շենքում կամ շինությունում կամ այլ անշարժ գույքի տարածքում ապօրինաբար **գտնվող ուրիշի գույքը**:

Ուստի հարց է առաջանում ներխուժումը միայն անձի ուրիշի տարածքում ապօրինաբար ֆիզիկապես գտնվելն է, թե՛ նաև վերջինիս պատկանող շարժական իրերի: Այս հարցի պարզաբանումը կարևոր նշանակություն ունի հատկապես ոստիկանական միջամտության և դրա արդյունքում առաջացող հնարավոր իրավական հետևանքների տեսանկյունից, քանզի Որոշումը այս մասով լուծում է: Մասնավորապես, Օրենսգրքի 203-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է՝ հողամասի, շենքի կամ շինության կամ այլ անշարժ գույքի տարածքի օրինական տիրապետողն իրավունք ունի լիազորելու ոստիկանությանը՝ **իր անունից կատարելու գործողություններ** ներխուժումը կանխելու կամ վերացնելու ուղղությամբ: Կարող է արդյո՞ք օրինական տիրապետողը լիազորել ոստիկանությանը՝ հեռացնելու իր տարածքից ներխուժողին պատկանող գույքը:

Այս հարցերի պատասխանը ստանալու համար փորձենք պարզել, թե ինչ շահեր և իրավունքներ են պաշտպանվում ներխուժումից: Եթե մեր կողմից քննարկվող իրավահարաբերություններում օրինական տիրապետողը սեփականատերն է, ապա անհրաժեշտություն է առաջանում պաշտպանելու սեփականության իրավունքը՝ իր բոլոր իրավազորություններով, իսկ եթե սեփականատերը չէ, ապա անհրաժեշտություն է առաջանում պաշտպանելու տիրապետումը և հատկապես օգտագործումը (օրինակ՝ բնակարանի վարձակալության դեպքում), իսկ որոշակի դեպքերում նաև տնօրինումը (օրինակ՝ գույքի հավատարմագրային կառավարման պայմանագրի դեպքում): Այն, որ անձի ապօրինի ֆիզիկական ներկայությունը դժվարացնում, իսկ որոշ դեպքերում նաև անհնար է դարձնում վերոնշյալ իրավունքների իրականացումը քննադատության չի դիմանում: Եվ հենց դրա համար էլ օրենսդիրը նախատեսել է այս կարգավորումը: Մյուս կողմից, եթե վերացվում է ֆիզիկական ներկայությունը և միևնույն ժամանակ անշարժ գույքը շարունակում է մնալ ներխուժողի շարժական գույքով ծանրաբեռնված, կարծում ենք, որ վերոնշյալ իրավունքների իրականացման խոչընդոտներն ամբողջությամբ չեն վերացվում, համապատասխանաբար չի վերանում նաև ներխուժումը:

Այլ հարց է՝ արդյոք շարժական գույքի մասով ներխուժման վերացման պահանջ կարող է օրինական տիրապետողը ներկայացնել ոստիկանությանը, թե՛ ոչ: Կարծում ենք, որ ոչ՝ հետևյալ հիմնավորումներով.

1) սահմանելով ներխուժման հասկացությունը՝ օրենսդիրը դրա վերացման առաջնային հնարավորություն տվել է հենց օրինական տիրապետողին, մասնավորապես Օրենսգրքի 203-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է՝ ներխուժումը կանխելու կամ վերացնելու նպատակով օրինական տիրապետողն իրավունք ունի խելամիտ պաշտպանության միջոցներ ձեռնարկելու, այդ



թվում՝ **ներխուժման հետևանքին համարժեք ուժ գործադրելու**, եթե ոչ ուժային միջոցները չեն կարող կանխել կամ վերացնել ներխուժումը: Օրինական տիրապետողն իրավունք ունի հեռացնելու իր հողամասում, շենքում կամ շինությունում կամ այլ անշարժ գույքի տարածքում ապօրինաբար գտնվող ուրիշի գույքը: Սույն մասով նախատեսված պայմաններում ներխուժումը կանխելու կամ վերացնելու նպատակով ձեռնարկված գործողությունների արդյունքում ներխուժած անձին պատճառված վնասը փոխհատուցման ենթակա չէ: Ինչպես տեսնում ենք, օրինական տիրապետողը կարող է ձեռնարկել ինչպես ոչ ուժային միջոցներ, այնպես էլ ուժային միջոցներ, սակայն համարժեք, կարող է անձամբ հեռացնել գույքը, ընդ որում վնաս պատճառելով ներխուժողին: Օրինական տիրապետողն իրավունք ունի դիմել ոստիկանական օժանդակության, երբ անձամբ չի կարողանում կանխել կամ վերացնել ներխուժումը: Ուստի կարծում ենք, որ ոստիկանական միջամտությունը ենթադրվում է **բացառապես անձին ֆիզիկապես հեռացնելու ժամանակ**, քանզի այդ միջամտությունն օրինական տիրապետողի համար օբյեկտիվորեն անխոչընդոտ հնարավորություն է ստեղծում շարժական գույքը հեռացնելու համար:

2) «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հարկադիր կատարողը վտարումը կատարում է պարտապանի գույքի պարտադիր գույքագրմամբ: Անհրաժեշտության դեպքում հարկադիր կատարողն ապահովում է պարտապանի գույքի պահատվությունը՝ վերջինիս վրա դնելով կատարված ծախսերի հատուցումը: Փաստորեն, նույնիսկ վտարման դեպքում, որի իրավական հիմքը օրինական ուժի մեջ մտած վճիռն է, օրենսդիրը հարկադիր կատարողի վրա դնում է գույքագրման, իսկ անհրաժեշտության դեպքում՝ պահատվության պարտականություններ: Այս ամենը, ի թիվս այլնի, արվում է շարժական գույքի սեփականատիրոջ իրավունքների ենթադրյալ խախտման նկատառումներով: Կարծում ենք, որ ոստիկանությունն այն պետական մարմինը չէ, որն օժտված է նմանատիպ լիազորություններով:

### **3. Քաղաքացիաիրավական վեճի հասկացության, բնույթի և սահմանների մասին.**

Որոշման 7-րդ մասը սահմանում է այն հիմքերը, որոնց դեպքում չի թույլատրվում վերացնել կամ կանխել ներխուժումը: Դրանցից մեկն էլ հետևյալ է՝ «անշարժ գույքի օրինական տիրապետողի պահանջն օրենքով սահմանված կարգով կողմերի միջև կնքված և տվյալ պահին գործող քաղաքացիաիրավական կամ այլ պայմանագրից կամ ամուսնաընտանեկան հարաբերություններից ծագող վեճ է»:

Հիմնական խնդիրը կայանում է նրանում, թե ի՞նչ է իրենից ներկայացնում **քաղաքացիաիրավական վեճը**, քանզի պրակտիկայում դրա առկայության կամ բացակայության հարցը տարատեսակ ընկալումների է հանգեցնում: Ուստի, անհրաժեշտ ենք համարում քննարկել վեճի շուրջ առկա տեսական մոտեցումները: Իրավական վեճի էությունը հակադիր կողմերի միջև տարածայնությունների առկայությունն է: Լ.Ա. Վանենևան նշում է, որ, վեճ ասելով, պետք է հասկանալ իրավահարաբերության օբյեկտիվ կարգավիճակ, ինչը պայմանավորված է կողմերից մեկի պարտավորության չկատարմամբ և ինչի արդյունքում բացակայում է մյուս կողմի սուբյեկտիվ իրավունքի օբյեկտիվ իրականացման հնարավորությունը [2; 134]: Սա շատ վիճելի տեսակետ է, քանզի ոչ բոլոր վեճերն են ծագում իրավախախտումներից: Բացի այդ, ինչպես նշում է Ի.Գ. Պոբիր-չենկոն՝ վեճն օրենքով պահպանվող շահի խախտումն է կամ վիճարկումը, ինչը (շահը – Դ.Օ.) ոչ միշտ է համապատասխանում իրավունքին: Համապատասխանաբար, իրավական վեճը համարվում է ոչ միայն այն վիճակը, որում մի կողմը գտնում է, որ մյուս կողմը խախտում է կամ վիճարկում է իր իրավունքը կամ ստեղծում է անորոշություն իրավահարաբերություններում, այլև այն վիճակը, որտեղ մի կողմի շահերի բավարարումը՝ մյուս կողմի ընկալմամբ, խախտում է իր սեփական շահերը [10; 48]:





Քաղաքացիաիրավական վեճը հաճախ դիտարկվում է դատավարական վեճի համատեքստում: Այս մասով առկա է երկու տեսություն: Առաջինը կայանում է նրանում, որ քաղաքացիաիրավական վեճ և դատավարական վեճ հասկացությունները նույնական չեն և գոյություն ունեն միմյանցից անկախ: Մասնավորապես, Ի.Գ. Պորբիրչենկոն նշում է, որ վեճն իրավական բնույթ է ձեռք բերում ոչ միայն դիմումը իրավասու մարմնի կողմից ընդունվելու դեպքում, այլ նաև դրան նախորդող փուլում, երբ ինքնին կողմերն են փորձում կարգավորել իրենց միջև եղած վեճը [10; 48]: Համանման դիրքորոշում է արտահայտել նաև Ի.Մ. Չայցևը՝ վեճը ծագում է մինչև դատական պրոցեսի սկիզբը և դրա առկայությունը լիովին հնարավոր է նաև առանց իրավունքների պաշտպանության հայցային ձևի: Վեճը կարող է լուծվել նաև ոչ դատական կարգով՝ մասնակիցների կողմից կարգավորման միջոցով [4; 89-94]: Այս տեսության կողմնակիցները գտնում են, որ դատավարությունը իրավական վեճին սոսկ հաղորդում է դատավարական բնույթ, բայց դրա նյութաիրավական բնույթը շարունակվում է պահպանվել:

Մյուս տեսությունը վկայում է իրավական վեճի բացառապես դատավարական բնույթի մասին: Մասնավորապես, Մ.Գ. Մատիևսկին կարծում է, որ վեճն իրավական բնույթ է ձեռք բերում միայն այն դեպքում, երբ կողմերի գործողությունները իրականացվում են դատավարական նորմերով որոշված ընթացակարգով, այդ իսկ պատճառով դատավարական պրոցեսից դուրս վեճն իրավական կատեգորիա չէ: Այն իրավական կատեգորիա է դառնում շահագրգիռ անձի կողմից դատավարական օրենքով սահմանված կարգով համապատասխան մարմին դիմելու պահից: Հենց այդ պահն է առաջացնում իրավական հետևանքներ [7; 158-167]: Համանման կարծիք է արտահայտել նաև Ի.Բ. Մորեյնը, ըստ որի վեճը, որը ծագում է քաղաքացիական, աշխատանքային, հողային և այլ իրավահարաբերություններից, որոնք տարբերվելով միմյանցից նյութաիրավական հատկանիշներով, բնութագրվում են ընդհանուր դատավարական բնույթով: Մրցակցային սկիզբը, որը դրված է հայցային դատավարության հիմքում, հանդիսանում է նրա կարևորագույն հիմնաքարը [8; 85-93]: Որոշ մասնագետներ կարծում են, որ իրավունքի մասին վեճը ծագում է նրա մասնակիցներից թեկուզ մեկի դիմումով առ այն, որ այլ սուբյեկտի կողմից խախտվել է կամ վիճարկվում է իր իրավունքը [6; 74, 5; 115-127, 11; 78]: Այս տեսակետները քննադատել է Ի.Մ. Չայցևը: Նրա կարծիքով, որպեսզի կողմերից մեկը հայտարարի իրավունքի վեճի մասին, վերջինս պետք է գոյություն ունենա: Առանց դրա այն չի կարող հայտարարվել [4; 89-94]:

Կարծում ենք՝ իրավական վեճի մասին կարելի է խոսել այն դեպքում, երբ կողմերի շահերի հակասությունը հասնում է սրման առավելագույն աստիճանի, որը դրսևորվում է կողմերից մեկի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը միտված կամահայտնությունում: Ուստի, արդարացված է այն տեսակետը, որ իրավական վեճի էությունը կայանում է իրավունքների և օրինական շահերի մասին կոնֆլիկտի մեջ: Իսկ այդ կոնֆլիկտի արտաքին դրսևորումը կարող է լինել ինչպես դատական, այնպես էլ արտադատական ձևը:

Օրենսգրքի 3-րդ հոդվածը նախատեսում է քաղաքացիական իրավունքի սկզբունքները: Անխոս, այդ սկզբունքների մեջ էական դերակատարում ունի խախտված իրավունքների դատական պաշտպանության սկզբունքը: Սակայն, միևնույն ժամանակ նախատեսվում է քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության և խախտված իրավունքների վերականգնման ապահովման սկզբունքները: Վերջիններիս առկայությունն ուղղակի վկայում է այն մասին, որ քաղաքացիական իրավունքի սուբյեկտներն իրենց իրավունքներն **իրականացնելիս ու պաշտպանելիս չեն կաշկանդվում միայն դատական օժանդակությամբ:**

Մեր այս վերլուծությունները հիմք են տալիս ենթադրելու, որ որոշման մեջ նշված քաղաքացիաիրավական վեճը պետք է մեկնաբանել ավելի լայն: Չպետք է սահմանափակվել միայն վեճի դատավարական դրսևորմամբ: Այլ կերպ ասած՝ պարտադիր չէ, որ կողմը ներկայացնի որևէ դա-



տավարական փաստաթուղթ (օրինակ՝ հայցադիմումը վարույթ ընդունելու մասին դատարանի որոշումը), որպեսզի ոստիկանական միջամտություն չիրականացվի: Կողմերի վարքագծում դրսևորվող վեճն արդեն իսկ բավարար արգելք է դրա համար:

Հաջորդ խնդիրը կայանում է նրանում, թե ինչ բնույթի քաղաքացիաիրավական վեճի մասին է խոսքը: Ինչպես սահմանված է Որոշման 7-րդ կետի 3-րդ ենթակետում՝ անշարժ գույքի օրինական տիրապետողի պահանջն օրենքով սահմանված կարգով կողմերի միջև կնքված և տվյալ պահին գործող **քաղաքացիաիրավական կամ այլ պայմանագրից** կամ **ամուսնաընտանեկան** հարաբերություններից ծագող վեճ է: Ուստի հարց է առաջանում՝ եթե կողմերի միջև առկա է քաղաքացիաիրավական կամ դատավարական վեճ, որը ծագում է ոչ թե քաղաքացիաիրավական կամ այլ բնույթի պայմանագրից, այլ օրենքից, ապա ներխուժումը վերացնելու կամ արգելելու արգելք կա՞, թե՛ ոչ:

Օրինական տիրապետման համար որևէ նշանակություն չունի դրա ծագման հիմքը: Ուստի, եթե օրինական տիրապետումը կարող է հիմնվել օրենքի, վարչական ակտի կամ պայմանագրի վրա, ապա հետագայում համապատասխանաբար կարող է վիճարկվել այդ տիրապետման հիմք հանդիսացող և՛ օրենքը, և՛ վարչական ակտը, և՛ պայմանագիրը: Որոշմամբ գործադիրը՝ ոստիկանական միջամտության արգելք նախատեսելով կողմերի միջև առկա վեճի համար, առաջնորդվել է այն տրամաբանությամբ, որ ամբողջությամբ փարատված չեն կասկածներն առ այն, որ օրինական տիրապետում չկա կամ այն դադարել է: Անտրամաբանական է, որ գործադիրը նախատեսում է միայն վիճելի պայմանագրի առկայության պայմաններում ոստիկանական գործողությունների արգելքը: Ուստի կարծում ենք, որ այդ **արգելքի հիմք պետք է հանդիսանան նաև օրենքից և վարչական ակտից ծագող հարաբերությունների վիճարկումը:**

Մեր այս առաջարկությունը ներկայացնենք պրակտիկ օրինակով. մահանում է քաղաքացի Ա-ն, ով ունի երկու որդի՝ Բ և Գ: Բ-ն հոր մահից հետո օրենքով սահմանված ժամկետում դիմում է ներկայացնում ժառանգության բացման վայրի նոտարիատ և ընդունում է ժառանգությունը: Գ-ն նոտարիատ չի դիմում, սակայն ընդունում է ժառանգությունը փաստացի և դիմում է դատարան այդ փաստի հաստատման համար: Բ-ն, ձեռք բերելով գույքի նկատմամբ սեփականության վկայական, դիմում է ոստիկանություն՝ Գ-ի կողմից ներխուժումը վերացնելու համար: Այս իրավիճակում ակնհայտ է, որ կողմերի միջև կա քաղաքացիաիրավական վեճ, որը բխում է ոչ թե պայմանագրից, այլ օրենքից: Իսկ ներկայիս օրենսդրական կարգավորումների պարագայում օրենքից բխող վեճը ոստիկանական միջամտության արգելքի հիմք չի հանդիսանում, ինչը տրամաբանական չէ:

#### **4. Բնակելի տարածության օգտագործման իրավունքը որպես ոստիկանական միջամտության արգելք.**

Որոշման 7-րդ կետի 5-րդ ենթակետն արգելում է ոստիկանական միջամտությունը, **եթե անձը հանդիսանում է բնակելի տարածքն օրինական տիրապետող անձի անչափահաս երեխան:** Գործադիրը չի հստակեցնում, թե հատկապես ինչու է նման արգելք նախատեսել: Ենթադրում ենք, որ դրա հիմքում ընկած է բնակելի տարածության օգտագործման իրավունքը: Իսկ ո՞րն է դա: Հռոմեական իրավունքին հայտնի էր բնակելի տարածության օգտագործման քննարկվող իրավունքի նմանատիպը՝ ուրիշի «բնակելի տարածության (usus) սահմանափակ օգտագործման ունիվերսալ իրային իրավունք» անվանումով, որը դիտվում էր որպես անձնական սերվիտուտ [9; 108]: Օրենսգրքի 225-րդ մասի 1-ին մասի համաձայն՝ անձի բնակելի տարածության օգտագործման իրավունքն ուրիշի սեփականություն հանդիսացող բնակելի տարածությունում բնակվելու իրավունքն է: Անձի բնակելի տարածության օգտագործման իրավունքն անձի հետ անխզելիորեն կապված իրավունք է, որը չի կարող օտարվել, լինել գրավի, վարձակալության կամ անհատույց





օգտագործման ինքնուրույն առարկա, ինչպես նաև չի կարող փոխանցվել այլ անձի ժառանգաբար կամ իրավահաջորդության կարգով<sup>1</sup>:

Ամենևին չցանկանալով ընկղմվել այս իրավունքի շուրջ մեր օրենսդրության թերությունների և բացթողումների մեջ՝ քննարկվող իրավահարաբերությունների մասով կցանկանայինք ուշադրությունը սևեռել բնակելի տարածության օգտագործման իրավահարաբերությունների սուբյեկտներին: Ինդիրն այն է, որ որպես ելակետ վերցնելով այս իրավունքը՝ գործադիրը չգիտես ինչու սահմանափակվում է միայն օրինական տիրապետողի անչափահաս երեխայով: Բնակելի տարածության օգտագործման իրավունքը պատկանում է ոչ միայն անձի երեխային, այլ **ընտանիքի անդամներին**: Սրա մասին ուղղակիորեն նշվում է Օրենսգրքում, ավելին՝ նույնիսկ արվում է որոշակի թվարկում (Օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մաս): Այս ինստիտուտի հիմքում ընկած են ազգակցական կապերը: Եվ ինչպես իրավացիորեն նկատում է Ի.Բ. Նովիցկին, բնակարանային ոլորտում սեփականատիրոջ հետ ազգակցական կապերի կորուստն ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս անշարժ գույքի նկատմամբ ցանկացած իրավունքի կորստի [9; 108]: Կարծում ենք, որ Որոշումն այս մասով թերի է և կարիք ունի լրացման: Մասնավորապես, որպես ուստիկանական միջամտության արգելք պետք է լինի ոչ միայն անչափահաս երեխայի, այլև ընտանիքի մյուս անդամների բնակելի տարածության օգտագործման իրավունքը:

### **3. Եզրակացություն:**

Ընդհանրացնելով մեր կողմից կատարված վերլուծությունը՝ հանգում ենք հետևյալ եզրահանգման. ուստիկանությունն այս հարաբերություններում հանդես է գալիս որպես հանրային գործառույթներ կրող իրավակիրառ և իրավաօժանդակ մարմին, իսկ քննարկվող հարաբերությունները ունեն բացառապես մասնավոր-իրավական բնույթ: Մեր կողմից վերը ներկայացված թերությունները որքան հետևանք են թերի իրավական կարգավորումների, նույնքան էլ պայմանավորված են մասնավոր իրավահարաբերությունների դիսպոզիտիվության և կամքի ինքնավարության բնույթով: Հետևաբար, կարծում ենք, որ վերլուծվող իրավակարգավորումների նպատակահարմարությունը և հետագա գոյությունը քննադատության չի դիմանում մասնավոր գործերին կամայական միջամտության անթույլատրելիության սկզբունքի համատեքստում:

### **Գրականության ցանկ / Bibliography / Библиографический список**

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք / Տ. Բարսեղյան: Երևանի պետ. համալս.- չորրորդ հրատարակություն: Եր., «Տիգրան Մեծ» հրատ., 2014, Առաջին մաս. – 560 էջ:
2. Ванеева Л.А. Судебное познание в советском гражданском процессе /Л.А. Ванеева – Владивосток: Изд-во Дальневосточ. гос. ун-та, 1972. – 134 с.
3. Гражданское право. Учебник, часть 1, Изд-во Проспект, 2002. – 480 с.
4. Зайцев И.М. Функции иска в судопроизводстве / И.М. Зайцев // Государство и право, 1996, – № 7. С. 89-94.
5. Зарицкий Д. Некоторые аспекты правового спора, влияющие на подведомственность дел / Д. Зарицкий // Вестн. Высш. Хоз. Суда Респ. Беларусь. 2004, № 3. С. 115-127.

<sup>1</sup> Նույնաբովանդակ դրույթ են պարունակում նաև Գերմանիայի քաղաքացիական օրենսգրքի՝ «Բնակելի տարածության օգտագործման իրավունք» վերտառությամբ §1203-ի 2-րդ մասը, Ֆրանսիայի քաղաքացիական օրենսգրքի 632-րդ հոդվածը, Մոլդովայի քաղաքացիական օրենսգրքի 424-րդ հոդվածի 2-րդ կետը:



6. Зейдер Н.Б. Гражданские процессуальные отношения /Н.Б. Зейдер. - Саратов: Изд-во Саратов. ун-та, 1965. – 74 с.
7. Матиевский М.Д. Юридическая природа правового спора /М.Д. Матиевский // Тр. Всесоюз. юрид. заоч. ин-та. - 1977. – 206 с.
8. Морейн И.Б. К вопросу о понятии трудового спора /И.Б. Морейн // Изв. вузов. Правоведение. 1966, № 4 С. 85-93.
9. Новицкий И.Б. Основы римского гражданского права, М., Зерцало. 2000. – 400 с.
10. Побирченко, И.Г. Разрешение хозяйственных споров/ И.Г. Побирченко. – М.: Знание, 1980. – 48 с.
11. Чечина Н.А. Норма права и судебное решение /Н.А. Чечина. - Л.: Изд-во Ленинград. ун., 1961. – 78 с.

### Ամփոփագիր

Հետազոտությունը նվիրված է անշարժ գույքի պաշտպանության ոլորտում ոստիկանության գործառույթներին: Հոդվածում վերլուծվում են այդ իրավահարաբերությունների մասնավոր-իրավական հիմքերը, տեսակներն ու սահմանները: Վերլուծության արդյունքում քննարկվել են նշված ոլորտում մասնավոր իրավունքի կառուցակարգերը:

Հեղինակը մասնավորապես մատնանշում է իրավակարգավորման թերությունները և առաջարկություններ ներկայացնում դրանց վերացման համար:

### Annotation

This article is dedicated to the police functions in the field of real estate protection. In the research have been analyzed the private-legal grounds, types and boundaries of these legal relations. As a result of that analyze, the private-legal structure of that legal relations are discussed. In particular, the variability of legal and illegal possession and its impact on these relations are discussed. The nature of the illegal intrusion and the borders, especially the concept of physical intrusion and the existence of the intruder's property are discussed. The article presents the differences between the approaches in the theory of civil dispute. The features of legislative and contractual civil disputes are distinguished. The types of possession that may be based on an administrative act are discussed. The differences between substantive and procedural disputes are presented. All these allow us to better understand the situations in which illegal intrusion is valued. In the article the right to use living space, its concept, subjects and boundaries are discussed.

The latter, according to the author, can be a deterrent to police intervention. In the context of all this, the author also refers to the possibility of the police using force commensurate with the intrusion. The author, particularly, points out shortcomings of legal regulations and makes suggestions to overcome them.

### Аннотация

Данная статья посвящена функциям полиции в сфере защиты недвижимости. В статье анализируются частно-правовые основы, типы и границы этих правоотношений. В результате анализа обсуждаются частно-правовые конструкции в вышеупомянутой сфере. В частности, рас-



сматривается вариативность законного и незаконного владения и его влияние на эти отношения. Обсуждаются концепция и границы незаконного вторжения, особенно концепция физического вторжения при наличии собственности нарушителя. В статье представлены отличия подходов в теории гражданско-правового спора. Выделены особенности законодательных и договорных гражданских споров. Рассмотрены виды владения, которые могут быть основаны на административном акте. Представлены различия между материальным и судебным разбирательством. Все это позволяет лучше понять ситуации, в которых ценится незаконное вторжение. В статье рассматривается право пользования жилым помещением, его понятие, субъекты и границы. По мнению автора, последнее может стать препятствием для вмешательства полиции.

В контексте всего этого автор также ссылается на применение силы со стороны полиции, которая должна быть соизмерима с вторжением. В то же время автор указывает на недостатки правового регулирования и вносит предложения для их устранения.

**Հիմնաբառեր**<sup>1</sup> անշարժ գույք, օրինական տիրապետում, ներխուժում, ոստիկանություն, վտարում:

**Key words:** real estate, legal possession, civil dispute, invasion, police, expulsion.

**Ключевые слова:** недвижимость, законное владение, гражданско-правовой спор, вторжение, полиция, изгнание.



**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ / CIVIL PROCEDURE / ГРАЖДАНСКОЕ СУДОПРОИЗВОДСТВО**



**ՍՏԵՓԱՆՅԱՆ ՄԱՐԻԱՆՆԱ**

*Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի հայցորդ,  
ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության  
դատարանի դատավոր*

**STEPANYAN MARIANNA**

*Applicant of the Russian- Armenian University, Judge of the Court of General Jurisdiction of Ararat and Vayots Dzor Marzes of the Republic of Armenia*

**СТЕПАНИЯН МАРИАННА**

*соискатель Российско-Армянского (Славянского) университета,  
судья суда общей юрисдикции марзов Арарат и Вайоц Дзор  
Республики Армения*

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ  
ԲԱՐԵՆՂՃՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ\***

**THE RIGHT TO EXERCISE CIVIL PROCEDURAL RIGHTS IN THE CONTEXT OF THE PRINCIPLE OF GOOD FAITH\***

**ПРАВО ОСУЩЕСТВЛЯТЬ ГРАЖДАНСКИЕ ПРОЦЕССУАЛЬНЫЕ ПРАВА В КОНТЕКСТЕ ПРИНЦИПА ДОБРОСОВЕСТНОСТИ\***

**1. Ներածություն:**

Յուրաքանչյուր ոք, իրացնելով ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունքը, դիմելով դատարան, օժտվում է և այլ անձանց օժտում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված որոշակի դատավարական կարգավիճակով, որն էլ հանգեցնում է այդ կարգավիճակից բխող որոշակի դատավարական իրավունքների և պարտականությունների ծագման:

Սույն գիտական հոդվածի ուսումնասիրման առարկան քաղաքացիական դատավարության մասնակիցների կողմից իրենց դատավարական կարգավիճակից բխող իրավունքների և պարտականությունների իրացման սահմանների հնարավոր պարզումն է, նպատակը՝ առկա խնդիրների վերհանումը և լուծման տարբերակների ներկայացումը:

Իրավունքի իրացման չարաշահման անթույլատրելիությունը քաղաքացիական իրավահարաբերություններում իր ամրագրումն է ստացել դեռևս ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 12-րդ հոդվածում, որում ուղղակի նշվում է, որ քաղաքացիների և իրավաբանական անձանց այն **գործողությունները**, որոնք իրականացվում են բացառապես **այլ անձի վնաս պատճառելու** մտադրությամբ, ինչպես նաև **իրավունքն այլ ձևով չարաշահելը** չի թույլատրվում:

\* Հոդվածը ներկայացվել է 01.12.2021, գրախոսվել է 22.12.2021, ընդունվել է տպագրության 01.08.2022:

\* The article was presented 01.12.2021, was reviewed 22.12.2021, was accepted to publication 01.08.2022.

\* Статья представлена 01.12.2021, рецензирована 22.12.2021, принята в печать 01.08.2022.



Տվյալ դրույթի բովանդակությունից ուղղակի հետևում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը այլ անձին վնաս պատճառելը դիտել է որպես իրավունքի չարաշահման ձև, որը չի թույլատրվում:

Միաժամանակ գտնում են, որ «իրավունքն այլ ձևով չարաշահել» բառակապակցությունը մտորումների տեղիք է տալիս և կարող է մեկնաբանվել եռակի իմաստով՝

1) օրենսգիրքը նկատի է ունեցել ոչ միայն գործողության ձևով իրավունքը չարաշահելը, այլ նաև անգործությամբ,

2) նկատի է ունեցել բացի վնաս պատճառելուց նաև չարաշահման այլ եղանակ,

3) նախորդ երկուսը՝ միաժամանակ:

Եթե ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը խոսում է **չթույլատրվող** վարքագծի մասին, չարաշահումը դիտում է դրա դրսևորման եղանակ և այդ համակցությունը դիտել է որպես քաղաքացիական իրավունքների իրականացման սահմաններ, ապա ներկայումս գործող խմբագրությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը կատարել է առաջընթաց քայլ և ուղղակի նախատեսել է անձի՝ իր իրավունքներից օգտվելու բարեխղճության, այլ խոսքով իրավունքների չարաշահման **արգելքի սկզբունքը**: Ավելին, այդ նորմատիվ իրավական ակտն առաջինն է ՀՀ օրենսդրությունում, որում նախատեսվեցին նաև հետևանքներ և դրանց ուղղակի կիրառման միջոցներ:

Նախկին խմբագրությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը չէր նախատեսում դատավարական իրավունքների չարաշահման անթույլատրելիությունը որպես դատավարական կարգի սկզբունք, ինչը հանգեցնում էր դատավարության մասնակիցների կողմից իրենց դատավարական իրավունքների իրացման չարաշահման, իսկ դատարանը զրկված էր որևէ ներգործության միջոց կիրառելու իրավունքից: Նախկին խմբագրությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, դատավարության մասնակիցներին ընձեռելով իրավունքներով, չէր ամրագրել պարտականության մեխանիզմ, որը կուղղորդեր, թե այդ իրավունքներն ինչպես պետք է իրացվեն և ինչ հետևանքներ են նախատեսվում դրանց չարաշահման համար:

## **2. Հիմնական հետազոտություն:**

Բարեխղճությունը ամրագրելը՝ որպես քաղաքացիական դատավարության իրավունքի ինքնուրույն սկզբունք, նորամուծություն է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում և սկիզբ է դրել քաղաքացիական դատավարության մասնակիցների մոտ ոչ միայն իրենց դատավարական իրավունքների, այլև իրենց կողմից այդ իրավունքների իրացման «սահմանների» որոշակիացմանը:

Պատմական ակնարկ կատարելով «բարեխղճության»-ը՝ պետք է նշեմ, որ այն սկիզբ է առել և զարգացել է հռոմեական իրավունքից: Ուստի նախի ժողովածուում անդրադարձ է կատարվում բարեխղճությանը՝ որպես տարբեր իրավահարաբերությունների կարգավորման հիմք [4; նախատեսված է տարբեր կետերում, օրինակ՝ 50-րդ, 76-րդ, 200-րդ]:

Իրավունքի տեսության մեջ իրավունքի չարաշահումն արձանագրվում է, երբ առկա է, որպես կանոն, հետևյալ պայմանների համակցությունը՝

1) անձը պետք է ունենա համապատասխան իրավունքը,

2) իրավունքի չարաշահումը տեղի է ունենում սուբյեկտիվ իրավունքի իրացման ընթացքում, անձն առերևույթ գործում է իրավական կարգադրագրերին համապատասխան,

3) անձի՝ առերևույթ իրավաչափ գործողություններն հանգեցնում են պետության, հանրության կամ այլ անձանց օրինական շահերի խախտմանը, իսկ անձը ձգտում է հասնել իր համար ցանկալի արդյունքին կամ նպատակին,



4) իրավունքի չարաշահումը կամային գործընթաց է, այսինքն՝ անձը գիտակցում է, որ ինքն իր սուբյեկտիվ իրավունքը չարաշահում է, հետևաբար՝ պետք է կանխատեսի, որ կարող է վնաս պատճառել պետության, հանրության կամ այլ անձանց օրինական շահերին:

Այդ առումով իրավունքի չարաշահման առանձնահատկությունն այն է, երբ իրավունքի սուբյեկտն իր գործունեության ընթացքում գործում է իրավական կարգադրագրերին համապատասխան, կատարում է օրենքով իր վրա դրված ֆորմալ պարտականությունները, սակայն խեղաթյուրում է իրավունքի նշանակությունը՝ գործելով տվյալ իրավանորմի նպատակային նշանակությանը կամ իրավունքի նպատակին և ոգուն հակառակ, ինչի արդյունքում վնաս է հասցվում այլ անձին, պետությանը, հասարակությանը:

Ժան Լուի Բերժելը, համեմատելով իրավունքի տառը ոգու հետ, նշել է, որ «լինում են դեպքեր, երբ անձինք իրենց իրավունքները կիրառելիս դրանց տալիս են իրավաբանական ճշտություն, սակայն դրանք իրականացվում են այլ նպատակներով, քան վերջիններիս էությունը կամ գործառույթն է: Այլ կերպ պահպանվում է իրավունքի տառը, վնասվում ոգին: Հեղինակն ընդգծում է, որ հատկապես իրավունքի ոգին պետք է լինի ուշադրության կենտրոնում, քանզի ոգին է իրավունքի վերջնական նպատակը»: Շարունակելով միտքը՝ Բերժելն ընդգծում է, որ «անհրաժեշտ է համապատասխան արձագանք այն դեպքերին, երբ խեղվում է իրավունքի ոգին» [1; 441]:

Ըստ իս, բարեխղճությունը իրավունքի ոգին է, իսկ չարաշահումը՝ այն խեղաթյուրելու միջոց:

Բարեխղճության սկզբունքի ամրագրումը ոչ թե նորություն է ներկայիս տարբեր երկրների օրենսդրություններում, այլ հին գաղափարի նորովի ներկայացումն է, որը դեռևս հայտնի է եղել հռոմեական իրավունքում: Դեռևս այն ժամանակ դատավորին խորհուրդ էր տրվում գործը քննել *ex fide bona* (բարեխղճություն, արդարացի միջոց) սկզբունքով առաջնորդվելով, իսկ քաղաքացիական իրավահարաբերությունների մասնակիցներին սահմանել և իրականացնել իրենց փոխադարձ իրավունքներն այնպես, ինչպես ընդունված է արդարացի, բարեխիղճ մարդկանց մոտ [3; 125-126]:

Բարեխղճությունը տարբեր երկրներում նախատեսված է որպես առհասարակ քաղաքացիական իրավունքների իրացման սկզբունք, որի մասն է կազմում նաև սուբյեկտների՝ որպես քաղաքացիական դատավարության մասնակիցներին վերապահված քաղաքացիական իրավունքների իրացումը:

Հունաստանի Սահմանադրությամբ ամրագրված է, որ իրավունքների և ազատությունների պաշտպանությունն ուղղակիորեն կախված է նրանից, թե որքանով այդ իրավունքները և ազատությունները չեն խախտում Սահմանադրությունը և վարքագծի (բարի սովորույթները) կանոնները (11.06.1975 թվականին ընդունված Հունաստանի սահմանադրության 5-րդ հոդվածի 1-ին մաս <https://legalns.com/download/books/cons/greece.pdf>):

Հունաստանի քաղաքացիական օրենսգրքով օրինակ նախատեսված է, որ ցանկացած իրավունքի իրացում արգելվում է, եթե այն անցնում է բարեխղճության, բարոյականության և իրավունքի սոցիալ-տնտեսական նպատակների սահմանները (24.10.1984 թվականին ընդունված Հունաստանի քաղաքացիական օրենսգրքի 281-րդ հոդված):

Շվեյցարիայի՝ դեռևս 1907 թվականին ընդունված քաղաքացիական օրենսգրքով ամրագրված է, որ յուրաքանչյուր ոք պարտավոր է իր իրավունքներն իրացնել և պարտականությունները կատարել բարեխիղճ, և իրավունքների բացահայտ չարաշահումը չի պաշտպանվում օրենքով (10.12.1907 թվականին ընդունված Շվեյցարիայի քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մաս [https://www.fedlex.admin.ch/eli/cc/24/233\\_245\\_233/en](https://www.fedlex.admin.ch/eli/cc/24/233_245_233/en)):

Մի քանի օրինակ՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից իրավունքի չարաշահման դատավարական ընթացակարգերի մասով տրված գնահատականների վերաբերյալ:





Դիմումատուն ամբողջությամբ պատասխանատու է Դատարանում իր փաստաբանի կամ իրեն ներկայացնող այլ անձի վարքի համար: Ներկայացուցչի կողմից ցանկացած անգործություն վերագրվում է դիմումատուին և կարող է հանգեցնել գանգատի իրավունքի **չարաշահմամբ բերված լինելու հիմքով նրա գանգատի մերժմանը**: Դատարանի համար անհիմն աշխատանք առաջացնող, իր գործառույթներին հակասող, չհիմնավորված և մշտապես դժգոհություն արտահայտող բողոքների, ինչպես դիմումատուների կամ նրանց լիազոր ներկայացուցիչների ակնհայտորեն չարաշահող վարքի քննությունը Դատարանի խնդիրը չէ (Bekauri ընդդեմ Վրաստանի (նախնական առարկություններ), §§ 22-25, Migliore and Others ընդդեմ Իտալիայի (որոշում)):

Քաղաքացիական իրավահարաբերությունների մասնակիցների բարեխղճությամբ իրենց իրավունքներն իրացնելու կանոնին չենթարկվելու դեպքում անձի նկատմամբ կարող են կիրառվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված դատական սանկցիաներ կամ օրենքով նախատեսված իրավական ներգործության այլ միջոցներ միայն իրենց վերապահված դատավարական իրավունքների կամ այլ հնարավորությունների չարաշահում թույլ տալու դեպքում (14-րդ հոդվածի 2-րդ մաս)<sup>1</sup>:

Տնօրինչականության և դատավարական իրավունքների չարաշահման անթույլատրելիության՝ բարեխղճության սկզբունքը, նախատեսված լինելով որպես քաղաքացիական դատավարության իրականացման կարգի ինքնուրույն սկզբունք, կոչված է ապահովելու անձի հիմնարար իրավունքի՝ արդար դատաքննության իրացումը:

Ընդ որում, տնօրինչականության իրավունքը չի կարող իրականացվել կամայականորեն, դրա իրականացման կարգը պետք է սահմանված լինի օրենքով:

Սակայն, ի՞նչ ասել է իրավունքի չարաշահում և ի՞նչպես է այն դրսևորվում ու գնահատվում:

Այսպես, տեսության մեջ իհարկե կան տարբեր բնորոշումներ՝ տրված իրավունքի չարաշահմանը. որոշները այն դիտում են իրավախախտում, որոշները՝ իրավունքի սահմանազանցում՝ բնորոշելով այն որպես վնաս պատճառելու նպատակ (իրավունքի ոչ նպատակային օգտագործում) հետապնդող ոչ հիմնավոր և բավարար շահի առկայությամբ իրավունքի իրացում<sup>2</sup>:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով գործին մասնակցող անձանց տրված են իրավունքներ (38-րդ հոդված), սակայն յուրաքանչյուր իրավունքն իրացնելիս անձը պարտավոր է պահպանել դրա իրացման և օրենքով սահմանված այլ կարգերը:

Ընդ որում հատկանշական է, որ մասնագիտական գրականությունում սուբյեկտիվ իրավունքի չարաշահման առանցքային հատկանիշ է դիտվում վնասակար հետևանքի առաջացումը [2; 36]:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համակարգային վերլուծության արդյունքում կարելի է եզրակացնել, որ իրավունքի չարաշահումը պետք է բնորոշել որպես դատավարության մասնակցին օրենքով չարգելված (այն բխում է ՀՀ քաղ. դատ. օրենսգրքի 14-րդ հոդվածի 2-րդ մասում նշված «այլ հնարավորությունների» ձևակերպումից), ինչպես նաև օրենքով տրված իրավունքներից դիտավորությամբ կամ անզգուշությամբ, բայց գիտակցմամբ «թաքնված օգուտի» հասնելու համար անբարեխիղճ «օգտվելու» վարքագիծ: Այսինքն՝

<sup>1</sup> Հղումները վերաբերում են 09.04.2018 թվականին ընդունված ՀՀ քաղ. դատ. օրենսգրքին:

<sup>2</sup> Տեսաբանների կողմից տարբեր մոտեցումներ են նշվում (այդ թեմայի վերաբերյալ կարող եք նայել А.Я. Курбатов, А.С. Подмарков “Недопустимость злоупотребления правом как общеправовой принцип реализации прав”, Е. Ю. Маликов “Правовая природа злоупотреблений субъективным гражданским правом, автореферат”, А.А. Малиновский “Злоупотребление субъективным правом. (теоретико-правовое исследование)”), տրվում են իրավունքի չարաշահման հասկացությունները, բնորոշումները, կապը տարբեր այլ արտահայտությունների հետ, սակայն սույն աշխատանքի նպատակը նոր մոտեցման ներկայացումն է ներկայումս գործող քաղաքացիադատավարական իրավակարգավորումների համատեքստում:



- իրավունքն առկա է և/կամ երաշխավորված իրացման.
- իրավունքն իրացնող այն կրող սուբյեկտն է.
- ենթադրում է վարքագծի՝ գործողության դրսևորում (հնարավոր է նաև գործողության՝ անգործությանը դրսևորումը, որը նույնպես վարքագիծ է).
- առկա է գիտակցված նպատակ (այդ թվում՝ իրավունքից օգտվելու սահմանների սահմանազանցում).
- նպատակը հիմնականում առկա դատավարական ընթացակարգում հնարավոր առավել շահավետ իրավիճակում հայտնվելն է.
- շահավետությունը դրսևորվում է դատավարական ընթացակարգերով պայմանավորված նյութական և դատավարական առավելությունն ունենալու մեջ.
- հնարավոր է դատավարության մասնակիցների իրավունքների բախում.
- առաջ է գալիս դատական հեղինակության պաշտպանության խնդիր:

«Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակությունից և մեկնաբանությունից հետևում է, որ դատավարության մասնակիցները պետք է, պարտավոր են գործեն բարեխիղճ, որը և ամրագրված է որպես սկզբունք, որի խախտման բովանդակությունը կազմում է այդ իրավունքներից և պարտականություններից օգտվելու չարաշահումը, իսկ հետևանքը՝ չարաշահմանը համաչափ դատական սանկցիայի կամ **օրենքով նախատեսված ներգործության** այլ միջոցի կիրառումը: Այսինքն՝

- ներգործության այլ միջոցները հստակ պետք է նախատեսված լինեն օրենքով, կամ
- իրավունքի չարաշահումը դատարանի կողմից գնահատման ենթակա փաստ է:

<sup>2</sup> Section 298 [Interviewing a witness of minor age] (1) A minor person below the age of fourteen shall only be interviewed as a witness if the evidence expected from his testimony cannot be replaced in any other way. (2) On the occasion of interviewing a minor witness, his statutory representative may be present. During the interview, the warnings and information shall be communicated in an understandable manner, taking into account the age and degree of maturity of the minor witness. The interview shall be conducted in an atmosphere and manner that is suitable and understandable for the minor. (3) If a minor witness below the age of fourteen is interviewed, he shall be informed of his obligation to speak the truth instead of the consequences of perjury, in a manner that is understandable for him, considering his age and degree of maturity. If the witness is a minor below the age of fourteen, all statements on processing his personal data in a confidential manner and on refusing to give testimony shall be made by his statutory representative, and the right of appeal against the decision imposing an obligation to testify shall be exercised by his statutory representative. (4) If there is a conflict of interest between the minor witness and his statutory representative, an ad hoc guardian appointed by the guardianship authority at the court's request shall be entitled to the rights specified in paragraphs (2) and (3).



right to information was not regulated clearly in the civil procedure act. There are not precise, specialized provisions about how the child will be informed about the ongoing procedure concerning him or her, about the possibility of exercising the right to be heard, about the judge's ruling concerning him or her. These questions need to be answered as swiftly as possible, since the right to information is a precondition of the child's right to be heard. If this right cannot be exercised, the other rights of the child will become formalised, meaningless or dependent on subjective factors - the personality of the judge of the procedure. If the child is unaware that he or she has the right to express his or her views, he or she may lose the opportunity to participate in the proceeding. In this case, the minor's position remains undetected, the minor becoming the subject of the procedure, instead of becoming an active participant, the judge will rule over her/his head. The question, whether the child is capable of forming her or his own views, is also essential, but the discussion is already beyond the scope of this article.

### **3. Conclusion.**

After briefly examining UNCRC Article 12, reviewing the European concept of child-centred justice and the procedural rules of child-centred justice embodied in the Hungarian Civil Procedure Code, we can give rise the question: 'what is the significance of Article 12 in the Hungarian Civil Procedure Code?'

It is inevitable that Article 12 had a fundamental impact in defining the concept of child-centred justice, and it is also one of its most important elements. Whether the child-centred approach is more than the right to be heard itself and a set of technical rules for the hearing of a child, would be the subject of a separate study.

What is certain, as a rule, without hearing the child, we can not talk about child-centered justice, because the most essential, irreplaceable element of the system would be violated. Does this central element - without which there would be no procedural rules for the hearing of a child- appear expressis verbis in the Hungarian Civil Procedure Code? If we examine the legal provisions concerning the hearing of a minor, it becomes clear that procedural law does not state that children have the right to be heard in cases concerning them, although regulates this specific right in detail. I take the view that this implicitly guarantees children's right to be heard. Wonder whether an explicit declaration of the right would be required in the procedural rules? Or the current civil rule, which states that 'the court decides whether to hear the minor as an interested party or not ' is sufficient? In other words, it is now under the jurisdiction of the judge whether or not to hear the child. Which in my view already pushes the question on the field of the application of substantive law. All the more so as there are substantive law provisions on the cases of the hearing of a child. Sections 4:171 (4) and 4:181 (1) of Act V of 2013 of the Hungarian Civil Code regulate the hearing of the child and hearing of the child who is capable of forming his or her own views. The latter case hearing is an obligation for the court, since Section 4:171(4) of the Hungarian Civil Code expressly states that 'in justified cases, or if requested by the child him/herself, the court shall hear the child as well either personally or through an expert.' How would the child know that she/he could ask for her/his own hearing? Having regard the fact that statutory provisions on the right to information of the right to be heard do not exist neither in substantive nor in procedure law. A solution to this apparent regulatory gap could be the training of family law judges<sup>1</sup>. The idea should not be rejected, all the more so since the third paragraph of point 49 of the General Comment on Article 12 requires training on Article 12 and its practical application to be provided to professionals dealing with such matters. Well-trained judges

---

<sup>1</sup> In Hungary there are appropriate trainings for family judges concerning this issue.



may potentiate the absence of this provision. This could only be answered by practice.<sup>1</sup> However, the solution may not be either to amend the legislation or to train professionals. An alternative may be the so-called Kinderrechtswinkels system (Children's Rights Shop). Independent 'shops' already operating in Belgium since 1987 provide a wide range of free information to children about their rights, including their procedural rights. (12) Finally it should be noted that, this issue requires a solution.

### Գրականության ցանկ / Bibliography / Библиографический список

1. Act CXXX of 2016 on the Code of Civil Procedure.
2. Communication from the Commission - Towards an EU strategy on the rights of the child {SEC(2006) 888} {SEC(2006) 889} /\* COM/2006/0367 final \*/ <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/HTML/?uri=CELEX:52006DC0367&from=HU>
3. EU Children's Agenda Brussels, 15.02.2011 // <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/HTML/?uri=CELEX:52011DC0060&from=EN> (Download: 16 Jan. 2020).
4. European Convention on the Exercise of Children's Rights (ETS No. 160) // <https://www.coe.int/en/web/conventions/full-list?module=treaty-detail&treaty-num=160> (Download: 20 Nov. 2021).
5. EU guidelines on the rights of the child 2007 EUR-Lex - I33604 - EN - EUR-Lex (europa.eu) (Download: 20 Nov. 2021).
6. Nikoletta Faix: The international aspect of the development of juvenile justice, 2016 // <https://jogaszvilag.hu/szakma/a-gyermekbarat-igazsagszolgalatas-kialakulasa-es-fejlodes-a-nemzetkozi-jogalkotasban/> (Download: 16 Jan. 2020).
7. General Comment No.12 <https://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/AdvanceVersions/CRC-C-GC-12.pdf> Point 1/2 (Download: 25 Oct. 2020).
8. Geneva Declaration // <http://www.un-documents.net/gdrc1924.htm> (Download: 4 Dec. 2020.)

<sup>1</sup> Section 4:171 [Action brought in disputes in connection with the exercise of certain rights of custody and with the third-party placement of a child]:

(1) An action may be brought in disputes in connection with changes in exercising certain rights of custody and with the third-party placement of a child, or for the modification of placement by the parent and by the guardian authority.

(2) With the exception set out in Subsection (3), the action shall be brought by either parent against the other parent, or by the guardian authority against both parents.

(3) An action for the modification of placement with a third party shall be brought against the person with whom the child has been placed.

(4) During the action the court shall hear both parents, except if any insurmountable obstacles exist. In justified cases, or if requested by the child him/herself, the court shall hear the child as well either personally or through an expert. If the child is over the age of fourteen years, the decision relating to custody and his/her placement can be made upon the child's agreement, except when the child's choice is considered to jeopardize his/her development.

Relating to the removal of the child shall be covered by the person exercising visitation rights.

According to the Civil Code Section 4:181 [Agreement on visitation rights]:

(1) In a matrimonial suit or in an action brought in connection with the exercise of certain rights of custody the parents may reach an agreement relating to visitation rights; in the absence thereof the court shall decide - upon request or ex officio if deemed necessary for the protection of the child's interest - about visitation rights. If there is no matrimonial suit or action in connection with the exercise of certain rights of custody in progress, in the absence of the parents agreement on visitation rights the decision lies with the guardian authority. The parties concerned and the child of sound mind shall be heard before such decision is made.





9. Szilvia Gyurkó: Child-friendly justice page 107-117 // [http://www.okri.hu/images/stories/KT/KT\\_49\\_2012/007\\_gyurko.pdf](http://www.okri.hu/images/stories/KT/KT_49_2012/007_gyurko.pdf) (Download: 31 Dec. 2020).
10. Guidelines of the Council of Europe Committee of Ministers on child-friendly justice Council of Europe / European Union 2012 // <https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016806a4541> (Download: 16 January 2020).
11. Janus Korczak : The Child’s Right to Respect, Council of Europe 2009 <https://rm.coe.int/janusz-korczak-the-child-s-right-to-respect/16807ba985> page 5 page 5 (Download: 04 December 2020).
12. Publication Child participation handbook for Professionals <https://rm.coe.int/publication-child-participation-handbook-for-professionals-final-eng/1680a069f439> (Download: 07 Dec. 2020).
13. Report on the activities of the Commissioner for Fundamental Rights and his deputies in 2012, Office of the Commissioner for Fundamental Rights, Budapest 2013 // <http://www.ajbh.hu/documents/10180/129110/AJBH+Besz%C3%A1mol%C3%B3%202012/9215dc04-4031-451e-b79c-eff2e2e63925?version=1.1> 111-139. (Download: 16 January 2020).
14. RESOLUTION No. 2 on child-friendly justice // <https://rm.coe.int/1680694596> (Download: 17 January 2020).
15. Who was Eglantyne Jebb? // <https://www.savethechildren.org/us/about-us/why-save-the-children/eglantyne-jebb> (Download: 4. December 2020).

### Ամփոփողի

Հեղինակի հետազոտությունը երկու նպատակ է հետապնդում, առաջինը՝ համառոտ ներկայացնել «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ կոնվենցիայի 12 հոդվածն ու երեխաների արդարադատության մատչելիության կարևորությունը, երկրորդը՝ մեկնաբանել Հունգարիայի քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան կանոնները:

Հեղինակը նշում է, որ երեխաներն առնչվում են արդարադատության համակարգի հետ տարբեր առիթներով և եղանակներով: «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ կոնվենցիայի 12-րդ հոդվածի համաձայն՝ երեխաներն իրավունք ունեն արտահայտելու իրենց կարծիքը, և այդ կարծիքները պետք է ունկնդրվեն և լրջորեն ընդունվեն դատավարությունների ընթացքում: Փաստորեն, «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ կոնվենցիայի 12-րդ հոդվածը երեխաների համար մատչելի արդարադատության հիմնաքարն է:

Գրեթե երկու տասնամյակ անց Եվրոպայի խորհուրդը ստեղծեց երեխաների համար մատչելի արդարադատության ուղեցույցները: Հեղինակն արձանագրում է, որ թվարկված երկու հիմնական բաղադրիչներն իրենց արտացոլումն են գտել նաև Հունգարիայի քաղաքացիական դատավարության օրենսգրքում:

### Annotation

This paper research sets two aims: briefly introduces the Art 12 of UNCRC and the importance of child-friendly justice, secondly outlines the corresponding rules in the Hungarian Code of Civil Procedure.

The author points out that children come into contact with the justice system in many different occasions and ways. Article 12 UNCRC provides that children have the right to express their opinion and these opinions have to be heard and taken seriously during the proceedings. The UNCRC Article 12 is the cornerstone of child-friendly justice.



---

Almost two decades later the Council of Europe created the guidelines of child-friendly justice. The author points out these two above mentioned major components are envisaged by the Hungarian Civil Procedure Code.

### Аннотация

Данное исследование преследует две цели: кратко представить статью 12 Конвенции ООН «О правах ребенка» и важность правосудия, учитывающего интересы детей, и обрисовать соответствующие нормы Гражданско-процессуального кодекса Венгрии.

Автор указывает, что дети вступают в контакт с системой правосудия по разным поводам и разными способами. В статье 12 Конвенции ООН «О правах ребенка» ребенка предусмотрено, что дети имеют право выражать свое мнение, и это мнение должно быть услышано и принято во внимание в ходе разбирательства. Таким образом, статья 12 упомянутой Конвенции является краеугольным камнем правосудия, ориентированного на детей.

Почти два десятилетия спустя Совет Европы разработал руководящие принципы правосудия, учитывающего интересы детей.

Автор фиксирует, что вышеуказанные два основных компонента нашли свое отражение в Гражданско-процессуальном кодексе Венгрии.

**Բանալի բաներ՝** «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ կոնվենցիայի 12-րդ հոդված, երեխաների համար մատչելի արդարադատություն, լսվելու իրավունք, Հունգարիայի քաղաքացիական դատավարության օրենսգիրք:

**Key words:** UNCRC Article 12, child-friendly justice, right to be heard, the Civil Procedural Code of Hungary.

**Ключевые слова:** Статья 12 Конвенции ООН «О правах ребенка», доступное правосудие для детей, право быть услышанным, Гражданско-процессуальный кодекс Венгрии.



**ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ / CRIMINAL PROCEDURE / УГОЛОВНОЕ СУДОПРОИЗВОДСТВО****ՄԵԼԻԿՅԱՆ ԳԱՅԱՆԵ**

ՀՀ գլխավոր դատախազության միջազգային իրավական համագործակցության վարչության դատախազ, Երևանի պետական համալսարանի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ասպիրանտ

**MELIKYAN GAYANE**

Prosecutor of the Prosecutor General's Office of the Republic of Armenia Department of International-Legal Cooperation, postgraduate student of the Yerevan State University Chair of Criminal Procedure and criminalistics

**МЕЛИКЯН ГАЯНЕ**

прокурор Управления международно-правового сотрудничества Генеральной прокуратуры РА, аспирант кафедры уголовного процесса и криминалистики Ереванского государственного университета

**«ՄԻԱՅՆ ԱՅՆ ՀԱՆՑԱՆՔԻ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼԸ, ՈՐԸ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԲԱՎԱՐԱՐԵԼՈՒ ՀԻՄՔ Է ՀԱՆԴԻՍԱՑԵԼ» ՍԿԶԲՈՒՆՔԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՁԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ\*****ESSENCE AND MAIN FEATURES OF THE PRINCIPLE OF «BRINGING TO RESPONSIBILITY ONLY FOR CRIMES FOR WHICH EXTRADITION IS SATISFIED (THE PRINCIPLE OF SPECIALTY)»\*****СУЩНОСТЬ И ОСНОВНЫЕ ОСОБЕННОСТИ ПРИНЦИПА «ПРИВЛЕЧЕНИЯ К ОТВЕТСТВЕННОСТИ ЛИШЬ ЗА ПРЕСТУПЛЕНИЕ, КОТОРОЕ ПОСЛУЖИЛО ОСНОВАНИЕМ ДЛЯ ВЫДАЧИ (ПРИНЦИПА СПЕЦИАЛИЗАЦИИ)»\*****1. Ներածություն:**

Սույն հետազոտական աշխատանքը նվիրված է հանձնման ինստիտուտի կարևոր սկզբունքներից մեկի՝ «միայն այն հանցագործությունների համար պատասխանատվություն ենթարկելը, որոնց համար անձի հանձնումը բավարարվել է» բացահայտմանը, դրա առանձնահատկությունների վերհանմանը, քննարկվող սկզբունքի կիրառման կապակցությամբ ոչ միատեսակ պրակտիկայի ձևավորմանը, ինչպես նաև կիրառման առանձնահատկություններին ՀՀ իրավական համակարգում:

Նկատի ունենալով վերոնշյալ սկզբունքի պահպանման կարևորությունը մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից՝ աշխատանքում ներկայացված են նաև սկզբունքի պահպանմանը վերաբերող համապատասխան եզրահանգումներ:

**2. Հիմնական հետազոտություն:**

1954 թվականի մայիսի 5-ին Եվրոպայի խորհրդի իրավական և վարչական հարցերով կոմիտեն ներկայացրեց զեկույց, որն իր մեջ բովանդակում էր հանձնման մասին կոնվենցիայի նա-

\* Հոդվածը ներկայացվել է 10.05.2022, գրախոսվել է 31.05.2022, ընդունվել է տպագրության 01.08.2022:

\* The article was presented 10.05.2022, was reviewed 31.05.2022, was accepted to publication 01.08.2022.

\* Статья представлена 10.05.2022, рецензирована 31.05.2022, принята в печать 01.08.2022.



խագիծ, որը պետք է ծառայեր որպես հիմք Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների միջև բազմակողմ կոնվենցիայի ստեղծմանը վերաբերող հետագա քննարկումների համար [1]: Նկատի ունենալով, որ Կոնվենցիայի նպատակներից էր հանձնմանը վերաբերող հարցերի վերաբերյալ միատեսակ կարգավորումների սահմանումը Եվրոպայի խորհրդի անդամ-պետությունների համար՝ հետևաբար, անհրաժեշտ էր ձեռք բերել ընդհանուր համաձայնություն առնվազն հետևյալ հարցերի շուրջ՝

- արդյոք կոնվենցիայի անդամները համապատասխան պայմաններում պարտավորված են լինելու բավարարել հանձնման միջնորդությունը, թե նման որոշման կայացումը թողնված պետք է լինի պետությունների հայեցողությանը, այլ խոսքով, հանձնումը պետք է կրեր իմպերատիվ, թե դիսպոզիտիվ բնույթ,
- արդյոք քաղաքական բնույթի հանցագործություններ պետք է սահմանվեն կոնվենցիայով, թե նման հանցագործությունների սահմանումը պետք է թողնվեր հայցվող պետություններին՝ նկատի ունենալով վերջիններիս ազգային օրենսդրությունը, և արդյոք քաղաքական բնույթի հանցագործությունների համար հանձնման մերժումը պետք է լիներ բացարձակ, թե դիսպոզիտիվությունը կարող էր գերակշռել հայցվող պետությունում,
- արդյոք կոնվենցիայի անդամները պետք է հնարավորություն ունենային տարբերակելու իրենց և օտարերկրյա քաղաքացիների միջև, թե հանձնման միջնորդությունները պետք է քննարկվեին առանց հաշվի առնելու հանձնման ենթակա անձանց քաղաքացիության պատկանելության հանգամանքը,
- արդյոք կանոնն առ այն, որ անձը կարող է քրեական հետապնդման ենթարկվել միայն այն հանցագործության համար, որի համար հանձնումը բավարարվել է (principle of speciality) պետք է պահպանվեր բոլոր դեպքերում, թե դրա պահպանումը կարող էր կախված լինել հայցվող պետությունից կամ հանձնման ենթակա անձից,
- արդյոք անձը պետք է ձեռք բերի իմունիտետ հանձնման հիմքը կազմող այն հանցագործությունների համար, որոնց համար քրեական հետապնդման վաղեմության ժամկետներն անցած լինեն հայցող կամ հայցվող պետությունում, կամ էլ երկուսում էլ,
- արդյոք անձը կարող էր ենթարկվել մահապատժի հայցող պետության օրենսդրությամբ, եթե նման պատիժ սահմանված չլիներ հայցվող պետության օրենսդրությամբ,
- նույն անձի նկատմամբ հանձնման միջնորդություն ներկայացրած երկու պետություններից, որ մեկը պետք է ունենար նախապատվություն,
- որոնք պետք է լինեին իր պետության տարածքով տարանցում թույլ տված պետության իրավունքներն ու պարտականությունները,
- և վերջապես, լայն համաձայնություն պետք է ձեռք բերվեր հանձնման առարկա հանդիսացող հանցագործությունների վերաբերյալ:

Ըստ էության, վերը ներկայացված հարցերն իրենց լուծումն են գտել Կոնվենցիայում, սակայն առավել մանրամասն սույն հոդվածում կցանկանայինք անդրադառնալ, այսպես կոչված Principle of Speciality սկզբունքին:

Կոնվենցիայի 14-րդ հոդվածի համաձայն՝ «Այն անձը, որը հանձնվել է, չպետք է ենթարկվի քրեական հետապնդման, դատապարտվի կամ կալանավորվի որևէ հանցագործության համար, որը նա կատարել է մինչև հանձնումը, բացառությամբ այն հանցագործության, որի կատարման համար նրան հանձնել են, և նրա անձնական ազատությունը չպետք է սահմանափակվի, բացառությամբ...»:

Համանման կարգավորում նախատեսված է նաև ինչպես «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» Մինսկի 1993թ. կոնվենցիայի 66-րդ հոդվածով (որի համաձայն՝ առանց հարցվող պայմանավորվող



կողմի համաձայնության՝ հանձնված անձին չի կարելի քրեական պատասխանատվության կամ պատժի ենթարկել մինչև հանձնելը նրա կատարած այն հանցագործության համար, որի կապակցությամբ նա չի հանձնվել), «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» Քիշնևի 2002թ. կոնվենցիայի 80-րդ հոդվածի 1-ին մասով, այնպես էլ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 499-րդ հոդվածով, որի 1-ին մասի համաձայն՝ եթե սույն գլխի նորմերով սահմանված կարգով անձը Հայաստանի Հանրապետության դատարանի, դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի իրավասությանն է հանձնվել նրա նկատմամբ քրեական հետապնդում սկսելու կամ շարունակելու կամ դատավճիռն ի կատար ածելու համար, ապա առանց հանձնումը թույլատրած համապատասխան օտարերկրյա պետության իրավասու մարմնի համաձայնության՝ այդ անձը չի կարող քրեական պատասխանատվության և պատժի ենթարկվել մինչև նրան հանձնելը կատարած այն հանցագործության համար, որով նա չի հանձնվել:

Չնայած գոյություն ունեցող հստակ կարգավորումներին՝ Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ մտելուց կարճ ժամանակ անց, ՀՀ իրավապահ մարմինների և դատարանների կողմից թույլ էին տրվում քննարկվող սկզբունքի համատարած խախտումներ, որոնց բազմիցս անդրադարձել է ՀՀ վճռաբեկ դատարանը իր կողմից կայացվող որոշումներում:

Այսպես, ՀՀ վճռաբեկ դատարանի 2006 թվականի հոկտեմբերի 13-ի ՎԲ-234-06 որոշման համաձայն՝ Հասմիկ Կուրդինյանին առաջադրված է եղել մեղադրանք ՀՀ 1961 թվականի քրեական օրենսգրքի 89-րդ հոդվածի առաջին մասով, վերջինիս ՀՀ տեղափոխելուց և արարքը 2003 թվականի ՀՀ քրեական օրենսգրքին համապատասխանեցնելուց հետո, մեղադրանք են առաջադրել, ոչ թե ՀՀ քրեական 178-րդ հոդվածի առաջին մասով, որը կհամապատասխաներ 1961 թվականի քրեական օրենսգրքի 89-րդ հոդվածի առաջին մասին, այլ 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետին՝ մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ խարդախություն կատարելու համար, որով էլ վերջինս մեղավոր է ճանաչվել առաջին ատյանի դատարանի կողմից, իսկ Վերաքննիչ դատարանը ստորադաս դատարանի ակտը թողել է անփոփոխ:

Անդրադառնալով նշված գործին՝ Վճռաբեկ դատարանը գտել է, «որ գործի քննության ընթացքում միջազգային պայմանագրի ոչ ճիշտ կիրառումը՝ 22.01.1993թ. Մինսկի կոնվենցիայի 66-րդ հոդվածի 1-ին մասի չկիրառումը, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 3-րդ, 480-րդ և 499-րդ հոդվածների խախտումները, որոնք ազդել են դատավճռի օրինականության վրա, նույն օրենսգրքի 406-րդ հոդվածի 2-րդ մասի, 397-րդ և 398-րդ հոդվածների համաձայն, հիմք են հանդիսանում Հասմիկ Գուրգենի Կուրդինյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2005թ. մարտի 18-ի և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2005թ. հունիսի 1-ի դատավճիռները բեկանելու և փոփոխելու համար...» (ՀՀ վճռաբեկ դատարանի 2006 թվականի հոկտեմբերի 13-ի ՎԲ-234-06 գործով որոշում):

ՀՀ վճռաբեկ դատարանի մեկ այլ՝ 2006 թվականի նոյեմբերի 24-ի ՎԲ-271/06 գործով որոշմամբ դատարանը եզրահանգել է, որ «Գործի նյութերով հիմնավորվել է, որ ՌԴ դատախազությունը բավարարել է ծանրացուցիչ հանգամանքներում դիտավորյալ սպանություն կատարելու մեջ մեղադրվող Մ.Միքայելյանին հանձնելու մասին ՀՀ գլխավոր դատախազության խնդրանքը: Գործի հետագա քննության ժամանակ նախաքննության մարմինը նրան մեղադրանք է առաջադրել նաև ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով, որով Մ. Միքայելյանը հանձնված չի եղել, և նա քրեական պատասխանատվության ու պատժի է ենթարկվել նաև այդ հոդվածով: Դրանով խախտվել են 1993թ. հունվարի 22-ի Մինսկի կոնվենցիայի 66-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 3-րդ, 480-րդ և 499-րդ



հողվածների պահանջները, թույլ է տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հողվածով նախատեսված միջազգային պայմանագրի ոչ ճիշտ կիրառում, որոնք, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հողվածի, 406-րդ հողվածի 2-րդ մասի համաձայն, հիմք են Մ. Միքայելյանի վերաբերյալ դատավճիռները ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հողվածի 2-րդ մասի 4-րդ կետով բեկանելու համար (ՀՀ վճռաբեկ դատարանի 2006 թվականի նոյեմբերի 24-ի ՎԲ-271/06 գործով որոշում):

Մեկ այլ՝ 2006 թվականի նոյեմբերի 24-ի ՎԲ-279-06 գործով որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ ՌԴ գլխավոր դատախազի տեղակալն իր գրությամբ (գ.թ.178) հայտնել է, որ ծանրացուցիչ հանգամանքներում բնակարանի անձեռնմխելիությունը խախտելու համար քրեական պատասխանատվության ենթարկելու նպատակով Սպարտակ Ալավերդյանին հանձնելու մասին ՀՀ գլխավոր դատախազության միջնորդությունը բավարարվել է, իսկ դիտավորությամբ առողջությանը թեթև մարմնական վնաս պատճառելու մեղադրանքի մասով Ս.Ալավերդյանը հանձնման ենթակա չէ, քանի որ ՌԴ օրենսդրությամբ այդ հանցագործության համար ազատազրկման ձևով պատիժ նախատեսված չէ: Լոռու մարզի առաջին ատյանի դատարանը, անտեսելով այդ հանգամանքը, 2005թ. հուլիսի 18-ի դատավճիռով Սպարտակ Ալավերդյանին մեղավոր է ճանաչել և դատապարտել ինչպես ՀՀ քրեական օրենսգրքի 147-րդ հողվածի 2-րդ մասով, այնպես էլ ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հողվածով՝ դիտավորությամբ առողջությանը թեթև վնաս պատճառելու համար: Փաստորեն, տվյալ դեպքում Սպարտակ Ալավերդյանը ենթարկվել է քրեական պատասխանատվության և պատժի՝ մինչև հանձնելը կատարած այն հանցագործության համար, որի համար նա չի հանձնվել, այսինքն՝ տեղի է ունեցել միջազգային պայմանագրի և ներպետական օրենսդրության նորմերի խախտում (...) որը հիմք է հանդիսանում Սպարտակ Ալավերդյանի վերաբերյալ Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի 2005թ. հուլիսի 18-ի դատավճիռը ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հողվածով բեկանելու և քրեական հետապնդումը դադարեցնելու համար (Օրինակ՝ ՀՀ վճռաբեկ դատարանի 2006 թվականի նոյեմբերի 24-ի ՎԲ-279-06 գործով որոշում, 2006 թվականի դեկտեմբերի 22-ի ՎԲ-293/06 որոշում, 2006 թվականի դեկտեմբերի 22-ի ՎԲ-320/06 որոշում և այլն):

Ինչպես վերը ներկայացված ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներից, այնպես էլ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 499-րդ հողվածի, Մինսկի Կոնվենցիայի, 66-րդ հողվածի և Եվրոպական Կոնվենցիայի 14-րդ հողվածից, պարզ է դառնում, որ յուրաքանչյուր դեպքում, երբ անձի հանձնումը բավարարվում է կոնկրետ հողվածներով, նախկինում կատարված արարքների համար մեղադրանքի առաջադրումը և փոփոխությունը պետք է կատարվի հայցվող պետության համաձայնությամբ:

Եթե վերը ներկայացված ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումներից, ինչպես նաև կոնվենցիաների մեկնաբանությունից միանշանակ է, որ մինչև հանձնումը կատարված արարքների համար անձը չի կարող ենթարկվել պատասխանատվության կամ պատժի առանց հանձնումը բավարարած պետության համաձայնության, ապա հարց է առաջանում, ինչպես պետք է վարվել այն դեպքերում, երբ անձին առաջադրված մեղադրանքը փոփոխվում է (ինչպես փաստական հանգամանքները, այնպես էլ արարքի քրեաիրավական գնահատականը), վերջինիս հանձնումը բավարարվելուց և էտապավորվելուց հետո:

Այսպես, ի տարբերություն Մինսկի կոնվենցիայի, «Հանձնման մասին» Եվրոպական կոնվենցիայի 14-րդ հողվածի 3-րդ մասը սահմանում է, որ «Երբ հանցագործության նկարագրությունը, որի համար ներկայացվել է մեղադրանք, փոխվում է դատավարության ընթացքում, հանձնված անձի նկատմամբ պետք է մեղադրանք առաջադրվի կամ դատավճիռ կայացվի այն չափով, որքանով տվյալ հանցագործության նկատմամբ՝ իր նոր նկարագրությամբ և բաղադրատարրերով, հանձնումը կիրառվում է»:



Ընդ որում, մեղադրանքի փոփոխության դեպքում կոնվենցիայում նշված չէ, արդյոք պետությունը պարտավոր է համաձայնություն ստանալ հայցվող պետությունից, թե այն հանգամանքը, որ մեղադրանքի փոփոխության դեպքում արարքի նկատմամբ միևնույն է իր նկարագրությամբ և բաղադրատարրերով հանձնումը կիրառելի է, բավարար է անձին պատասխանատվության ենթարկելու համար:

Ընդ որում, վերը ներկայացվածը, եթե ինչ-որ չափով ընկալելի է մեղսագրվող արարքի ծանրացման դեպքում, ելնելով նրանից, որ ծանրացման դեպքում արարքը հանձնման ենթակա արարքների շարքին դասվելու հավանականությունն ավելի բարձր է, հարց է առաջանում՝ իսկ ինչպես պետք է վարվել արարքի մեղմացման դեպքում:

«Հանձնման մասին» 1957 թվականի կոնվենցիայի պաշտոնական մեկնաբանության համաձայն՝ Կոնվենցիայի 14-րդ հոդվածի 3-րդ կետը մեկնաբանվում է հետևյալ կերպ՝ քննարկվող հոդվածի երրորդ կետում նկատի են առնվում այն դեպքերը, երբ արարքի նկարագրությունը փոփոխվում է քննության ընթացքում: Օրինակ՝ երբ հանձնումը բավարարվում է դիտավորյալ սպանության համար (murder), բայց անձը պատասխանատվության է ենթարկվում անզգուշությամբ մահ պատճառելու համար: Կոմիտեն եկել է այն եզրահանգման, որ նման փոփոխությունը թույլատրելի է բացառապես այն դեպքերում, երբ արարքի նոր նկարագրությունը իր հիմնական բաղադրատարրերով, ցույց է տալիս, որ դա այնպիսի հանցագործություն է, որի համար անձի վերաբերյալ հանձնման միջնորդություն ներկայացնելիս այն ենթական կլիներ բավարարման [2]:

Կոնվենցիայի 14-րդ հոդվածի քննարկվող մասի մեկ այլ մեկնաբանության համաձայն՝ հայցվող պետությունը կարող է կանխատեսել, որ հայցող պետությունը ազատ է անձին մեղադրանք առաջադրելու այնպիսի արարքի համար, որը ենթադրում է հանձնում և առաջադրվել է այն փաստական հանգամանքների համատեքստում, որի համար հայցվող պետությունը բավարարել է հանձնումը, և որը նախատեսում է այդ միջնորդությունը բավարարած հանցագործության համար նախատեսված **պատժին հավասար կամ ավելի մեղմ պատժի**: Նկատի ունենալով, որ առանձին պետությունների ներպետական օրենսդրությունը հնարավորություն է տալիս փոփոխելու մեղադրանքը մինչև դատաքննության փուլը կամ հենց դատաքննության ընթացքում, հետևաբար, եթե այդ փոփոխությունը կկատարվի նախնական փաստական հանգամանքների հիման վրա, ապա դա հայցող պետությանը թույլ կտա առանց ուղղակի համաձայնություն ստանալու կիրառել իր ներպետական ընթացակարգերը: Այսպիսի դեպքերում հայցվող պետությունը պետք է համոզված լինի, որ նոր և նախորդ մեղադրանքի հիմքում դրված փաստական հանգամանքները նույնն են [3; 53]:

Հատկանշական է, որ վերը ներկայացված մեկնաբանությամբ ակնարկ է արվում, որ հավասար կամ ավելի մեղմ պատժի դեպքում անձը կարող է ենթարկվել պատասխանատվության առանց հայցվող պետության համաձայնության, միևնույն ժամանակ նշվում է, որ անհրաժեշտ է հայցվող պետության համոզվածությունն առ այն, որ մեղադրանքը փոփոխվել է նախկին փաստական հանգամանքների հիման վրա:

Քննարկենք դատաիրավական պրակտիկայից մի քանի դեպք:

Այսպես, թիվ ԵԴ/1076/01/20 քրեական գործով դատարանն արձանագրում է, որ նախաքննական մարմնի 14.12.2018թ. որոշմամբ Ն. Ա.-ն ներգրավել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ և 7-րդ կետերով և նշված հանցագործությունների կատարման համար է Ն.Ա.-ն հանձնվել Հայաստանի Հանրապետությանը (հիմք՝ դատական նիստի ընթացքում մեղադրողի կողմից ներկայացված Չեխիայի Հանրապետության արդարադատության նախարարության գրությունը հասցեագրված ՀՀ գլխավոր





դատախազությանը): Դատարանը նաև արձանագրում է, որ թեև Ն. Ս. -ին Հայաստանի Հանրապետությանը հանձնելուց հետո՝ 23.09.2020թ. վերջինիս առաջադրած մեղադրանքը փոփոխվել է և նրան կրկին մեղադրանք է առաջադրել ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 3-րդ մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 38-131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ և 7-րդ կետերով, սակայն դեպքի հանգամանքները չեն փոխվել և ըստ էության քրեական հետապնդումը շարունակվել է նույն դեպքի փաստական հանգամանքներով: Ըստ էության, ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքը վերացվել է, իսկ մեղադրանքի մյուս մասով տեղի է ունեցել մեղադրանքի մեղմացում՝ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված արարքը, որը պատիժ է նախատեսում ազատազրկում հինգից տասը տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա, վերաորակվել է ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 3-րդ մասով, որը պատիժ է նախատեսում ազատազրկում՝ երկուսից վեց տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքը, որը պատիժ է նախատեսում ազատազրկում երկուսից վեց տարի ժամկետով վերաորակվել է ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով, որը պատիժ է նախատեսում ազատազրկում՝ առավելագույնը երեք տարի ժամկետով: Արդյունքում դատարանը գտնում է, որ Ն. Սարգսյանը քրեական պատասխանատվության և պատժի է ենթարկվել մինչև հանձնելը նրա կատարած այն հանցագործությունների դեպքերի համար, որով նա հանձնվել է Հայաստանի Հանրապետությանը, այսինքն՝ միջազգային պայմանագրի և ներպետական օրենսդրության նորմերի խախտում տեղի չի ունեցել: Ամփոփելով վերոնշյալը՝ դատարանը փաստում է, որ այդ հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործի վարույթը կարճելու փաստական հիմքերը սույն քրեական գործով բացակայում են (Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 16.06.2021 թվականի թիվ ԵԴ/1076/01/20 որոշում):

Վերոնշյալ դատական ակտի դեմ պաշտպանի կողմից ներկայացվել է վերաքննիչ բողոք, որում վերջինս փաստել է, որ Ն.Ս. պատասխանատվության է ենթարկվում, ըստ էության, այնպիսի արարքների համար, որոնց համար ո՛չ Հայաստանի Հանրապետությունն է խնդրել վերջինիս հանձնումը, ո՛չ էլ այն հանցագործությունների համար, որոնց կապակցության հայցվող պետության կողմից բավարարվել է միջնորդությունը:

Եթե կոնվենցիայի 14-րդ հոդվածի 3-րդ մասը դիտարկենք նույն հոդվածի 1-ին մասից անկախ, ապա ստացում է, որ ուղղակի պահանջ արարքի վերաորակման դեպքում համաձայնություն ստանալու վերաբերյալ, ըստ էության, նախատեսված չէ: Նույն եզրահանգմանը կարող ենք հանգել նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 499-րդ հոդվածի մեկնաբանությունից, քանի որ դրանում ևս կիրառված է «մինչև հանձնումը կատարված...» արտահայտությունը: Մինևնույն ժամանակ, կոնվենցիայի քննարկվող հոդվածի 3-րդ մասով արձանագրված է, որ մեղադրանքի փոփոխության դեպքում անձին պատասխանատվության և պատժի ենթարկելը հնարավոր է միայն այն դեպքում, երբ արարքի նոր նկարագրությունն իր հիմնական բաղադրատարրերով համապատասխանում է հանձնման ենթակա արարքներին: Իսկ վերոնշյալ հանգամանքի պարզման պարտականություն կրողը, հայցող պետության իրավասու մարմինն է, որը դա կարող է պարզել, ոչ այլ կերպ քան համապատասխան հայցող պետությունից համաձայնություն ստանալու նպատակով դիմելու միջոցով, հատկապես հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ կոնկրետ դեպքում արարքի քրեաիրավական որակման արդյունքում անձին կարող է այնպիսի արարքի համար առաջադրվել մեղադրանք, որը հայցվող պետությունում քրեորեն հետապնդելի չէ, որը կարող է պարզվել համապատասխան հարցման արդյունքում:

Նման եզրահանգման, ըստ էության, կարելի է հանգել նաև ՀՀ վճռաբեկ դատարանի վերը ներկայացված թիվ ՎԲ-234-06 որոշումից, որտեղ դատարանը Մինսկի կոնվենցիայի 66-րդ





հողվածի (տվյալ կոնվենցիան ևս սահմանում է համաձայնություն ձեռք բերելու պարտականությունը պարտադիր միայն մինչև հանձնումը կատարած արարքների համար) և ՀՀ ՔԴՕ 499-րդ հոդվածի խախտում է դիտել մեղադրանքը փոփոխելը և նոր մեղադրանք առաջադրելը, ինչի արդյունքում անձին առաջադրված մեղադրանքը, որի համար անձի հանձնումը ՌԴ իրավասու մարմիններից պահանջվել է, խստացել է առանց հայցող պետության համաձայնության:

Խստացման առումով հայցվող պետության համաձայնությունը ստանալու անհրաժեշտության մասին է վկայում նաև ՀՀ դատախազության 2018 թվականի փետրվարի 9-ին կոլեգիայի արձանագրությունը, որի համաձայն՝ (...) Մեղադրանքի ձևակերպման ոչ պակաս խնդրահարույց հարցերից մեկը այլ պետությունից հանձնված անձի մեղադրանքի փոփոխության արդյունքում դրան տված ձևակերպումն է: Քիչ չեն դեպքերը, երբ մեղադրյալին կոնկրետ մեղադրանքով հանձնելուց հետո, ՀՀ-ում շարունակված նախաքննության արդյունքներով առաջանում է մեղադրանքը վերաձևակերպելու խնդիր: Իրավակիրառ պրակտիկան ձևավորվել և ընթացել է այն ճանապարհով, որ միջազգային պայմանագրերին և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան, մեղադրանքը ենթակա է փոփոխման այն դեպքում, երբ դրա իրավաբանական որակումը փոխվում է խստացման առումով:

Միաժամանակ, նկատի ունենալով, որ հանձնված անձի քրեական հետապնդման սահմանները որոշող կոնվենցիոնալ և ներպետական քրեադատավարական նորմերը արգելում են անձին պատասխանատվության ենթարկել այն արարքի համար, որի համար վերջինս չի հանձնվել, մեղադրանքի բոլոր փոփոխությունները պետք է համաձայնեցվեն մեղադրյալին հանձնող պետության հետ: Բանն այն է, որ հատկապես խարդախությունների վերաբերյալ գործերով, նկատի ունենալով այս հանցագործության սահմանային բնույթը քաղաքացիաիրավական գործարքի հետ, պայմանավորող պետությունները կարող են մերժել կոնկրետ ձևակերպմամբ մեղադրանքով անձի հանձնումը՝ այն դիտելով որպես քաղաքացիաիրավական պարտավորության չկատարում: Կամ արարքի իրավաբանական որակումը չփոփոխող այնպիսի վերաշարադրումը, երբ առաջադրված մեղադրանքում հանցագործությամբ պատճառված վնասի չափը նվազեցվում է, խնդրահարույց է այն պատճառով, որ փոփոխված չափով մեղադրանքը հանձնող պետությունում կարող է համարվել նվազ ծանր՝ վաղեմության ժամկետն անցած լինելու կամ համարժեք դատավարական այլ հետևանքով [4]:

Հատկանշական է նաև, որ վերը քննարկված խնդիրներից զերծ մնալու նպատակով ՀՀ գլխավոր դատախազությունը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում անձի հանձնման միջնորդության բավարարման մասին վարույթն իրականացնող մարմինն համապատասխան գրությամբ հայտնեցիս, դրան կցում է նաև համապատասխան կոնվենցիայի քննարկող հոդվածը՝ նախազգուշացնելով դրա պահպանման անհրաժեշտության մասին:

### **3. Եզրակացություն:**

Ամփոփելով վերոգրյալը՝ այնուամենայնիվ, կարելի է եզրակացնել, որ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում, երբ իրավասու մարմինը կանգնում է մեղադրանքի փոփոխության խնդրի առաջ, հայցող պետության իրավասու մարմնից համաձայնության ձեռքբերումն անհրաժեշտ է, զերծ մնալու նպատակով նաև այն իրավիճակներից, երբ մեղադրանքի փոփոխության արդյունքում մեղադրանքից դուրս են գալիս դրվագներ, փոփոխվում փաստական հանգամանքներ, որոնք էապես կարող են ազդել հայցվող պետության կայացվելիք որոշման վրա:

Միևնույն ժամանակ, հարկ ենք համարում նշել, որ արարքի մեղմացման արդյունքում, երբ հանձնված անձին մեղսագրվող արարքը միևնույն է ընկնում է հանձնման ենթակա արարքների տակ, որպես կանոն, չի առաջացնում կոնվենցիոն դրույթների խախտում:



Վերոնշյալի մասին է նաև վկայում պրակտիկան. վերը նշված թիվ ԵԴ/1076/01/20 գործով անձի դատապարտման արդյունքների մասին հայտնվել է Չեխիայի Հանրապետության իրավասու մարմիններին, որոնք արդյունքների ուսումնասիրությամբ խախտումներ չեն հայտնաբերել:

### Գրականության ցանկ / Bibliography / Библиографический список

1. Report on the Conclusion of a European Convention on Extradition, Consultative Assembly of the Council of Europe, Sixth Ordinary Session, 1054, Document No. 234.
2. Եվրոպական կոնվենցիայի ազդեցությունը մարդու իրավունքների վրա (Impact of the European convention on human rights) // <https://rm.coe.int/16800c92bc> dated (Վերջին մուտք՝ 25.04.2022):
3. Հանձնման մասին և քրեական գործերով իրավական օգնության մասին մոդելային պայմանագրերի վերաբերյալ վերանայված ուղեցույցներ (Revised Manuals on the Model Treaty on Extradition and on the Model Treaty on Mutual Assistance in Criminal Matters) // [https://unodc.org/pdf/model\\_treaty\\_extradition\\_revised\\_manual.pdf](https://unodc.org/pdf/model_treaty_extradition_revised_manual.pdf) dated (Վերջին մուտք՝ 26.04.2022):
4. ՀՀ դատախազության կոլեգիայի 2018թ. փետրվարի 9-ի նիստի արձանագրություն // <https://prosecutor.am/myfiles/files/pdf/kolegia%2009.02.2018.pdf> (Վերջին մուտք՝ 10.04.22):

### Ամփոփագիր

Հոդվածը նվիրված է ՀՀ իրավական համակարգում հանձնման ինստիտուտի կարևոր սկզբունքներից մեկի՝ «միայն այն հանցագործությունների համար պատասխանատվության ենթարկելը, որոնց համար անձի հանձնումը բավարարվել է», բացահայտմանը, դրա առանձնահատկությունների վերհանմանը, քննարկվող սկզբունքի կիրառման կապակցությամբ ոչ միատեսակ պրակտիկայի ձևավորմանը, ինչպես նաև կիրառման առանձնահատկություններին: Վերոնշյալ սկզբունքի պահպանումը հատկապես կարևոր է մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից: Դրա խախտումը հանգեցնում է անձին այնպիսի հոդվածներով պատասխանատվության ենթարկելուն, որոնց համար հանձնումը հայցվող պետության կողմից չի բավարարվել: Վերոնշյալ սկզբունքը կարող է խախտվել նաև հայցող պետության կողմից արարքն ավելի մեղմ կամ ավելի ծանր հոդվածով վերաորակելու դեպքերում: Նման խախտումները հատկապես վտանգավոր են այն ժամանակ, երբ արարքն ավելի մեղմ հոդվածով վերաորակվելու դեպքում դադարում է քրեորեն հետապնդելի լինել հայցվող պետության օրենսդրությանը համապատասխան:

Նկատի ունենալով վերը ներկայացված խնդիրները՝ միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունները պահպանելու նկատառումներից ելնելով, հոդվածում ներկայացված են սկզբունքի վերաբերյալ միջազգային իրավասու մարմինների կողմից տրված մեկնաբանությունները, ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքը, ինչպես նաև կատարված են համապատասխան եզրահանգումներ սկզբունքի կիրառման հետ կապված խնդիրների լուծման ուղղությամբ:

### Annotation

The article is dedicated to the disclosure of one of the important principles of the institute of extradition, i.e. "the principle of bringing to responsibility only for crimes for which the extradition is satisfied", the identification of its features, the formation of a heterogeneous practice of application of the considered principle, as well as the peculiarities of its application in the legal system of the Republic

of Armenia. The maintenance of the above-mentioned principle is especially important from a human rights protection perspective. Violation of the principle results criminal liability for persons on the articles for which extradition has not been granted by the requested State. The above-mentioned principle may also be violated in case of requalification of the action with a less strict punishment or heavier article by the requesting State. Such violations are especially dangerous in case of requalifying the act with a milder article when it ceases to be criminally prosecuted in accordance with the law of the requested State.

Taking into consideration the problems presented above, with the aim to comply with the obligations under international treaties, the article presents the comments made by the competent international bodies, the case law of the RA Court of Cassation, as well as the relevant conclusions for the solution of issues related to the application of this principle.

### Аннотация

Статья посвящена раскрытию одного из важных принципов института выдачи - «принципу привлечения к ответственности лишь за преступления, которые послужили основанием для выдачи», выявлению его особенностей, формированию неоднородной практики применения рассматриваемого принципа, а также особенностям его применения в правовой системе РА. Соблюдение вышеуказанного принципа особенно важно с точки зрения защиты прав человека. Нарушение этого принципа влечет за собой уголовное преследование лица по статьям, по которым выдача не была удовлетворена запрашиваемым государством. Вышеупомянутый принцип может быть также нарушен, если запрашивающее государство переквалифицирует деяние на статью, которая предусматривает более мягкую или строгую уголовную ответственность. Такие нарушения особенно опасны, когда деяние перестает быть уголовно наказуемым по закону запрашиваемого государства.

Ввиду вышеуказанных вопросов, в целях соблюдения обязательств по международным договорам в статье представлены комментарии компетентных международных органов по вышесказанному принципу. В статье также представлены международная судебная практика, прецедентное право Кассационного суда РА по реализации данного принципа, а также сделаны соответствующие выводы, связанные с решением вопросов применения данного принципа.

**Հիմնարաներ՝** սկզբունք, դատական պրակտիկա, ՀՀ Վճռաբեկ դատարան, դատարան, ՀՀ իրավական համակարգ:

**Key words:** principle, judicial practice, the RA Court of Cassation, court, the RA legal system.

**Ключевые слова:** принцип, судебная практика, Кассационный суд РА, суд, правовая система РА.



**ԿՐԻՄԻՆԱԼՈԳԻԱ / CRIMINOLOGY / КРИМИНОЛОГИЯ**



**ԿՐԿՅԱՇԱՐՅԱՆ ԱՐՏԱԿ**

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ,  
 ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալ, զինվորական  
 քննչական գլխավոր վարչության պետ

**KRKYASHARYAN ARTAK**

*Applicant at the Institute of Philosophy, Sociology and Law of the RA National  
 Academy of Science, Deputy chairman of the Investigative committee of the Republic  
 of Armenia, Head of the General military investigation department*

**КРКЯШАРЯН АРТАК**

*соискатель Института философии, социологии и права НАН РА,  
 заместитель председателя Следственного комитета Республики Армения,  
 начальник Главного военного следственного управления*

**ԶԻՆՃԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԿԱՆՈՆԱԳՐՔԱՅԻՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
 ԽԱՆՏՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ, ՈՐՈՆՑ ՀԻՄՔՈՒՄ ԸՆԿԱԾ Է ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ\***

**THE REASONS FOR VIOLATION OF THE STATUTORY RELATIONS BETWEEN MILITARY  
 PERSONEL, WHICH ARE BASED ON THE MILITARY CHARACTER\***

**ПРИЧИНЫ НАРУШЕНИЯ УСТАВНЫХ ВЗАИМООТНОШЕНИЙ МЕЖДУ  
 ВОЕННОСЛУЖАЩИМИ, В ОСНОВЕ КОТОРЫХ ЛЕЖИТ ВОЕННЫЙ ХАРАКТЕР\***

**1. Ներածություն:**

Զորակոչիկների բացասական անձնական հատկությունների ձևավորման և արմատավորման վրա ազդող, ինչպես նաև՝ զինվորական ծառայության պայմանների ազդեցությամբ առանձնահատուկ կերպով բեկվող համահասարակական պատճառների կողքին զինծառայողների միջև կանոնադրային փոխհարաբերությունների խախտումը սահմանվում է նաև դիտարկվող հանցագործությունների ծագման մեջ պատճառների մեկ այլ խմբի առկայությամբ, որի հիմքում զինվորական ծագումնաբանությունն է: Ընդհանուր առմամբ, այս խումբը կարելի է ներկայացնել որպես զինվորականների ծառայության և կենցաղի կազմակերպման թերությունների և արատների ամբողջականություն, որը զգալիորեն ազդում է երիտասարդ զինծառայողների անհատականության բացասական ձևավորման և որոշ զինծառայողների մոտ քրեական ուղղվածության արմատավորման վրա:

**2. Հիմնական հետազոտություն:**

Զինվորական միջավայրում ոչ կանոնադրական հարաբերությունների առաջացման, զարգացման և արմատավորման ամենազգալի պատճառները, մեր կարծիքով, կազմակերպչական-կառավարչական պատճառներն են: Զինվորական կառավարչական մարմինների թերություններն ու բացթողումներն անխուսափելիորեն հանգեցնում են զինծառայողների օրինազանցու-

\* Հոդվածը ներկայացվել է 10.03.2022, գրախոսվել է 24.03.2022, ընդունվել է տպագրության 01.08.2022:  
 \* The article was presented 10.03.2022, was reviewed 24.03.2022, was accepted to publication 01.08.2022.  
 \* Статья представлена 10.03.2022, рецензирована 24.03.2022, принята в печать 01.08.2022.



թյունների: Այդ առումով դիտարկվող հանցագործությունները զինծառայողների փոխհարաբերությունների ոլորտում միակը չեն:

Դիտարկվող հանցագործությունների կազմակերպչական-կառավարչական պատճառների ողջ շարքը, կախված դրանց առաջացման բնույթից, կարելի է պայմանականորեն բաժանել կադրային, ընթացակարգային և առանձնահատուկ խմբերի:

Բանակի կարիքների ոչ բավարար ֆինանսավորման և այդ կապակցությամբ զինվորական ծառայության վարկի անկման ժամանակակից պայմաններում առավելապես սրվել է Ձինված ուժերի սպայական կազմի կադրային ապահովման խնդիրը, ընդ որում, հիմնական բարդություններն առաջացան դասակ-վաշտային օղակի հրամանատարության համալրման ոլորտում: Վերջին տարիներին Ձինված ուժերում տեղ գտած գործընթացները հանգեցրին սպայական կազմի ձեռնահասության աստիճանի իջեցմանը: Նրանց մի մասը վստահ չէ իր «զինվորական» ապագայի համար և, բնականաբար, շահագրգռված չէ իր մասնագիտական վարպետության բարձրացմամբ: Զգալիորեն ընկել է զինվորական-կրթական հաստատությունների դիմորդների պատրաստվածության աստիճանը: Ձինված ուժերի սպայական կազմի համալրման ոլորտում բացասական միտումներից է նաև այն, որ ստորին օղակի սպայական կազմի պակասի հետևանքով այնպիսի կարևոր պաշտոնների, ինչպիսին վաշտի հրամանատարի պաշտոնն է, նշանակվում են երիտասարդ լեյտենանտներ, ովքեր անգամ դասակ ղեկավարելու փորձառություն չունեն [2]: Ակնհայտ է, որ այդ երիտասարդ սպաները հիմնականում, ո՛չ անձնակազմի կառավարման անհրաժեշտ ունակություններ ունեն, ո՛չ էլ կայուն հեղինակություն իրենց ենթակաների շրջանում:

Դիտարկվող համատեքստում առանձին խնդիր է այն, որ շատ սպաների մոտ բացակայում են իրենց ենթակա ստորաբաժանումներում օրինազանցությունների կանխման համար անհրաժեշտ իմացություններն ու ունակությունները: Դիտարկվող օրինազանցությունները ոչ պակաս չափով պայմանավորված են նաև կրտսեր հրամանատարների ինստիտուտի անկատարությամբ: Ընդ որում հիմնական նախատինքը վերաբերում է սերժանտական կազմի մեծ մասի նկատմամբ անհրաժեշտ հարգանքի և զինվորական միջավայրում իրադրության վրա իրապես ազդելու ունակության բացակայությանը: Այս թերությունները կրտսեր հրամանատարներով զինված ուժերը համալրելու ընթացքում թույլտրված սխալների հետևանք են, որոնք կապված են նրանց ընտրության, կրթության և սերժանտական կազմի բաշխման հետ: Համալրման գործող համակարգը գրեթե հաշվի չի առնում այն տարիքային, մասնագիտական, ինտելեկտուալ, հոգեբանական և բարոյական պահանջները, որոնք դրվում են կրտսեր հրամանատարի անհատականության առջև, ինչը հանգեցնում է հետևյալ բացասական հետևանքների.

1. Ապագա սերժանտը, կրտսեր հրամանատարներ պատրաստող ուսումնական զորամասում, որպես կանոն, հայտնվում է միանգամից զինվորական հավաքակայանից՝ առանց լուրջ մասնագիտական ընտրություն անցնելու: Արդյունքում, կրտսեր հրամանատարների պաշտոններում հաճախ հայտնվում են մարդիկ, ովքեր մասնագիտական առումով պիտանի չեն դրան, չեն կարողանում արժանանալ ենթակաների հարգանքին, ծառայակիցների հետ կառուցողական հարաբերություններ հաստատել և ղեկավարել նրանց:

2. Ուսումնական զորամասում կրթություն ստացած սերժանտը հաճախ ավելի երիտասարդ է լինում, քան նախորդ զորակոչի իր ենթակաները, ինչը, հաշվի առնելով զորակոչիկների հոգեբանական առանձնահատկությունները, բացասաբար է անդրադառնում զինվորական կոլեկտիվում նրա վարկի վրա:

Այդպիսի հրամանատարը ոչ միշտ է կարողանում ղեկավարել իր ծառայակիցներին և արդյունավետ կերպով օգտագործել իշխանական լիազորությունները: Բացի այդ, ենթակաների «կենցաղային» տեսանկյունից այդպիսի սերժանտն իրենց ղեկավարելու չափազանց քիչ հիմքեր





ունի, քանի որ ո՛չ կենսափորձ ունի, ո՛չ էլ անձնական արժանիքներ և վաստակ: Բացի այդ, զինվորական հարաբերությունների ոչ կանոնադրական կառուցվածքի համաձայն՝ երիտասարդ սերժանտը (ով ծառայել է կես տարի), իր ոչ պաշտոնական կարգավիճակով զգալիորեն ցածր է մեկ տարի և ավելին ծառայած զինծառայողներից և «պետք է» ենթարկվի նրանց: Այդպիսի սերժանտն երբեմն ոչ միայն անկարող է ենթակաների շրջանում կարգուկանոն հաստատել, կանխել օրինազանցությունները, այլև հաճախ հենց ինքն է դառնում դիտարկվող հանցագործությունների փաստերով հարուցված քրեական գործերով տուժող կողմ:

3. Փորձելով հաղթահարել կրտսեր հրամանատարներով ստորաբաժանումները համալրելու սխալ համակարգի վերոնշյալ հետևանքները՝ որոշ սպաներ սերժանտական պաշտոնների են նշանակում ոչ պաշտոնական առաջնորդներին, ովքեր ստորաբաժանման շրջանակներում հարգանք են վայելում: Սակայն, փորձելով բարձրացնել ստորաբաժանման «կառավարելիության» և զինվորական կարգապահության մակարդակը, նշված սպաները կամ հաշվի չեն առնում, որ այդ «առաջնորդների» ոչ պաշտոնական հեղինակությունը, որպես կանոն, հիմնված է հենց զինվորական հարաբերությունների ոչ կանոնադրական համակարգի վրա (որի հիմքում հաճախ բռնությունն է), կամ էլ ուղղակի աչք են փակում այդ հանգամանքի վրա: Նման փորձը հանգեցնում է նրան, որ ստորաբաժանման զինվորական բարձր կարգապահության և ռազմական պատրաստվածության արտաքին «շղարշի» տակ թաքնվում են ոչ կանոնադրական հարաբերությունների առավել վտանգավոր դրսևորումներ, որոնք պարբերական բնույթ են կրում և հաճախ հանգեցնում ծանր հետևանքների:

4. Սերժանտների ներկայիս իրավական կարգավիճակը՝ որպես նրանց իրավունքների, պարտականությունների և պատասխանատվությունների ամբողջականություն, զինվորական կանոնադրության ցածր արդյունավետությամբ պայմանավորված, թույլ չի տալիս նրանց ամբողջությամբ իրականացնել այդ նույն կանոնադրությամբ նախատեսված հրամանատարական գործառույթները:

Ստիպված ենք փաստել, որ կրտսեր հրամանատարների ինստիտուտի չկայացվածությունը պայմանավորված է ոչ միայն հրամանատարական պաշտոնների սխալ համալրմամբ կամ սերժանտների բացասական սոցիալ-հոգեբանական բնութագրերով, այլև անհրաժեշտ լիազորությունների և պատասխանատվության արդյունավետ համակարգի բացակայությամբ: Իրականում գոյություն ունեն միայն պարտականություններ, որոնք, հիմնականում, զորակոչված սերժանտների կողմից կատարվում են ծայրահեղ մակերեսորեն:

Զինվորական ստորաբաժանման շրջանակներում ոչ կանոնադրական հարաբերությունների կազմակերպչական-կառավարչական պատճառների ընթացակարգային խմբին են պատկանում սպաների և սերժանտների (հրամանատարներ և պետեր) պաշտոնական գործունեության այն թերությունները, որոնք կապված են ենթակա անձնակազմի վերահսկման կազմակերպման և իրականացման, նրանց նյութական-կենցաղային ապահովվածության, զինվորական գործի ուսուցման և զինվորական միջավայրում առողջ բարոյա-հոգեբանական մթնոլորտի պահպանման հետ:

Սպաների կողմից անձնակազմի անվերահսկելիության դերը դիտարկվող հանցագործությունների ծագման մեջ նշանակալի է և վաղուց ապացուցված: Առավել մեծ է երեկոյան և գիշերային ժամերին սպայական վերահսկողության բացակայության քրեածին նշանակությունը:

Անխոս, բավական անտեղին կլինի մեղադրել սպաներին իրենց ենթականերին գիշերային ժամերին չվերահսկելու համար, քանի որ գոյություն ունի աշխատանքային ժամանակի կարգ, համաձայն որի՝ սպան ոչ միշտ է պարտավոր գտնվել զորանոցում գիշերային ժամերին: Բայց և այնպես, պետք է հաշվի առնել, որ, առաջին հերթին, ոչ կանոնադրական դրսևորումների մեծ մասը տեղի են ունենում գիշերային ժամերին՝ 00.00-01.00, ինչն ակնհայտորեն չի ենթադրում





սպայի ներկայությունը զորանոցում ողջ գիշերվա ընթացքում, երկրորդ՝ գիշերային հանցագործությունները հիմնականում կատարվում են սպաների կողմից նշանակված և հրահանգավորված ներքին վերակարգի անգործության և թողտվության պայմաններում, և երրորդ՝ գիշերային հանցագործությունների համար պայմաններ ստեղծվում են ցերեկային ժամերին՝ սպաների ներկայությամբ<sup>1</sup>:

Բացի այդ, որոշ սպաներ երիտասարդներին իրենց զինվորական փորձը փոխանցելու անհրաժեշտության պատրվակով «բեռնաթափում են» իրենց՝ փոխանցելով իրենց լիազորությունների մի մասը (հիմնականում վերահսկողական գործառույթները) առավել երկար ծառայած որոշ զինվորների (այսպես կոչված «փորձառու զինծառայողների իշխանությունը երիտասարդների և անփորձների նկատմամբ»): Արդյունքում՝ վերջինների մոտ ստորաբաժանումում իրենց դերի վերաբերյալ խեղաթյուրված կարծիք է ձևավորվում, որն ուղղակիորեն հանգեցնում է ոչ կանոնադրական փոխհարաբերությունների հաստատմանը:

Դիտարկվող հանցագործությունների ծագման գործում ոչ պակաս կարևոր դեր ունի նաև սպաների անձնական օրինակը՝ զինվորական կանոններին նրանց վարքի համապատասխանության աստիճանը: Այն ստորաբաժանումում, որտեղ սպան ենթակաների հետ փոխհարաբերություններում անքաղաքավարություն, նվաստացուցիչ վերաբերմունք է ցուցաբերում, իսկ որոշ դեպքերում էլ որպես ղեկավարման միջոց բռնություն է գործադրում, զորակոչված զինծառայողների միջև նորմալ միջանձնային հարաբերությունների մասին խոսելն անիմաստ է:

Ոչ կանոնագրքային փոխհարաբերությունների կազմակերպչական-կառավարչական առանձնահատուկ պատճառները կապված են զինվորական ծառայության կրման առանձնահատկությունների (զինվորական տորաբաժանման կյանքի վերաբերյալ որոշ տեղեկատվության փակ լինելը քաղաքացիական հասարակության համար), զինվորական կոլեկտիվի յուրահատկության (յուրահատուկ խմբային հոգեբանությամբ երիտասարդ տղամարդկանց սահմանափակ խումբ), փակվածության և «աղբը տանից դուրս հանելու» դժկամության, հրամանատարի գործունեությունն իր ստորաբաժանումում կատարված զինվորական կազապահության խաթարման դեպքերի քանակով գնահատելու արատավոր փորձի և մի շարք այլ առանձնահատուկ հանգամանքների հետ:

Այս հանգամանքների շրջանում ամենաքրեածինը, մեր կարծիքով, այսպես կոչված «խմբային երաշխավորությունն» է: Այս երևույթը, որը հատուկ է ոչ միայն բանակին, այլև տղամարդկանց սահմանափակ կոլեկտիվներից շատերին, ընդունակ է ի չիք անել օրինազանցների բացահայտմանն ուղղված զինվորական հրամանատարության կամ զինվորական արդարադատության մարմինների ցանկացած փորձ:

«Խմբային երաշխավորության» էությունը մինչև վերջ դեռ ուսումնասիրված չէ, քանի որ դրա դրսևորումները բազմակողմանի են, իսկ սահմանող գործոնները՝ բազմաբնույթ: Սակայն ակնհայտ է, որ այդ երևույթի արմատները հասարակական դաստիարակության համակարգից են գալիս, երբ մանկուց երեխային ներշնչում են, որ բանասարկությամբ զբաղվելը լավ չէ: Ձեռքբերված հոգեբանական կարծրատիպերը հետագայում պարարտ հող են գտնում բանակային փակ միջավայրում: Զինվորական կոլեկտիվի կազմավորման գլխավոր սկզբունքներից մեկի՝

<sup>1</sup> Այստեղ նկատի է առնվում որոշ զինծառայողների «առանձնացումը» «կենցաղային նշանակության սենյակներում», որտեղ հաճախ տեղի են ունենում երիտասարդ զինվորների ծեծի ենթարկման դեպքեր, ոչ կանոնադրական հարաբերությունների այլ ձևեր են կիրառվում. ստորաբաժանումում զինվորական փոխհարաբերությունների ոչ կանոնադրական համակարգի առկայությունը, որի մասին սպան չի կարող չիմանալ, քանի որ բավական արագ է ախտորոշվում արտաքին ախտանիշներով (հագուստի ձևը, զինծառայողների վարքը), զինծառայողների միջև կոնֆլիկտային իրավիճակների առաջացումը:



միասնականության, և զինծառայողների բոլոր պատահարների (այդ թվում նաև՝ ոչ կանոնադրական հարաբերությունների) վերաբերյալ հրամանատարին զեկուցելու զինվորական կանոնադրության պահանջների միջև առաջացող անհամապատասխանությունը, բավարար կենսափորձի պակասի, զինվորական ընկերության սխալ ընկալման և զինվորական փոխհարաբերությունների յուրահատկության պատճառով, յուրահատուկ կերպով լուծվում է հոգուտ «կոլեկտիվի միասնականության»: Տարօրինակ իրավիճակ է ստեղծվում. հանցագործի անձի բացահայտմամբ որևէ մեկը շահագրգռված չէ՝ ո՛չ ինքը հանցագործը (ինչը բնական է), ո՛չ տուժողը (քանի որ խուսափում է ծառայակիցների բոյկոտից), ո՛չ սպան (քանի որ կարող է կարգապահական պատասխանատվության ենթարկվել), ոչ էլ զինվորական կոլեկտիվը (քանի որ կարող է «անբավարար» ստորաբաժանման կարգավիճակ ձեռք բերել):

Դիտարկվող հանցագործությունների «կենսունակության» ոչ պակաս առանձնահատուկ պայման է նաև այն, որ շատ զինվորական ստորաբաժանումներում առկա է զինվորական փոխհարաբերությունների ոչ կանոնադրական համակարգ, որի հիմքում ընկած են յուրաքանչյուր հասարակության համար բնական համարվող դոմինանտ հարաբերությունները:

«Առաջնորդ-մասսա-իրավազուրկներ» համակարգը, առանձնացնելով՝ իր միավորների որոշակի հիերարխիա ստեղծելու հատկությունը, որը հատուկ է ցանկացած հասարակական համակարգի, ուսումնասիրվել է քրեաբանության, հասարակական հոգեբանության և հասարակական մարդաբանության կողմից: Այսպես, Պ.Ա. Սորոկինը պարզել է, որ ցանկացած հասարակական մակրոհամակարգում (երկիր, տարածաշրջան) և միկրոհամակարգում (քաղաքացիների առանձին խմբեր) միշտ որոշակի հիերարխիա է ձևավորվում: Այն կարող է հիմնվել ինչպես մարդկանց դրական (արժանիք, ունակություն, հատկություն), այնպես էլ բացասական (նենգամտություն, քծնանք, ագրեսիվություն, դաժանություն) բնութագրերի վրա [8]: Իր հերթին Վ. Շալամովը «Հանցավոր աշխարհի ակնարկները» գրքում այսպիսի դիտարկում է առաջ բերում. երբ հալածանքները կանխելու համար բոլոր ստորացվող կալանավորներին մեկուսացրին, նրանց միջավայրում հաստատվեց նույն իրավիճակը, որից նրանց մեկուսացրել էին (առաջացան նոր «ստորացնողներ» և «ստորացվողներ»): Փակ հասարակական համակարգի այս առանձնահատկությունը հիմնավորվում է նաև Լ.Ս. Կլեյնի կողմից, ով ուսումնասիրել է, թե ինչպես է դոմինանտ հարաբերությունների կանխման նպատակով մեկուսացված կալանավորների միատարր կազմը վերարտադրում «իրավազուրկներ-մասսա-էլիտա» եռաստիճան փոխդասավորվածությունը [3; 15-18]: Փակ հասարակական համակարգի գրեթե նույն առանձնահատկություններն է մատնանշում նաև Կ.Լ. Բաննիկովը [1; 31]:

Բնական դոմինանտ հարաբերությունները՝ «մեծ-փոքր», որոշակի պայմաններում անբնական են դառնում: Ապրելու միջավայրի ընտրության հնարավորության բացակայությունը և դրանցից խուսափելու անհնարինության պատճառով միջանձնային հարաբերություններ ստեղծելու անհրաժեշտությունը այդ «փոխակերպման» հիմնական պայմաններն են: Անբնական դոմինանտ հարաբերությունների սահմանափակման բավական ազդեցիկ գործոն է մարդկային հարաբերությունները կարգավորող հստակ իրավական համակարգը, որը կսահմանի անհատի կարգավիճակը՝ կոլեկտիվի օբյեկտիվ և սուբյեկտիվ պահանջներին համապատասխան և դրա անդամների իրավունքների և պարտավորությունների ամբողջականության արդյունավետ կարգավորմամբ:

Բայց և այնպես, զինծառայողների կենսագործունեությունը կարգավորող հիմնական իրավական ակտերը՝ զինվորական կանոնադրությունները, հեռու են կատարյալ լինելուց, բարոյապես հնացել են և հաշվի չեն առնում մեր հասարակությունում տեղի ունեցած զգալի փոփոխությունները: Ընդ որում, զինվորական կանոնադրություններով զինծառայողների փոխհարաբերությունների անարդյունավետ կարգավորման հիմնական պատճառը, մեր կարծիքով, բարեխիղճ ծա-



ռայության իրական ազդակների, հարկադրման արդյունավետ մեխանիզմի, ինչպես նաև ծառայության ընթացքում զինծառայողի հասարակական դերի և կարգավիճակի փոփոխության կառավարելի մեխանիզմների բացակայությունն է:

Զինվորական ստորաբաժանման շրջանակներում առկա հարաբերությունների ոչ պաշտոնական համակարգը, լինելով դիտարկվող հանցագործությունների հետևանք, ստեղծում է նաև մի շարք անուղղակի որոշիչներ: Բանն այն է, որ եթե ոչ կանոնադրական հարաբերությունների համակարգը լիներ ծառայության մեջ երկար գտնվող զինծառայողների կողմից նորակոչիկների հալածման և ստորացման համակարգ (բռնություն հանուն բռնության), ապա այդ երևույթը էպիզոդիկ, հանկարծահաս բնույթ կունենար և բավական հեշտ կլիներ դրա բացառումը: Այդ իսկ պատճառով տրամաբանական է եզրակացնել, որ Զինված ուժերում առկա ոչ կանոնադրական փոխհարաբերությունների համակարգը ձեռնտու է ոչ միայն ծառայության մեջ երկար ժամանակ գտնվող զինվորականներին, այլև հրամանատարական կազմի որոշ մասին: Դա ապացուցվում է նաև այն հանգամանքով, որ զինվորականների միջավայրերում երբեմն հայտնվում են գաղափարներ ոչ կանոնագրքային փոխհարաբերությունների օգտակարության մասին [7]:

Տվյալ կարծիքը արտահայտում է զինվորական ոչ կանոնադրական հարաբերությունների ներկայացրած հասարակական վտանգի ևս մեկ կողմ, որն ի հայտ է գալիս արդյունավետության և տրված հրամանի կատարման արագության բարձրացման համար որոշ սպաների կողմից դրանց գործադրմամբ: Այդ գործընթացի կառուցվածքը բավական պարզ է: Սպան իր ենթականերին հանձնարարում է, օրինակ՝ մաքրել տարածքը: Երիտասարդ զինվորականները դա անում են առանց ցանկության, ցածր որակով, քանի որ բարեխիղճ աշխատանքի համար ազդակներ չունեն: Այդ իսկ պատճառով, սպան ստիպված է «կանգնել զինվորների գլխին» և վերահսկել նրանց աշխատանքը: Իսկ եթե սպան, հիմնվելով զինվորական ոչ կանոնադրական փոխհարաբերությունների համակարգի վրա, այդ նույն հանձնարարությունը տալիս է «հին» ծառայողներին, ապա այն անպայման կկատարվի, այն էլ արագ և որակով: Այս «ֆենոմենը» բացատրվում է այն հանգամանքով, որ սպայի հանձնարարության չկատարման դեպքում վաղուց ծառայության մեջ գտնվող զինվորը կզրկվի հերթական արձակուրդից կամ զինվորական որևէ այլ բարիքից: Այդ իսկ պատճառով նա ստիպում է նորակոչիկին աշխատել իր փոխարեն՝ բռնության սպառնալիքով: Արդյունքում հանձնարարությունը կատարված է պատշաճ մակարդակով:

Այսպիսով, զինվորական հարաբերությունների ոչ կանոնադրական համակարգը ձեռնտու է ոչ միայն զինվորներին, քանի որ թույլ է տալիս նրանց ծառայության երկրորդ հատվածում զգալիորեն քիչ աշխատել, այլև, ինչն ավելի էական է, այն ձեռնտու է որոշ սպաների, քանի որ ապահովում է տրված հանձնարարության արդյունավետ կատարում, իսկ չկատարման դեպքում հնարավորություն է տալիս «հին» ծառայողներից հաշիվ պահանջել՝ գործածելով նրանց համար կարևոր ազդակներ:

Այդպիսով, պետք է ընդունել, որ զինվորական ստորաբաժանումում զինծառայողների հարաբերությունների ոչ պաշտոնական համակարգի առկայությունը, որը կազմակերպչական-կառավարչական թերությունների արդյունք է, ինչպես նաև դրված նպատակներն իրականացնելու արդյունավետության բարձրացման նպատակով որոշ սպաների կողմից այդ համակարգի օգտագործումը զինծառայողների կանոնադրական հարաբերությունների խաթարման հիմնական պատճառներից են և սահմանում են դրանք:

Ստորադասության հարաբերությունների բացակայության դեպքում զինծառայողների միջև կանոնագրքային փոխհարաբերությունների խախտման պատճառների համալիրը պարունակում է ոչ միայն շրջակա իրականության օբյեկտիվ պայմաններից բխող գործոններ, այլև գործոններ, որոնց հիմքում ընկած են զինծառայողի անհատականության որոշակի առանձնահատուկ բնութագրեր և զինվորական ծառայության կրման որոշակի յուրահատկություններ:



Այս խմբին պետք է վերագրել նաև սոցիալ-դեմոգրաֆիկ և սոցիալ-հոգեբանական բնույթի պատճառները:

Զինվորական քրեաբանության մեջ ավանդաբար առանձնացվում են զինծառայողների հետևյալ քրեածին սոցիալ-դեմոգրաֆիկ հատկությունները. զինվորական միջավայրում արական սեռի բացարձակ մեծամասնությունը, զորակոչված զինծառայողների երիտասարդ տարիքը, նրանց համեմատաբար ցածր կրթական մակարդակը, զորակոչված զինծառայողների բացարձակ մեծամասնության մոտ սեփական ընտանիքների բացակայությունը, նրանց հասարակական հարմարվողականությունը: Մեր կարծիքով, զինծառայողների բռնի վարքի վրա ոչ պակաս ազդում են նաև սոցիալ-դեմոգրաֆիկ բնույթի այնպիսի առանձնահատկություններ, ինչպիսիք են՝ զինվորական կոլեկտիվի սահմանափակությունը, նրա սեռական միատարրությունը, ապանհատականացումը և զինվորական միավոր դառնալու գործընթացում անհատի ապանձնականացումը, զինվորական ստորաբաժանման «ինքնաապահովվածությունը», որը հաճախ հանգեցնում է զինծառայողների իռացիոնալ աշխատանքի, ինչպես նաև զինվորական կենցաղի յուրահատուկ (զորանոցային) էսթետիկան:

Միասեռ հասարակական խմբի համաձայնությունը հաճախ դառնում է ագրեսիվ վարքի խթանիչ: Մշտական պարտավորված շփումը նույն մարդկանց հետ, որոնց հետ անհատն աշխատում է, հանգստանում և քնում, մինչև քրեական աստիճանը՝ մարդու բնական ագրեսիվության բարձրացման գործոններից մեկն է: Ինչպես արդարացիորեն նկատում է Ի.Վ. Կրուպնովը. «Զինվորական կոլեկտիվի պայմաններում սահմանափակ տարածքում երիտասարդ տղամարդկանց երկարատև համատեղ կյանքը (ինչն ինքնին խթանիչ գործոն է), որոնց արյան մեջ տեստաստերոնի պարունակությունը բարձր է տարիքային հոգե-կենսաբանական յուրահատկություններով պայմանավորված, իսկ դյուրագրգռությունը գերիշխում է մարդու կենսագործունեության ընթացքում նյարդային արգելակման շրջանում, ագրեսիայի ցուցաբերման հավանականությունը շատ բարձր է» [5; 34]:

Ակնհայտ է, որ ագրեսիվության բարձր աստիճանի տեր մարդկանց համար, որոնք մշտապես շփվում են դրա պաշտանմունքի հետ (Զինված ուժերի առաքելությամբ պայմանավորված), սակայն չունեն այն օրինական արտահայտելու օբյեկտիվ հնարավորություն (իրական պատերազմական իրավիճակի բացակայություն), ավելի հեշտ է այն ուղղել ապակառուցողական (քրեական) հունով, քան մնացածի համար:

Ամենասեղմ ժամանակահատվածում երեկվա անչափահասին ռազմական օրգանիզմի արդյունավետ մաս դարձնելու օբյեկտիվ անհրաժեշտությունն այդ գործընթացի համար յուրահատուկ պայմաններ է թելադրում: Դրանց մի մասը կապված են զինվորական ծառայության և կենցաղի պայմաններում անհատի ապաստանականացման և ապանձնականացման հետ: Դա արտահայտվում է անհատի նախկին նույնականացման կորստով (զինվորական համագետի կրման անցնելը, մազերի պարտադիր կտրվածքը, սովորական միջավայրի փոխարինումը նոր, ոչ անհատական, վարքի և արտաքին տեսքի կատարյալ համանմանության միջավայրով) և անձնական իրավունքների նվազեցմամբ (բացարձակ ենթարկումը օրակարգին, նվազագույն անձնական իրեր): Այս գործընթացը լիովին արդարացված է վերոնշյալ նպատակին հասնելու համար, սակայն այն ուղղակիորեն հանգեցնում է անհատի ապասոցիալականացմանը, ինչն էլ սահմանափակ տարածքում ոչ կանոնադրական դոմինանտ հարաբերությունների ձևավորման հիմք է հանդիսանում և բերում է միջանձնական հարաբերությունների յուրահատուկ մշակույթի առաջացման, որը հաճախ քրեական ենթամշակույթի նշաններ ունի:

Ձորակոչված զինծառայողների ապանձնականացման գործընթացի բացասական ազդեցությունը նրանց բարոյահոգեբանական վիճակի վրա բարդանում է զինվորական միջավայրում կենցաղի յուրահատուկ «զորանոցային» էսթետիկայի առկայությամբ: Մինչև վերջերս այդ գոր-

ծոնը չէր քննարկվում քրեաբանության կողմից՝ որպես հանցագործության հնարավոր որոշիչ: Սակայն վիդեոէկզոգրայի՝ մարդու և շրջակա արտաքին միջավայրի համագործակցության մասին գիտության առաջացման հետ քրեաբանության մեջ զարգացավ ագրեսիվության ֆիզիոլոգիական հիմնավորման տեսությունը [9, 3]: Հիմնվելով այդ տեսության վրա՝ պետք է ընդունել, որ արհեստական ծագման վիդեոդաշտերը կամ այն վիդեոդաշտերը, որոնց վրա հավասարաչափ բաշխված են նույնանման բազմաթիվ տարրեր, բացասաբար են անդրադառնում «հանդիսատեսի» հոգեբանության վրա: Այդպիսի դաշտերը մարդու մոտ ագրեսիվ համախտանիշներ են ձևավորում և գրգռում միայն ցածրագույն բնագղները:

Կարիք չկա նկարագրել «գորանոցային» էսթետիկայի նշանները, դրանք ծանոթ են բոլորին և արտահայտում են զինվորական շարքի տարրերը՝ դրանց դասավորությունը զուգահեռ ուղղահայց է միմյանց, չկա որևէ ավելորդ բան, որը կապ չունենա զինվորական համակարգի անմիջական նշանակության հետ: Ոչ պակաս համակարգված է նաև այդ էսթետիկայի պահպանման գործընթացը: Օրինակ, անկողինների շտկման գործընթացը վերածվել է արարողակարգի և պարունակում է ծածկոցների վրայի գծերի, բարձերի և նույնիսկ մահճակալների պարտադիր հավասարեցում: Սակայն, չնայած այն հանգամանքին, որ հոգեբանական տեսանկյունից նման էսթետիկան բացասաբար է ազդում անհատի հոգեբանության վրա, նշված «զինվորական կարգուկանոնը» արդարացված է Ջինված ուժերի առաքելության առանձնահատկությամբ և դրանով լուծվող խնդիրներով:

Բացի այդ, «գորանոցային էսթետիկան» և «կանոնադրական կարգուկանոնը»՝ որպես ներքին կարգապահության և մաքրության գնահատման ունիվերսալ չափանիշներ, հաճախ ստեղծում են բանակի առաքելության հետ որևէ կապ չունեցող «գորանոցային գեղեցկության» այլանդակ ձևեր (ծածկոցների խավի սանրումը մի ուղղությամբ և այլն): Ավելին, «կանոնադրական կարգուկանոնի» հաստատման գործընթացը որոշ դեպքերում գործածվում է որպես զինծառայողների «դաստիարակության» ճնշողական միջոց, ինչը ևս հանգեցնում է ապանձնականացման և անհատականության ճնշման, քանի որ նման աշխատանքն օբյեկտիվորեն չի կարող դրական դրդապատճառներ առաջացնել և զինվորական ոչ կանոնադրական վարքի համակարգի համար տեղի զինծառայողների պատժի նպատակ է հետապնդում:

Ջինվորական հարաբերությունների ոչ պաշտոնական համակարգի պայմաններում գորանոցային էսթետիկան և զինծառայողների աշխատանքը վերածվում են դեկավարման միջոցի, որն օգտագործվում է այդ համակարգի կողմից իր անդամների նկատմամբ: Ինչպես նշում է Ա. Լևինսոնը՝ «(Ջորանոցային) Մաքրության և գեղեցկության հարկադրումը ծեծի և վիրավորանքների միջոցով հարթ մակերեսների համաչափության գեղեցկության ընկալումը և այլն տեղափոխում է ճնշողական համատեքստ: Առաջին տարում դրանք ճնշումներ են՝ ուղղված քո դեմ (քեզ ճնշում են այդ գեղեցկությամբ): Իսկ երկրորդ տարում, գեղեցիկի սկզբունքները, որոնք մարմնավորվել են կատարյալ մաքրության և կարգուկանոնի մեջ, վերածվում են քո ձեռքում ճնշման և իշխելու գործիքների, մարդկանց կատարյալ տիրապետման միջոցի... Կարելի է ասել, որ մեր առջև ինքնիշխան անհատի յուրահատուկ տարբերակի ձևավորման «ոչ դասական», սակայն հզոր և բազմակողմանի ծավալված մեխանիզմ է, որը ստրկության և ստրկատիրության փորձ ունի, տանջանքներ է կրել և ունակ է տանջելու» [6]:

Այսպիսով, մաքրության հաստատման և տարբեր տնտեսվարական աշխատանքների իրականացման գործընթացը բանակային միջավայրում հաճախ հակասում է կառուցողական տրամաբանությանը և տարրական անհրաժեշտությանը՝ վերածվելով անհեթեթության, կամ ինչպես այն անվանում են բանահյուսության մեջ, «բանակային զառամախտի», որը ոչ կանոնադրական հարաբերությունների համակարգի ձևավորման գործիք է: Այդ իսկ պատճառով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ «կյանքի կազմակերպումը ողջամտության կառուցողական տրամաբանու-





թյամբ բազմակի անգամ նվազեցնում է ոչ կառուցողական ճանապարհով ինքնահաստատվելու պահանջմունքը» [1; 73], պետք է ընդունել, որ այնտեղ, որտեղ ռազմական խնդիրը վերաճվում է կենցաղային հնապաշտության կամ ձևականության, զինվորական ծառայությունը վերաճվում է ոչ կանոնադրական հարաբերությունների ֆոնի ու խթանի և դրվում է երիտասարդ զինծառայողների ուսերին, ովքեր «ծառայում են» և՛ իրենց, և՛ վաղուց ծառայության մեջ գտնվող զինվորների փոխարեն:

Զինվորական կոլեկտիվում կանոնագրքային փոխհարաբերությունների խախտման վերոնշյալ յուրահատուկ պատճառների արդիականացմանը նպաստում է նաև Զինված ուժերում ոչ կանոնադրական հարաբերությունների վիկտիմոլոգիական կանխարգելման միասնական համակարգի բացակայությունը: Տվյալ գործոնը հանգեցնում է նրան, որ համալրման եկած երիտասարդները չեն տիրապետում զինվորական միջավայրում վարքի կանոններին (հակասություններից խուսափելու միջոցներից սկսած՝ մինչև «անհրաժեշտ պաշտպանության» դիրքերի պարզաբանում) և չեն կարողանում օգնություն խնդրել (բժշկական հաստատություն դիմելուց սկսած՝ մինչև հրամանատարությանը դիմելը): Արդյունքում, ոչ կանոնադրական փոխհարաբերությունների հանդիպած երիտասարդ զինվորները հիմնականում դրանց դեմ պայքարի համար անպատրաստ են գտնվում և ստեղծված իրավիճակից դուրս գալու միակ հնարավոր միջոց են համարում կամ համբերատար ենթարկվելը, կամ օգնության համար հարազատներին դիմելը, կամ զորամասի ինքնակամ թողնելը, կամ էլ ինքնասպանությունը:

Զորքերում վիկտիմոլոգիական կանխարգելման բացակայությունը կապված է նաև այն հանգամանքի հետ, որ հաճախ հրամանատարներն իրենք չեն տիրապետում ոլորտի իմացություններին: Այնպիսի հարցերին, ինչպիսիք են օրինակ՝ նրա ենթականերից ո՞վ կարող է հնարավոր զոհ դառնալ, ինչու՞ են հենց այդ մարդու նկատմամբ ճնշում գործադրում նրա ծառայակիցները, զինվորական պաշտոններից ո՞րը, որտե՞ղ և ե՞րբ է առավել վիկտիմացված, ի՞նչ կարող է անել զինվորական հրամանատարությունը իրավիճակը շտկելու համար, հրամանատարը, որպես կանոն, չի կարողանում պատասխանել: Լավագույն դեպքում նա ստիպված է որոշում կայացնել՝ անձնական կամ իր նախկին հրամանատարների փորձից ելնելով, որոնք նույնպես բավարար գիտելիքներ չունեն այդ ոլորտում: Վատագույն դեպքում հրամանատարը նախընտրում է չնկատել տվյալ խնդիրը:

Վերոնշյալ օբյեկտիվ պայմանների կողքին ոչ կանոնադրական հարաբերությունների կանխարգելման վիկտիմոլոգիական խնդիրները կապված են նաև մի շարք սուբյեկտիվ գործոնների հետ:

Որպես զինծառայողի անհատականության հիմնական գծեր, որոնք առավել հաճախ են դառնում վիկտիմիզացման գործոններ, հիմնականում հանդես են գալիս հետևյալ հատկությունները. 1) հոգեկան անհավասարակշռությունը, 2) ֆիզիկական և ինտելեկտուալ զարգացման անբավարարությունը, 3) անփութությունը և փնթիությունը, 4) կաղապարվածությունը, 5) ֆիզիկական թերությունների առկայությունը [10; 186], 6) փոքրոգիությունը, վախկոտությունը և կամազրկությունը, 7) խաբեբայությունը և խորամանկությունը, 8) եսասիրությունը և ազահությունը, 9) զինվորական ծառայության նկատմամբ բացասական վերաբերմունքը, 10) ինտելեկտուալ թերզարգացվածության պատճառով ստացվող զինվորական մասնագիտության հետ կապված տարրական գիտելիքների ընկալման անընդունակությունը, 11) ծուլությունը և ընկերների հաշվին աշխատանքից խուսափելու ձգտումը, 12) ավելի երիտասարդ (ավելի երկար ծառայության մեջ գտնվողների հետ համեմատած) տարիքը (մեկ կամ ավելի տարի տարիքային տարբերությունը բավական է ակնհայտ է զորակոչված զինծառայողների հոգեբանական տարբերակվածության համար), 13) վարքի արտաքին առանձնահատկությունները, որոնք շրջապատի կողմից ընկալվում են որպես շեղում նորմայից, 14) ինքնասպասարկման (կոճակ կարելու կամ գուլպաները լվանալու ան-





ընդունակությունը) տարրական ունակությունների բացակայությունը, 15) թափթփվածությունը և մոռացկոտությունը, 16) սրված ինքնասիրությունը և բարձր ինքնագնահատականը, մեծամտությունը և կոպտությունը, որոնք արտահայտվում են միջանձնային շփման ընթացքում:

Հինձառայողների վերոնշյալ սոցիալ-հոգեբանական և հոգեկենսաբանական հատկությունների կողքին վիկտիմիզացիայի գործընթացին զգալիորեն նպաստում են նաև տվյալ բովանդակության օբյեկտիվ գործոնները. 1) տուժողների շարքերի անհամախմբվածությունը (երիտասարդ զինվորների մեծ մասը ձգտում է ընտելանալ «պապական ավանդույթներին»), 2) սպաների և սերժանտների զգալի մասի անտարբեր վերաբերմունքը միջանձնային փոխհարաբերությունների ոլորտի իրավախախտումներին, 3) իրավախախտումների մասին չբարձրաձայնելու հրամանատարների ցանկությունը, 4) նորակոչիկների ցածր իրավական մշակույթը, 5) սպաների և ենթասպաների կողմից ենթաօրենսդրական ակտերի կամայական մեկնաբանումը, որը բացասաբար է անդրադառնում երիտասարդ զինձառայողների իրավունքների վրա, 6) «խմբային երաշխավորությունը» և զինվորական ստորաբաժանումում ոչ կանոնադրական փոխհարաբերությունների համակարգի առկայությունը, 7) դիմելու դեպքում սպաների կողմից օգնություն ստանալու համոզվածության բացակայությունը հնարավոր զոհերի մոտ, 8) զինձառայողների մոտ այն տեղեկատվության բացակայությունը, թե ում կարելի է դիմել օգնության համար:

### **3. Եզրակացություն:**

Վերոշարադրյալը թույլ է տալիս պնդել, որ զինձառայողների միջև ստորադասության փոխհարաբերությունների բացակայության դեպքում կանոնադրական հարաբերությունների խախտման պատճառների համակարգում յուրահատուկ տեղ են զբաղեցնում առանձնահատուկ որոշիչները, որոնք բխում են զինվորական ծառայության կազմակերպման, ապահովվածության և կրման առանձնահատկություններից:

Դիտարկվող հանցագործությունների դեմ պայքարի կազմակերպման և իրականացման մեջ այս առանձնահատուկ գործոնների համակարգված հաշվառման բացակայությունը հանգեցնում է անհամակարգվածության և, որպես հետևանք, հակաքրեական գործունեության ապարդյունության:

### **Փրականության ցանկ / Bibliography / Список литературы**

1. Банников К.Л. Антропология экстремальных групп. М., 2002. - 399 с.
2. Дисциплина начинается в роте //Красная звезда, 2003 // [http://old.redstar.ru/2003/07/29\\_07/1\\_02.html](http://old.redstar.ru/2003/07/29_07/1_02.html) (Дата доступа: 07.03.2022).
3. Зайвий С. Лепота в черте города // Здоровая газета. 2001. - №16.
4. Клейн Л.С. (Лев Семенов) Этнография лагеря // Этнографическая теория, 1990. N 1. С. 15-18.
5. Крупнов И.В. Социально-психологические аспекты криминальной агрессии в воинском коллективе. Дисс. ...канд. юрид. наук, М., 2003 // <https://www.dissercat.com/content/sotsialno-psikhologicheskie-aspekty-kriminalnoi-agressii-v-voinskom-kollektive> (Дата дост.: 07.03.2022).
6. Левинсон А. Об эстетике насилия: Армия и общество в СССР/России за последние 10 лет. «Неприкосновенный запас», 1999, № 2 (4) // <https://magazines.gorky.media/znamia/1999/7/aleksey-levinson-ob-estetike-nasiliya-armiya-i-obshhestvo-v-sssr-rossii-za-poslednie-10-let-neprikosnovennyj-zapas-1999-2-4.html> (Дата доступа: 07.03.2022).
7. Радов М. Полезная дедовщина //Слово, № 48 (366), 1999 // [http://slovo.odessa.ua/366/5\\_4](http://slovo.odessa.ua/366/5_4) (Дата доступа: 07.03.2022).



8. Сорокин П.А. Человек. Цивилизация. Общество. М., 1992 // <https://sociology.knu.ua/sites/default/files/library/elclosed/sorokin.pdf> (Дата доступа: 07.03.2022).
9. Чечилова С.О. О пользе архитектурных излишеств. 1999 // <https://zdd.1sept.ru/article.php?id=199901502> (Дата доступа: 07.03.2022).
10. Эминов В.Е., Мацкевич И.М. Преступность военнослужащих (исторический, криминологический, социально-правовой анализ). Монография. М., Пенатес-пенаты. 1999. - 260 с.

### Ամփոփագիր

Հոդվածում վերլուծվում են զինվորական ծառայողների միջև կանոնադրական հարաբերությունների խախտման պատճառները, որոնք հիմնված են զինվորական բնույթի վրա: Այս համատեքստում հեղինակը շեշտը դնում է այն փաստի վրա, որ նշված խախտումների հիմքում կազմակերպական-կառավարչական պատճառներն են՝ զինվորական կառավարչական մարմինների գործունեության մեջ թերացումները և բացթողումները:

Վերլուծելով տարբեր հետազոտողների կարծիքներն ու դիրքորոշումները՝ հեղինակը հանգում է այն եզրակացության, որ քննարկվող տարիքի երիտասարդների շրջանում դիտարկվող հանցագործությունների թիվը նվազագույնի հասցնելու համար անհրաժեշտ է նախականիսիչ և կանխիչ միջոցառումներ իրականացնել, որոնք կօգնեն առավել նպատակաուղղված պայքարել ձինված ուժերում նշված երևույթների դեմ:

### Annotation

In the article, the author analyzes the reasons for the violation of the statutory relations between military personnel, which are based on the military character. In this context, the author focuses on the fact that they are based on organizational and managerial reasons-shortcomings and omissions of military authorities. The author finds, that the victimological problems in the relations of military personnel, are connected with both objective and subjective factors such as high self-esteem, arrogance and rudeness, deception, cowardice, lack of self-care skills, mental imbalance, physical և intellectual disability, the desire of commanders not to raise the issue of violations, low legal culture of military personnel. In the article, the author concludes that there are special factors which arise from the peculiarities of the organization of military service, security and maintenance.

The author thinks, that the absence of systematic recording of these specific factors in the organization and implementation of the fight against the observed crimes leads to disorganization and as a result leads to the futility of anti-criminal activities.

Analyzing the views and positions of different authors, the author concludes that in order to minimize the number of crimes observed among young people of the above mentioned age, preventive measures should be taken, which will help to fight against such phenomena more targeted in the Armed Forces.

### Аннотация

В статье анализируются причины нарушения уставных взаимоотношений между военнослужащими, в основе которых лежит военный характер. В данном контексте автор делает акцент на том факте, что в основе указанных нарушений лежат организационно-управленческие причины:



недостатки и упущения военных управленческих органов. Автор считает, что виктимологические проблемы в отношении военнослужащих связаны как с объективными, так и с субъективными факторами, такими как завышенная самооценка, высокомерие и грубость, обман, трусость, отсутствие навыков самообслуживания, психическая неуравновешенность, физическая и умственная отсталость, стремление командиров не ставить вопрос о нарушениях, низкая правовая культура военнослужащих. В статье автор делает вывод о наличии особых факторов, которые вытекают из особенностей организации воинской службы, охраны и содержания.

Автор считает, что отсутствие систематического учета этих специфических факторов в организации и осуществлении борьбы с наблюдаемыми преступлениями приводит к дезорганизации и, как следствие, бесперспективности антикриминальной деятельности.

Анализируя мнения и позиции разных исследователей, автор приходит к выводу, что для минимизации количества преступлений, наблюдаемых среди молодежи рассматриваемого возраста, необходимо проводить профилактические, предупреждающие и предотвращающие преступления мероприятия, которые помогут более целенаправленно бороться с подобными явлениями в Вооруженных силах.

**Բանալի բառեր՝** զինծառայողներ, զինվորական ծառայություն, կանոնադրքային կանոններ, խախտումներ, հանցավորությանը նպաստող պատճառներ ու պայմաններ, կանախություն, նախկանխում:

**Keywords:** servicemen, military service, code rules, violations, causes and conditions contributing to crime, preclusion, prevention.

**Ключевые слова:** военнослужащие, военная служба, уставные правила, нарушения, способствующие преступлению причины и условия, предупреждение и предотвращение преступления.



**ՍԻՄՈՆՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ**

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ, ՀՀ ԱԱԾ տնօրենի տեղակալ, գնդապետ

**SIMONYAN ANDRANIK**

PhD of the Institute of Philosophy, Sociology and Law of of the RA National Academy of Science, Deputy Director of the RA National Security Service, Colonel

**СИМОНЯН АНДРАНИК**

соискатель Института философии, социологии и права НАН РА, заместитель директора Национальной службы безопасности РА, полковник

**ՓՈԽԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ\***

**COORDINATION OF INTERACTION AT THE FRAME OF THE ORGANIZING THE PROCESS OF PREVENTING OF CRIMES\***

**КООРДИНАЦИЯ ВЗАИМОДЕЙСТВИЯ ПРИ ОРГАНИЗАЦИИ ПРЕДУПРЕЖДЕНИЯ ПРЕСТУПЛЕНИЙ\***

**1. Ներածություն:**

Հանցագործությունների կանխարգելման արդյունավետությունը մեծապես կախված է այդ գործընթացում ներգրավված մարմինների փոխգործողության պատշաճ կազմակերպումից, իսկ փոխգործողության ապահովման կարևորագույն նախապայմաններից է դրա համակարգված ու համաձայնեցված իրականացումը:

Սույն աշխատանքը նվիրված է հանցագործությունների կանխարգելման համատեքստում փոխգործողության համակարգվածության դերի ու նշանակության բացահայտմանը:

**2. Հիմնական հետազոտություն:**

Ընդհանուր առմամբ հանցագործություններ կանխարգելման գործառույթը բարդ և բազմաբովանդակ գործունեություն է, որին ներգրավված են տարբեր իրավասու մարմիններ, ինչն էլ ենթադրում է վերջիններիս աշխատանքի համակարգված ու փոխհամաձայնեցված բնույթը: Թեև իրավապահ համակարգի մարմինների փոխգործողության հասկացությանն արդեն անդրադարձել ենք [2; 101-102], այդուհանդերձ հարկ ենք համարում նշել, որ տարբեր հեղինակներ իրավապահ համակարգի մարմինների փոխգործողության բնորոշումը սահմանելիս հատուկ ընդգծում են համակարգվածությունն ու փոխհամաձայնեցվածությունը՝ որպես այդ սահմանման պարտադիր հատկանիշներ:

Այսպես, Ի.Ֆ. Գերասիմովը նախաքննության և հետաքննության մարմինների փոխգործողությունը բնորոշում է որպես օրենքի և քրեական վարույթում ընդհանուր խնդիրների հիմքով,

\* Հոդվածը ներկայացվել է 30.05.2022, գրախոսվել է 16.06.2022, ընդունվել է տպագրության 01.08.2022:

\* The article was presented 30.05.2022, was reviewed 16.06.2022, was accepted to publication 01.08.2022.

\* Статья представлена 30.05.2022, рецензирована 16.06.2022, принята в печать 01.08.2022.



նշված մարմիններին հատուկ աշխատանքի մեթոդների և գործառույթների արդյունավետ օգտագործման հնարավորինս խելամիտ համակցություն՝ պայմանավորված նրանց գործունեության տարբերակված բնույթով, որոնք ուղղված են հանցագործությունների բացահայտմանը, քննությանը և կանխարգելմանը [6; 125]:

Ն.Վ. Ժոգինը և Ֆ. Ն. Ֆատկուլինը փոխգործողության հասկացությունը բնորոշում են հետևյալ կերպ. «Նախաքննության և հետաքննության մարմինների պաշտոնական ներկայացուցիչների համաձայնեցվածության վրա հիմնված գործունեություն՝ ուղղված հանցագործությունների բացահայտմանը և մեղավորների հայտնաբերմանը, որևէ անձի հանցավոր գործունեության խափանմանն ու կանխարգելմանը և պատճառված վնասի փոխհատուցմանը՝ այս մարմինների կողմից հնարավորինս արդյունավետ մեթոդների համատեղ կիրառման եղանակով» [8; 135]:

Ի.Մ. Գուտկինը քննիչի և հետաքննության մարմնի փոխգործողությունը բնորոշում է որպես «օրենքի ուժով ստեղծված, միմյանց ենթակայության տակ չգտնվող մարմինների համատեղ գործունեություն, որի ընթացքում նրանք գործում են համաձայնեցված, նպատակաուղղված՝ համատեղելով իրենց կողմից օգտագործվող մեթոդներն ու միջոցները հանցագործությունների խափանման, բացահայտման և կանխարգելման նպատակով, մեղավորներին քրեական պատասխանատվության ենթարկելով» [7; 70]: Այս բնորոշմանը համակարծիք է նաև Ի.Ի. Մելնիկովը [9; 123]:

Ընդ որում, հանցագործությունների կանխարգելման գործառույթի կազմակերպման տեսանկյունից ուշագրավ է Ս.Մ. Վոլոգինի և Ա.Վ. Սիվաչևի տրված բնորոշումը, ովքեր փոխգործողությունը դիտարկում են որպես կոլեկտիվ գործունեություն՝ այն սահմանելով հետևյալ կերպ. «Հանցագործությունների քննության ընթացքում տարբեր մարմինների փոխգործողությունը նախաքննության, հետաքննության, ներքին գործերի այլ ստորաբաժանումների և նրանց ներկայացուցիչների կոլեկտիվ գործունեություն է, որը ենթադրում է առանձին գործողությունների միավորում մեկ ամբողջության մեջ նպատակներին հասնելու հնարավորինս հարմար ձևով, այսինքն՝ այն գործողությունների ինտեգրացում է» [5; 5]:

Անկախ փոխգործողության այս կամ այն բնորոշումից, ակնհայտ է, որ այն կոլեկտիվ աշխատանքի բնույթ ունի, որի պայմաններում առավել քան կարևորվում է այդ տեսակ գործունեության համակարգումը, դրա ներդաշնակ և փոխհամաձայնեցված իրականացումը, առանց որոնց հնարավոր չէ հասնել առաջադրված նպատակներին, առավել ևս կանխել հանցագործությունները: Ընդ որում, հանցագործությունների կանխարգելման բնագավառում գործառույթներ իրականացնող մարմինների բազմազանությունը պայմանավորում է դրանց գործունեության բազմաշերտ համակարգման կարևորությունը: Անհրաժեշտ է տարբերակված մոտեցում դրսևորել խնդիրների սահմանման և այն մարմինների գործունեության ուղղվածության ու արդյունավետության գնահատականի նկատմամբ, որոնք մտնում են կանխարգելման ընդհանուր և մասնագիտացված ենթահամակարգերի մեջ՝ դրանով իսկ բացառելով տարբեր սուբյեկտների միջև պարտականությունների անհամաչափ բաշխման հնարավորությունը: Չափազանց կարևոր նշանակություն ունի նաև վերջիններիս համակարգված, համաձայնեցված աշխատանքը ինչպես միմյանց հետ, այնպես էլ նույն համակարգի ներսում (օրինակ՝ պետական իշխանության մարմինների և կառավարման մարմինների կամ իրավապահ տարբեր մարմինների ծառայությունների միջև):

Թեև բանասիրական իմաստով «համակարգում» կամ «կոորդինացիա» եզրույթները հիմնականում կիրառվում են որպես հոմանիշներ, այդուհանդերձ հայերենի բացատրական բառարանում դրանք բնորոշվում են հետևյալ կերպ՝ **համակարգումը**՝ որպես կարգավորել, համակարգի վերածել, միավորել, կոորդինացնել [1; 800], իսկ **կոորդինացիան**՝ որպես համադասություն, համաձայնեցում:



Կարծում ենք հանցագործությունների կանխարգելման գործընթացի կազմակերպման համատեքստում եզրութաբանական միասնականության ապահովման տեսանկյունից թերևս նպատակահարմար է երկու եզրույթների կիրառումը՝ որպես համաձայնեցված կարգավորիչ գործունեության տեսակի ընդհանրական բնորոշում:

Հարկ է նշել, որ լայն իմաստով, համակարգումն իրենից ներկայացնում է, նախևառաջ, գործողությունների համաձայնեցվածության և փոխլրացման օբյեկտիվ կարիք, որը մշտապես առկա է հասարակական, պետական և տնտեսական կյանքում և հանդիսանում է հասարակության, դրա իշխանական և կառավարվող համակարգերի հաջող կենսագործունեության անհրաժեշտ պայման: Ցանկացած պայմաններում մեկուսացվածությունը, գերատեսչականությունը (երևույթներ, որոնք, ցավոք, հարատև են և անխուսափելի) հաղթահարել հնարավոր է միայն կոորդինացիայի գործունե համակարգի կազմակերպման որոշակի ուղղություններով, որոշակի գործունեությունների ոլորտներում տարբեր գերատեսչությունների, կառավարման մարմինների ջանքերի միավորման ճանապարհով [12; 4]:

Կոորդինացիան կամ համակարգումը բովանդակային տեսանկյունից համատեղ գործունեության սուբյեկտներից մեկի, կազմակերպչական դերի դրսևորման ժամանակ կարգավորված փոխազդեցությունն է, որի պարագայում առկա է հարաբերությունների որոշակի աստիճանակարգություն:

Այդուհանդերձ, համակարգման իրավական բնույթը, դրա իրավական նշանակությունը և բովանդակությունը տարբեր են և կախված են նրանից, թե որպես իրավահարաբերությունների որ ոլորտում է այն դրսևորվում:

Հանցագործությունների կանխարգելման կազմակերպման արդյունավետության ապահովման տեսանկյունից առավել նպատակահարմար է տարբերակել համակարգման երկու հիմնական մոդել՝

1) ըստ աստիճանակարգության՝ ստորադաս մարմինների աշխատանքի համակարգում կամ կոշտ համակարգում,

2) ինքնուրույն, միմյանցից անկախ, ենթակայական աստիճանակարգության տակ չգտնվող մարմինների աշխատանքների համակարգում կամ մեղմ համակարգում:

Ստորադաս մարմինների կառավարումը համակարգերի գործունեության համակարգում է, դրանց աշխատանքի համաձայնեցվածության ապահովում՝ ընդհանուր խնդիրների լուծման նպատակով: Առաջին դեպքում համակարգումն ունի իշխանական, կարգադրող և ղեկավարող բնույթ և ուղղված է ընդհանուր խնդիրների լուծմանը:

Այլ է իրավիճակն ինքնուրույն, միմյանցից անկախ մարմինների հարաբերությունների ոլորտում, որին բնորոշ է մասնակիցների հավասարությունը, նրանցից յուրաքանչյուրի ինքնուրույնությունը, համաձայնեցված որոշումների կատարման համար այդ մարմինների ղեկավարների պատասխանատվությունը: Ընդ որում, տվյալ մոդելի պարագայում համակարգող մարմինը կատարում է կազմակերպչական, ըստ էության, խորհրդատվական գործառույթներ, հսկողություն է իրականացնում համատեղ որոշումների կատարման նկատմամբ՝ աշխատանքի ընթացքում չփոխարինելով այլ գերատեսչությունների ներկայացուցիչներին [12; 7]: Այդպիսի մարմինների շարքին են դասվում տարբեր միջգերատեսչական հանձնաժողովները, ինչպես օրինակ 2002 թ. հոկտեմբերի 14-ին ՀՀ վարչապետի թիվ 591-Ա որոշմամբ ստեղծված «ՀՀ թրաֆիքինգի դեմ պայքարի հարցերով միջգերատեսչական հանձնաժողովը», որը գործում էր Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության համակարգմամբ և ընդգրկում բոլոր շա-





հագրգիռ գերատեսչությունների ներկայացուցիչներին, ՀՀ Ազգային ժողովի և ՀՀ կառավարության աշխատակազմերի փորձագետներին, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին, այլ համանման մարմիններ:

Հանցագործությունների կանխարգելման սուբյեկտների գործառույթները և իրավասությունը թեև տարբեր են, սակայն նույն են նպատակները, այն է՝ թույլ չտալ, կանխարգելել կամ կանխել հանցագործությունների կատարումը, վերացնել, չեղոքացնել, վնասազերծել դրանց պատճառներն ու պայմանները: Համակարգման խնդիրն է համախմբել ջանքերը, միավորել գործողությունները հանցագործությունների պատճառների ու պայմանների, հանցավոր իրավիճակների վրա բազմակողմանի ազդեցության ապահովման նպատակով: Այն հնարավորություն է տալիս խուսափել կամ նվազեցնել աշխատանքում այնպիսի թերությունները, ինչպիսիք են զուգահեռությունը, կրկնությունը: Վերջինս նաև ստեղծագործական գործընթաց է, որին բնորոշ է նախաձեռնողականությունը, ոչ ստանդարտ որոշումների ընդունումը, իրավախախտումների կանխարգելման ոլորտում առաջացող խնդիրներին պատշաճ արձագանքելու, պրակտիկ գործունեության ընթացքում միասնական և համաձայնեցված մոտեցումներ մշակելու ունակություն:

Հարկ է նշել, որ կրիմինալոգիական գրականության մեջ սովորաբար առանձնացվում են հանցագործությունների կանխարգելման գործառույթի համակարգման հետևյալ տեսակները. *համալիր-փարածքային* (հորիզոնական) և *գերապեսչական-ոլորտային* (ուղղահայաց): Առաջինը կանխարգելիչ միջոցների ամբողջականության համատեղ մշակումն ու համաձայնեցվածությունն է երկրի, քաղաքի և տարածաշրջանի մասշտաբներով («արտաքին» բնույթի համակարգում), օրինակ՝ հանցավորության դեմ պայքարի ուժեղացման հանրապետական, տարածաշրջանային և տեղական ծրագրերի իրականացման ոլորտում գործունեության համակարգումը: Երկրորդն առանձին գերատեսչության խնդիրն է («ներքին» համակարգում), այն է՝ այս կամ այն գերատեսչության համակարգում հանցագործությունների կանխարգելման, պրոֆիլակտիկ միջոցների համաձայնեցումը: Գ.Ա. Ավանեսովի կարծիքով՝ երկրորդ տեսակի համակարգման օրինակ է նաև երկու կամ ավելի գերատեսչությունների ջանքերի համատեղումը, որոնք հանցագործությունների կանխարգելման ոլորտում համաձայնեցված կարգով լուծում են նույնաբովանդակ խնդիրներ, օրինակ՝ իրավապահ մարմինների գործունեության դատախազական համակարգման գործառույթը [3; 470]:

Հանցավորության դեմ պայքարը ենթադրում է ազդեցություն դրա պատճառների և պայմանների վրա, դրա հետ կապված բոլոր երևույթների և գործընթացների վրա [11; 8-10]: Այս տեսանկյունից հանցավորության դեմ պայքարում և դրա կանխարգելման հարցում կարևոր դեր ունի իրավապահ մարմինների աշխատանքի համակարգումը: Դրանց համաձայնեցված, նախաձեռնող գործողությունները պետք է կրեն համակարգված բնույթ, որն անհրաժեշտ է հանցավորության դեմ արդյունավետ պայքարի համար: Ըստ այդմ՝ առավել կարևորվում է դատախազության՝ որպես հանցավորության դեմ պայքարի կորդինացնող մարմնի առաքելությունն ու հսկողական համապատասխան գործառույթները, ինչպես նաև կանխարգելիչ աշխատանքների իրականացման արդյունավետությունը: Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի համաձայն՝ դատախազը պարտավոր է մինչդատական վարույթի ընթացքում միջոցներ ձեռնարկել պարզելու համար հանցանքի կատարմանը նպաստող հանգամանքները և անհրաժեշտության դեպքում համապատասխան պաշտոնատար անձին կամ իրավաբանական անձի ղեկավարին ներկայացնել այդ հանգամանքները վերացնելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու մասին միջնորդագիր, որը ենթակա է պարտադիր քննարկման, որի արդյունքների մասին մեկամսյա ժամկետում գրավոր հաղորդվում է այն ուղարկած մարմնին կամ պաշտոնատար անձին:



